

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաիսաարական գիտական
համալսարան

ՍոնաԿարապետի Հակոբյան

ԻՐԱՂԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱԻՄԱՏԱՇԱՐԱՅՅՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱՊԱՏԿԵՐՈՒՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

(1915թ. իրադարձություններին վերաբերյալ ԱՄՆ պաշտոնական
խոսույթի հիման վրա)

Ատենախոսություն

Ժ 02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությամբ
բանասիրական գիտություններին թեկնածուի գիտական
աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Դ. պրոֆեսոր Ս. Ս.

Ձև լ յ ան

Երևան 2016

ԲՈՎԱՆԴՐԱՌԻ ԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ և ԴՐԱ ԱՐՏԱՊԱՏԿԵՐՄԱՆ	
ՄԻՋՈՑՆԵՐԸ.11	
1.1.«Իրադարձու թյան» հասկացողությունը և եզրափակական տեսողությունն ներկայում..11	
1.2. Բայի մաստի հայեցակերպային կառուցվածքը և իրադարձու թյան ներքին դասակարգումը	27
ԳԼՈՒԽ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԿԱՂԱՊԱՐՈՒՄԸ.....	43
2.1. Խոսույթի վերլուծությունը մտային կադապրների հայեցակետից	43
2.2. Ամերիկյան քաղաքական խոսույթը 1915 թվականի իրադարձու թյան ներքին վերաբերյալ՝ մտային կադապրների հայեցակետից	50
2.3. Ցեղասպանությունն ճանաչման խոսույթային ռազմավարությունն ներքին: ԱՄՆ խուսանավորը խոսույթ.....	64
ԳԼՈՒԽ 3. 1915 Թ.ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԴՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..	70
3.1. Իրադարձու թյան ներքին ներկայացման խորքային կադապրը ամերիկյան քաղաքական խոսույթում	70
3.2. Քննվող իրադարձու թյան ներքին կառուցվածքը: Պատճառական բայերի իրադրային տարրաբաշխումը	94
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	1
02	
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ	
ՑԱՆԿ.....	109
ՀԱՎԵԼՎԱԾ.....	117

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Անցյալում տեղի ունեցած որոշ իրադարձություններ կարևորվում են ինչպես ներկայի, այնպես էլ ապագայի համար, այդ պատճառով էլ արժանի են մշտական ուշադրության: 1915 թվականին Արևմտյան Հայաստանում ծավալված իրադարձությունները անցյալի այն իրողություններից են, որոնք մշտապես գտնվել ու գտնվում են տարբեր հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այս անագորույն իրադարձությունների պատմական փաստն անհերքելի է, իսկ դրանց միջազգային ճանաչումը՝ առաջնային ու արդիական: Ներկայումս 1915 թվականի իրադարձությունների ուսումնասիրությամբ զբաղվում են պատմաբաններ, քաղաքագետներ և հոգեբաններ: Նրանց հետազոտություններում ընդգծվում են իրադարձությունների կարևորությունն ու առաջնայնությունը՝ հետագայում նմանատիպ ողբերգություններից խուսափելու համար: 1915 թվականի իրադարձությունների շուրջ իրականացվել են նաև լեզվաբանական ուսումնասիրություններ, սակայն դրանց նկարագրման և ներկայացման խորքային իմաստաբանական համալիր վերլուծություններ դեռևս չեն կատարվել, թեև դրանք էլ իրենց հերթին կարող էին նպաստել ճանաչման գործընթացին:

Մեր օրերում ցեղասպանության ճանաչման երևույթը քաղաքականացված է և իր հիմքում կրում է պետական քաղաքականության ենթատեքստը: Վերջին ժամանակներում լայն կիրառություն է ստացել քաղաքական խոսույթի հաղորդակցական հայեցակարգը, որն առաջարկվել է դեռևս Նախորդ դարի 50-ական թթ. կեսերին գերմանացի փիլիսոփա և հասարակագետ Յ. Հաբերմասի կողմից, որը «խոսույթ» հասկացությունը կապում էր

հասարակական գործողության տեսության, ինչպես նաև հասարակական ինքնիշխանության խնդրի հետ (J.Habermas 1996:122):

Ամերիկայի Միացյալ Նահանգները, զբաղեցնելով առաջնային դիրք պետության ներքին քաղաքական դիրքորոշումներում, քաղաքական ու պաշտոնական տարբեր փաստաթղթերով և ուղերձներով բազմիցս անդրադարձել ու անդրադառնում է ցեղասպանության իրադարձության ներքին: 1915 թվականի իրադարձության ներքին վերաբերյալ ամերիկյան քաղաքական խոսույթում ներկայացված հայ տարարության ներքին տողատակերում թաքնված իմաստների գիտական բացահայտումը և դրանց իմաստաբանական ուսումնասիրությանը առաջին անգամ ներկայացվում է իրադարձության ներքին իմաստաբանության լույսի ներքո: Իրադարձության ներքին իմաստաբանության ուսումնասիրությանը թույլ է տալիս բացահայտել այս կամ այն խոսույթի՝ տվյալ իրավիճակին համապատասխանող իմաստը, և իրադարձության ներքինացվում են ԱՄՆ քաղաքական խոսույթի մեջ:

Վերջին տասնամյակներում լեզվաբանության մեջ ձևավորված ճանաչողական հեղաշրջումը հիմք դրեց ճանաչողական գիտության ձևավորմանն ու զարգացմանը: Ճանաչողական լեզվաբանության ուսումնասիրության ներքին համատեքստում լեզվաբանության մի շարք հիմնախնդիրներ վերափոխադարձվեցին, իմաստաբանության և շարահյուսության բազմիմաստության խնդիրը ու շատ այլ հարցեր իրենց պատասխանը գտան հենց ճանաչողական լեզվաբանության ակունքներում (B. Демьянков 2001:193): Ճանաչողական լեզվաբանության մեջ ձևավորված ճանաչողական, ճանաչողական-հաղորդակցական, ճանաչողական-խոսույթային մոտեցումների շարքում այսօր արդեն մեծ արդիականություն են վայելում տարաբնույթ հետազոտության ներկայացումները: Ճանաչողական ժամանակակից տեսության ներքին շարքին է դասվում նաև սույն ատենախոսության մեջ քննվող «իրադարձության» լեզվաբանական ուսումնասիրության օբյեկտ լինելու փաստը:

Քանի որ ճանաչողական լեզվաբանությունը լեզուն մեկնաբանում է հասկացությաների, մտային և հասկացական կառույցների, կադապարների միջոցով, ուստի մեր ատենախոսության շրջանակներում համագոյակցում են հաղորդակցական-խոսությանային, իրադրային և հասկացութային կառույցները: Գանաչողական տեսությունների կողքին այսօր շատ ենք հանդիպում «իրադարձությունների իմաստաբանություն» (Event Semantics) տեսությանը, որում լեզվական միավորը մեկնաբանվում է կառուցվածքային նկարագրությունների միջոցով, առաջ են քաշվում *արգումենտային* և *իրադրային կառույցներ* հասկացությունները, ինչպես նաև բառային հասկացութային կառույցը (Lexical conceptual structure): Այս կառույցը համարվում է նկարագրության իմաստաբանական մակարդակ, որը ներկայացնում է պրեդիկատի իմաստի որոշակի մասեր՝ տարրաբաշխման միջոցով և կապվում է պրեդիկատային և արգումենտային կառույցներին (H. Rappaport & B. Levin 1998, J. Grimshaw 1990, R. Jackendoff 1990): Տարրաբաշխման գաղափարը առաջարկել է Ջ. Գրիմշոուն, որը լավագույնս ներկայացնում է արգումենտները որպես անանուն փոփոխականներ՝ կադապարված իրենց թեմատիկ դերերով (J. Grimshaw 1990:10): Գ. Բրուտյանն իր հերթին նշում է, որ պրեդիկատասելով նկատի է առնվում, թե ինչ է ասվում սուբյեկտի մասին տվյալ ասությանում (Գ. Բրուտյան 1987:528):

Վերոնշյալ կառույցների շրջանակներում իրականացվող վերլուծությունները դեռևս նորության են հայ լեզվաբանության համար: Առաջին անգամ «իրադարձությունների իմաստաբանությունը» ուսումնասիրվել ու մեկնաբանվել է մեր հետազոտության շրջանակներում՝ հիմք ընդունելով տարբեր լեզվաբանների՝ սույն տեսությանն առնչվող տեսակետները:

Ժամանակը, պատճառականությունը, տարածությունը, ծավալն ու փոփոխությունը հիմնականում հանդես են եկել ֆիզիկայի բնագավառում՝ ֆիզիկական հետազոտությունների շրջանակներում: Այն, որ սույն հասկացությունները կարող են

արտապատկերվել մարդկային լեզվի քերականության մեջ, ավելի կոնկրետ՝ իմաստաշարահյուսական նկարագրություններում, հանդիպում ենք դեռևս Վ. Յոլմբուլտի և Է. Սեպիրի ուսումնասիրություններում: Մեր աշխատության մեջ, սակայն, փորձել ենք առավել ճշգրիտ և նոր մոտեցում դրսևորել սույն հարցին՝ կատարելով վերը նշված իրադարձությունների խորքային վերլուծություն:

Մինչև 20-րդ դարը քերականության մեջ *հայեցակերպ* (aspect) հասկացությունը առանձին չէր կիրառվում, այն պարզապես հանդես էր գալիս *ժամանակ* հասկացության հետ: Սակայն իրադրային քերականության զարգացմամբ առաջ են քաշվում բայիմաստի հայեցակերպային դասակարգումները, որոնք մատնանշում են, թե ինչպիսի հաբաբերությունն ունի գործողությունը ներկա, անցյալ և ապագա ժամանակների նկատմամբ (Z. Vendler 1957, J. Verkuyl 1993, J. Pustejovsky 1991): Ուսումնասիրելով իրադարձությունների կառուցվածքը և առանձնահատկությունները՝ հարկ ենք համարել նաև որոշակիորեն հետազոտել հայեցակերպի կարգը, ըստ որի ներկայացվում են իրադարձությունների դասակարգումները:

Բառային իմաստաբանությունը (Lexical semantics) և տրամաբանական իմաստաբանությունը (logical semantics) տարբերակերպ են մոտենում իմաստաբանական հայեցակետին: Բառային իմաստաբանությունը կենտրոնանում է անհատական բառիմաստների վրա, իսկ տրամաբանականը՝ պրոպոզիցիոնալ մեկնաբանումների (վերաբերմունք, դատողություն): Այն վերաբերում է ճշմարտացիության պայմաններին, արգումենտային կառույցներին, թեմատիկ դերերին, խոսույթային վերլուծություններին: Քանի որ իրադարձություններն ու, այսպես կոչված, իրադրային կառույցներն ի հայտ են եկել որպես նկարագրական միջոցներ, իմաստաբանական այս երկու ուղղություններն ավելի են մոտեցել միմյանց: Ավելին, շարահյուսաբանները (Ջ.Մքուրի, Է.Բախ), ուսումնասիրելով մարդկային լեզվի նախա-

դասույթ ու ներքին ընդհանուր կառուցվածքը, հայտնաբերել են մի երևույթ, որում իրադարձությունների իմաստաբանությունը կարող է փոխադարձաբար ազդել շարահյուսական կառույցների վրա: Այսօր լեզվաբանական տեսություններում փորձ է արվում իրադարձությունները դիտարկել որպես քերականական ուսումնասիրության օբյեկտներ, որոնք թույլ են տալիս մեկնաբանել ասույթի խորքային իմաստը և նշանակությունը:

Սույն ատենախոսության մեջ մանրակրկիտ ձևով ուսումնասիրվում են իրադարձության գաղափարը, վերջինիս խորքային իմաստաբանական ու հաղորդակցական էությունը և արտապատկերումը քաղաքական խոսույթում՝ մասնավորապես անդրադառնալով ԱՄՆ պաշտոնական հայտարարություններին՝ Չայնոցեզականության ճանաչման համատեքստում, որոնք կարող ենք բնութագրել և առանձնացնել որպես քաղաքական խոսույթի խուսանվող տեսակ:

Քաղաքական խոսույթի վերլուծության ժամանակ կարևորվում են նաև ճանաչողական մտային գործընթացները, որոնք հանդես են գալիս որպես հասարակական փորձի ընդհանրացված կաղապարներ: Քաղաքական խոսույթի ուսումնասիրության ոլորտում այսօր մեծ արդիականություն ունի ճանաչողական մոտեցումը, որը հնարավորություն է ընձեռում նկարագրելու խոսույթի միավորներն ու կառուցվածքը՝ նկատի առնելով քաղաքական հաղորդակցության մասնակիցների մտածելակերպի կառուցվածքի կաղապարումը (T.Dijk 1997:190): Հաշվի առնելով քաղաքական խոսույթի մի շարք առանձնահատկություններ՝ պետք է նշենք, որ լեզվական գործոններով բավարարվել չի կարելի, այլ անխուսափելիորեն պետք է հաշվի առնվեն խոսույթի հիմք հանդիսացող մտային գործընթացները՝ կաղապարները: Հենց այս մտային ճանաչողական կաղապարների հիման վրա է, որ երևան են գալիս քաղաքական խոսույթի հիմնական բնութագրիչները: Մտային կաղապարների տեսանկյունից հիմնականում կենտրոնացել ենք

համատեքստային ու իրադրային կադապարների վրա՝ ըստ այդմ ներկայացնելով խոսքային իրադարձությունը՝ համատեքստը և բարդ իրադարձությունը, որը կազմված է արտաքին և ներքին իրադարձություններից: Իրադարձությունների կադապարման համար հիմք են հանդիսացել քաղաքական խոսույթի բնագավառում մեծ արդիականություն ունեցող Տ. Դեյքի հոդվածները քաղաքական խոսույթի վերլուծության, խոսույթի և ճանաչողականության, ճանաչողական մտային կադապարների վերաբերյալ (T.Dijk 1997, 1999, 2001, 2002):

Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել ԱՄՆ քաղաքական խոսույթը և ներկայացնել Հայոց ցեղասպանության վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների, որոշումների, բանաձևերի և ամենամյա ապրիլ քսանչորսյան նախագահական ուղերձների խոսույթային կադապարումը, այնուհետև վերհանել դրանցում ներկայացված համատեքստային և իրադրային կադապարները, որոնք ներկայացնում են իրադարձությունները: Դրանց հիման վրա էլ փորձ է արվում իմաստաշարահյուսորեն վերլուծել ու իրադարձությունները խորքային կառույցի բացահայտման շնորհիվ՝ նշանակելով նաև այն բառային միավորները, որոնք արտահայտում են 1915 թվականի իրադարձությունները:

Ցեղասպանության 100-րդ տարելիցով պայմանավորված՝ ցեղասպանագիտության համատեքստում իրականացվող ամենատարբեր հետազոտությունները մեծ կարևորություն ունեն տվյալ գիտության բաղվող գիտնականների համար մասնավորապես վերջինիս ճանաչման, ժխտման ու խուսանավման տեսանկյունից: Այս առումով լեզվական միջոցները, կիրառած բառային միավորները, լեզվական արտահայտությունների տակ թաքնված խորքային իմաստներն ու դրանց վերլուծությունը հենց այն բանալիներն են, որոնք դուռ են բացում իրադարձությունների ընկալման ու մեկնաբանման համար:

Խուսանավող խոսույթի վերլուծությունը որպես այդպիսին ևս նորույթ է խոսույթի վերլուծության շրջանակներում: Հայ

լեզվաբանության մեջ առաջին անգամ տվյալ խոսույթը ուսումնասիրել է Ս. Չոլյանը, որը խուսանավող խոսույթի ցայտուն օրինակ է համարում ամերիկյան պաշտոնական հայտարարությունները: Նա նշում է, որ իրադարձությունը նկարագրվում է անուղղակի ու երկիմաստ լեզվական միջոցներով՝ խուսափելով հետագա քայլերը ենթադրող ձևակերպումներից և գնահատականներից: Իրադարձության նկարագրման փոխարեն առկա են ընդհանուր գնահատականներ կամ հուզական արտահայտություններ: Նման խոսույթում ցանկության դեպքում բոլոր հասցեատերերը կարող են գտնել իրենց համար շահեկան կետեր. այն չի ժխտում ցեղասպանությունը, բայց և չի ել հաստատում (Ս. Չոլյան 2015:7):

Քաղաքական խոսույթում խուսանավող ռազմավարությունները կիրառվում են ճարտասանական և դիալեկտիկական նպատակներին հասնելու համար: Խուսանավող ռազմավարություններին հպանցիկ ու տեսական անդրադարձ են կատարել դանիացի լեզվաբաններ Ֆ. վան Էմերենը ու Պ. Յոլթլոստերը՝ ռազմավարական խուսանավումը նկարագրելով որպես կողմնակիցների այն հնարավորությունների օգտագործման փորձ, որոնք հասանելի են դիալեկտիկական իրավիճակի համար, և որոնք խոսույթն ուղղորդում են ճարտասանորեն՝ իրենց ձեռնտու միջոցներով (F. van Emeren & P. Houtlosser 2001:151): Մեկ այլ հետազոտող Դ. Չարևսկին նշում է, որ ռազմավարական խուսանավումը շատ բնորոշ է հենց քաղաքական բանավեճին, որտեղ խոսողների հիմնական նպատակն է հասնել կառուցողական արդյունքի՝ համոզելով լսողներին: Դ. Չարևսկին առաջ է քաշում ռազմավարական խուսանավման մի շարք միջոցներ՝ հենց քաղաքական խոսույթի դիտակետից (D. Zarefsky 2006:400):

Մեր աշխատության շրջանակներում խուսանավող խոսույթը վերլուծվում է իմաստաբանական իրադարձությունների տեսանկյունից՝ իմաստաշարահյուսական արտապատկերմամբ: Ուսումնասիրվում է այն խնդիրը, թե ինչպես է լեզուն

համատեղում շարահյուսական և իմաստային կառույցները
 նկարագրության ընթացքում, և թե ինչպես է լեզուն
 համակարգում քերականական տարբեր կարգերի բառային ձևերը,
 որպեսզի ներկայացնի արտաքին ու ներքին իրա-
 դարձությունների միջև եղած հարաբերությունները: Արտաքին
 ու ներքին իրադարձությունների սահմանազատումը հարում է
 աշխատանքում քննվող հայեցակերպային դասերին (Z. Vendler 1967):
 Արտաքին իրադարձությունը կապվում է պատճառականության և
 ներգործության հետ, իսկ ներքինը՝ իրավիճակի փոփոխության և
 նպատակաուղղվածության: Արտաքին իրադարձությունը
 ներկայանում է որպես ներգործող (ագենտիվ) ու պատճառական
 իրադարձություն: Նշենք, որ փիլիսոփայական գրականության
 մեջ պատճառականությունը վաղուց ներկայացվել է որպես
 հարաբերություն երկու իրադարձությունների միջև (G. Ryle 1971;
 D. Davidson 1967): Հենց այս փիլիսոփայական տեսություններն էլ
 հետագայում հիմք են հանդիսացել իրադարձության՝ որպես
 լեզվաբանական ուսումնասիրության օբյեկտի քննության
 համար: Առաջին նման հետազոտությունը ներկայացվել է սերող
 իմաստաբանության ավանդույթի շրջանակներում: Ջ. Մքքոլին
 առաջիններից էր, որոնք բայիմաստը ներկայացրին
 կառուցվածքային հայեցակետից՝ կիրառելով պատճա-
 ռականության և իրավիճակի փոփոխության տարրեր (G. McCawley
 1968): Նա կիրառության մեջ մտցրեց *կառուցվածքային ծառ*
 հասկացությունը՝ պատճառականության և իրավիճակի
 փոփոխության իմաստաբանական և շարահյուսական տարրերը
 ներկայացնելու համար: Ծարունակելով Ջ. Մքոլիի՝ բայիմաստի
 տարրաբաշխման և նկարագրման վերաբերյալ
 աշխատությունները՝ հետագայում մի շարք հետազոտողներ
 բնական լեզվի իմաստաբանության շրջանակներում
 կիրառության մեջ դրեցին բայիմաստի տարրաբաշխման գաղափարը:
 Այդ հետազոտողների շարքին են դասվում Ջ. Քարթերը, Դ.
 Դաունթին, Ռ. Ջեքսոնը, Բ. Լևինը և Հ. Ռաֆաիլոթը, որոնց
 տեսակետները և մեկնաբանությունները քննվում են սույն

աջ խաստույթյան շրջանակներում (J. Carter 1967; D. Dowty 1979; R. Jackendoff 1983; B. Levin and H. Rappaport 1998): Այս և նմանատիպ ուսումնասիրությունները հետազայում զարգացրին այն գաղափարը, որ պատճառական (արտաքին) արգումենտի և ներքին արգումենտի հարաբերությունը ներկայացվում է CAUSE-պատճառ հանդիսանալ և BECOME-դառնալ պրեդիկատների միջոցով (R. Jackendoff 1990; T. Parsons 1990): Նկատի առնելով այն փաստը, որ սույն տեսությունը, որում փոխազդում են նաև ձևական (տրամաբանական) իմաստաբանության որոշ տարրեր, նորույթ է հայ լեզվաբանության մեջ, ուստի մեր ատենախոսության շրջանակներում կիրառում ենք տրամաբանական մի շարք հասկացություններ և ձևական իմաստաբանության եզրույթներ, որոնք նպատակահարմար ենք գտել չթարգմանել՝ դիմելով պրեդիկատների տրամաբանությանը և հիմք ընդունելով այն փաստը, որ վերջիններս կիրառվում են նաև հայ լեզվաբանական մի շարք աջ խաստույթյուններում (պրեդիկատ, արգումենտ, ագենտ, պացիենտ):

Այսպիսով, հայ լեզվաբանական հետազոտությունների շարքին կարող ենք դասել նաև մեր ուսումնասիրությունը: Լեզվաբանական մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ իմաստաբանության և շարահյուսության փոխհարաբերության հարցը, ճանաչողական-հաղորդակցական, ճանաչողական-խոսույթային մոտեցումների կիրառումը լեզվաբանական վերլուծությունների շրջանակներում դառնում են ինքնաբավ և առաջնային: Այս ամենը նկատի առնելով՝ ատենախոսության կառուցվածքը պայմանավորել ենք մեր իսկ ուսումնասիրության նպատակներով ու մեր առաջ դրված խնդիրներով:

ԳԼՈՒԽ1. ԻՐԱԴԱՐՁՈՒ ԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱՐՏԱՊԱՏԿԵՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1.1. «Իրադարձության» հասկացությունը լեզվաբանական տեսություններում

Աշխարհում և մեր շուրջը տեղի ունեցող գործընթացները շարունակական ու միևնույն ժամանակ անկանոն են: Քառասային իրավիճակներից խուսափելու և աշխարհը իմաստավորելու համար մարդկանց մտածողությունը հենվում է իրադարձությունների համակարգային նկարագրության վրա, որը պարունակում է ժամանակային, տարածական և պատճառային տեղեկատվություն և աշխարհում տեղի ունեցող երևույթների մասին: Իրադրային ցանկացած նկարագրություն անխուսափելիորեն կարևոր և հենքային է ֆիզիկական աշխարհի մեր ըմբռնման, մտապահման և պատկերացման համար: Պատճառահետևանքային կապերի ու ժամանակագրության բացահայտմամբ կարող ենք բացատրել որոշակի իրադարձությունների տեղի ունենալը՝ միևնույն ժամանակ կանխատեսելով և ղեկավարելով ապագա իրադարձությունների գոյությունը: Այսօր լեզվաբանական տեսություններում իրադարձությունները դիտվում են որպես քերականական օբյեկտներ: Ենթադրվում է, որ իրադարձությունները կազմված են սկզբնակետից, տևողությունից և ավարտից:

Իրադարձություններն ամենաընդհանուր իմաստով ներկայանում են որպես իրերի ու դեպքերի հաջորդականություն, որ տեղի է ունեցել և ունենում իրական աշխարհում: Իրադարձությունները հասարակական կամ անձնական կյանքում տեղի ունեցած կարևոր եղելություններ ու պատմական իրողություններ են: Ըստ Ստենֆորդ համալսարանի կայքում զետեղված առցանց *փիլիսոփայական հանրագիտարանի*՝ իրադարձությունները իրական կյանքում տեղի ունեցող երևույթներն են՝ հարսանիք, փոթորիկ, պայթյուն, կայծակ, երկրաշարժ կամ պարզապես ժպիտ, քայլ ու երգ: Եթե մտածում ենք ժամանակային, պատճառային ու նպատակային երևույթների մասին, ապա անհրաժեշտություն է առաջանում դրանք վերլուծելու և ուսումնասիրելու հենց իրադարձությունների հայեցակետից: Լեզվաբանական այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են բայի

Ժամանակը, կերպը, վերագրվում են իրադարձություններին և դրանց կառուցվածքին (Stanford Encyclopedia of Philosophy):

Փաստորեն իրադարձության՝ որպես լեզվական միավորի հանդես գալն իսկզբանե ունեցել է փիլիսոփայական հիմք: Դեռևս Արիստոտելն իր հայտնի «Մետաֆիզիկա» աշխատության մեջ խոսում էր իրադարձությունների տիպաբանության մասին՝ հիմնվելով դրանց ներքին ժամանակային կառուցվածքի վրա: Արիստոտելն առանձնացնում էր իրականություն (energeia) և գործողություն (kinesis) հասկացությունները: Այս բաժանումը թերևս վերջնականապես ունեցող և չունեցող իրադարձությունների սահմանազատումն է: *Սովորել, քայլել, կառուցել* գործողությունները չունեն վերջնակետ ու վերջնականապես, այսինքն՝ ոչ ամբողջական գործողություններ են, իսկ իրականությունն արտահայտում է «իրերի գոյությունը»: Ի հակադրություն գործողությունների՝ իրականությունն արտահայտող իրադարձությունները մշտապես գոյություն ունեցող էություններ են. «Մենք *տեսնում, հասկանում, մտածում ենք*. սրանք, սակայն, չեն նույնանում *սովորում ենք, քայլում ենք, կառուցում ենք* գործողությունների հետ» (Aristotle, Met, 1048b18:37):

20-րդ դարի փիլիսոփայական գրականության մեջ արիստոտելյան այս տեսակետների շարունակությանը հանդիպում ենք Ջ. Ռայլի, Չ. Վենդլերի և Է. Քենի աշխատություններում: Ջ. Ռայլը գտնում է, որ ոչ բոլոր նախադասություններն են արտահայտում գործողություն. «Ասել, որ մարդը գիտի ինչ-որ բան կամ ձգտում է անել ինչ-որ բան, չի նշանակում, որ նա որոշակի պահի այդ ինչ-որ բանն անելու գործընթացի մեջ է, այլ նա կարող է անել որոշակի բաներ, երբ ցանկություն ունի կամ հակված է այդ բաներն անելու» (G. Ryle 2002:327):

Ամերիկացի լեզվափիլիսոփա Դ. Դեյվիդսոնն առաջիններից էր, որոնք խոսեցին իրադարձությունների՝ որպես լեզվական երևույթների մասին: Դ.Դեյվիդսոնի հիմնական հարցադրումը

ներառում էր այն գաղափարը, թե ինչպես են բաղադրվում գործողությունն ցույց տվող նախադասությունների ճշմարտացիության պայմանները, և քանի որ նաիր հարցադրումը կապում էր ճշմարտացիության պայմանների հետ, հետևաբար չէր կարող գործ չունենալ նախադասության տրամաբանական կողմի հետ: Ելնելով այս կետից՝ Դ. Դեյվիդսոնն իր աշխատանքը ներկայացնում է «Գործողությունն ցույց տվող նախադասությունների տրամաբանական ձևը» վերնագրով, որտեղ բացահայտում է՝ ինչ ասել է տրամաբանական ձև, և ներկայացնում մի շարք պարզաբանումներ: Դ. Դեյվիդսոնն իր հոդվածում իրադարձությունները մեկնաբանում է որպես լեզվական միավորներ և լեզվաբանությունը ներկայացնում տրամաբանորեն՝ ներդնելով տրամաբանական մի ձև, որը լայնորեն կիրառվում է լեզվաբանության մեջ: Նա առաջ է քաշում գործողությունն ցույց տվող նախադասությունների տրամաբանական նկարագրություն, որը համապատասխանում է պրեդիկատների ավանդական տրամաբանական նկարագրությանը, որում բայը մեկնաբանվում է որպես բազմատեղանի պրեդիկատ (D. Davidson 1967:102): Գ Բրուտյանն իր պրեդիկատների տրամաբանության մեջ պրեդիկատ ասելով հասկանում է այն, ինչ ասվում է սուբյեկտի մասին տվյալ ասույթում: Նա ևս առաջ է քաշում մեկտեղանի, երկտեղանի, երեքտեղանի պրեդիկատ հասկացությունները՝ կախված սուբյեկտների քանակից (Գ. Բրուտյան 1987:528): Դ. Դեյվիդսոնն իր հերթին բայական պրեդիկատին ավելացնում է լրացուցիչ արգումենտ, որի հետևանքով գործողությունն ցույց տվող բայը մեկնաբանվում է ոչ թե որպես մեկտեղանի, այլ երկտեղանի, երեքտեղանի պրեդիկատ, իսկ նոր լրացուցիչ արգումենտը (անկախ փոփոխական) *e* (event «իրադարձություն») փոփոխական մեծությունն է (D. Davidson 1967:100-105): Նա իր հիմնական դրույթները ներկայացնում է հետևյալ նախադասության հիման վրա. *Strange goings on! Jones did it slowly, deliberately, in the bathroom, with a knife, at midnight. What he did was butter a piece of toast. (Տարօրինակ բաներ են կատարվում: Ջոնն այդ բանն անում*

Էր դանդաղ, մտածված, լոգապես նյալ ու մ, դանակով, կեսգիշերին) (D. Davidson 1967:90):

Սույն նախադասության տրամաբանական նկարագրության մեջ նկատի է առնվում, որ կա «մի x գործողություն, այդ x գործողությունը Ջոնսը կատարում է դանդաղ, մտածված, լոգապես ու մ այլն»: Ահա այստեղ է, որ հարց է առաջանում կիրառել որևէ եզրույթ տրամաբանական x-ի համար: Դ. Դեյվիդսոնը նշում է, որ գործողություն ցույց տվող բայերը պարունակում են հավելյալ թաքնված իրադրային արգումենտ, և այս հայեցակետից անցողական բայը ներկայացնում է եռատեղ հարաբերություն, այն է՝ ենթակա, ուղիղ խնդիր և իրադրային արգումենտ: Փաստորեն Դ. Դեյվիդսոնը բայական պրեդիկատին ավելացնում է լրացուցիչ արգումենտ կամ փոփոխական, որը ներկայացնում է e (իրադարձություն) փոփոխական մեծությամբ: Հիմնական իրադարձությունը ներկայանում է հետևյալ կերպ.

[1.1.1] $\exists e$ [BUTTER (Jones, the toast, e)] (D. Davidson 1967:95)

$\exists$ (գոյություն քվանտոր) այսինքն՝ «գոյություն ունի այնպիսի իրադարձություն»

(Գ. Բրուտյան 1987:250)

Դեյվիդսոնյան այս տրամաբանությունը ճանապարհ է հարթում նաև մակբայական լրացումների խորքային վերլուծության համար: Եթե բայերը ներկայացնում են իրադրային թաքնված արգումենտ, ապա մակբայական լրացումները կարող են վերլուծվել որպես առաջին կարգի (first order) պրեդիկատներ, որոնք հավելյալ տեղեկատվություն են տալիս տվյալ իրադարձության մասին: Սրանից ելնելով՝ նա տալիս է հետևյալ տրամաբանական նկարագրությունը.

[1.1.2] Jones buttered the toast in the bathroom with the knife at midnight.

$\exists e$ [BUTTER (jones, the toast, e) & IN (e, the bathroom) & INSTR (e, the knife) & AT (e, midnight)]

Կարող ենք ասել, որ իրադարձությունները *իրեր* են, ինչպես առարկաները. դրանց կարելի է հաշվել, դրանց կարող են տեղայնացվել տարածության և ժամանակի մեջ: Այստեղից էլ

կարող ենք եզրակացնել, որ իրադարձության համակարգվածությունը և իրադարձության կառուցվածքը բնութագրվում են տվյալ նախադասության մեջ տեղակայված արգումենտներով: Իմաստաբանական հայեցակետից արգումենտը ներկայացնում է իրադարձության մասնակիցներին՝ նշված կոնկրետ պրեդիկատով, և հանդես է գալիս որպես իրադրային կառույցի նկարագրման տեսակ: Շարահյուսական հայեցակետից արգումենտները ներկայացնում են այն նվազագույն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է շարահյուսական միավորները բնութագրելու համար, և հանդես են գալիս որպես շարահյուսական ենթակարգայնացման տեսակ: Այստեղից գալիս ենք այն մտքին, որ արգումենտային կառույցը դիտվում է որպես մի կապիմաստաբանական և շարահյուսական պրեդիկատների միջև: Վերջինիս հիմնական գործառույթը բառային իմաստաբանությունն ու շարահյուսական կառույցները հարաբերակցելն է.

[1.1.3]

ԲԱՌԱՅԻՆ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

արգումենտային կառույց

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ

Այս տեսակետից էլ պետք է հիշատակել մասնագետների այն դրույթը, որ արգումենտային կառույցի միջոցով տարբերակվում են մի շարք արգումենտների մասին եղած տեղեկատվությունը, շարահյուսական տեսակը և նրանց աստիճանա-կարգային կազմավորվածությունը, որն էլ իր հերթին անհրաժեշտ է՝ այն շարահյուսական կառույցին հարաբերակցելու համար (H. Rappaport and B. Levin 1998): Արգումենտների քանակի, պարտադիր կարգավիճակի և աստիճանակարգային կազմավորվածության մասին հիմնական տեղեկատվությունը կախված է հենց իմաստաբանությունից: Յ. Ռափափորթի և Բ. Լևինի՝ բայիմաստների վերաբերյալ աշխատությունից վերցրած օրինակը ենթադրում է, որ արգումենտների քանակը և պարտադիր կարգավիճակը կարող է բացահայտվել միայն բառային իմաստաբանության միջոցով.

[1.1.4]

Lexical Semantics : a-structure; syntax;	activity sweep<ext(int)> NP1 sweep (NP2)	Accomplishment Sweep<ext int {}> NP1 sweep NP2 AP/PP
--	--	---

(H. Rappaport and B. Levin 1998:98)

- a. Mary swept (the path).
- b. Mary swept *(the leaves) from the path.
- c. Mary swept *(the path) clean.

Այս օրինակում *ավելել* (*sweep*) գործընթացը ներկայացնում է առանձին ենթաիրադարձություն, որում ներկա են երկու մասնակիցներ՝ գործողություն կատարողը և մակերևույթը, որոնք կարող են արտահայտված չլինել, եթե նկատի են առնված նախադասության տեսակից:

[1.1.5]

Event structure for (??a) [x act on y]
(sweeping manner)

Առաջին երկու օրինակները ունեն առկա իրադրային կառուցվածք և հասանելի են մի շարք բայերի մակերեսային շփմանը, որոնց պատկանում է *ավելել* (*sweep*) բայը: Հաջորդ օրինակում իրադրային կառույցը ունենում է հետևյալ տեսքը.


[1.1.6] Event structure for (??b,c) [[x act on y] cause [[y be become at location/state] (sweeping manner)

Դ. Դեյվիդսոնի ներկայացրած թաքնված արգումենտի գոյությունը հարուստ միջոցներ է առաջարկում բայիմաստի վերլուծության համար: Այն հնարավորություն է ընձեռնում կադապրելու բայիմաստները որպես ստորոգելիական կառույցներ, որոնք էլ հարուստ են իրադրային կառույցներով: Հատկանշական է, որ վաթսուհականների վերջում լեզվաբանության դաշտ ներմուծված դեյվիդսոնյան իրադարձությունների իմաստաբանությունը լեզվաբանական տեսությունների շրջանակներում իրականացրել է շատ կարևոր «առաքելություն»: Ամերիկացի լեզվափիլիսոփա Դ. Դեյվիդսոնի

տեսություն Կենտրոնական գաղափարը այն էր, որ իրադարձությունները տարածաժամանակային երևույթներ են, այսինքն՝ կոնկրետ պարագաներ՝ ժամանակի և տարածության տեղայնացմամբ: Այս դրույթը թերևս ունեցավ իր կարևորությունը բնական լեզվի արտահայտությունների համակցական և հետևանքային հատկանիշների մեկնաբանության գործում: Հիրավի, սույն տեսության նշանակալից զարգացումները պայմանավորված են դեյվիդսոնյան տեսության հարացույցով, քանի որ հենց վերջինովս է պայմանավորված բայի իմաստաբանության տեսական նկարագրությունը՝ ներառյալ ժամանակն ու կերպը, ինչպես նաև մակբայական լրացումների վերլուծությունը: Բազմաթիվ մենագրություններ և հետազոտական ծրագրեր են նվիրված դեյվիդսոնյան այս մոտեցմանը: Մեր կարծիքով, սակայն, սույն տեսության արժևորման շրջանակներում կարևորվում է, այսպես կոչված, «նեո (նոր) դեյվիդսոնյան շրջադարձը»՝ ներմուծված Ջ. Հիգինբոթամի և Թ. Փարսոնսի կողմից (J. Higginbotham 1985, 2000) (T. Parsons 1990, 2000): Այս մոտեցումը հետագայում զարգացվեց որպես ներկայումս հայտնի «իրադարձությունների իմաստաբանության» տարատեսակ: Վերջինս բնութագրվում է երկու միմյանցից անկախ մոտեցումներով. առաջինը վերաբերում է բայական պրեդիկատներին: Եթե Դ. Դեյվիդսոնը իրադրային արգումենտները ներկայացնում էր որպես բայերի հավելյալ արգումենտներ, ապա *նոր դեյվիդսոնյան* մոտեցման կողմնակիցները բայական պրեդիկատի իրադրային արգումենտը համարում են վերջինիս միակ արգումենտը, իսկ իրադարձությունների և դրանց մասնակիցների հարաբերությունը մատնանշվում է թեմատիկ դերերի օգտագործմամբ: Երկրորդ մոտեցումը վերաբերում է իրադրային արգումենտների տարրաբաշխմանը. վերջինս համարվում է ավելի լայն կիրառություն ունեցող, քան ավանդական դեյվիդսոնյան արգումենտները, այսինքն՝ նոր մոտեցման տեսաբանները գտնում են, որ ոչ միայն բայերն են ներկայանում որպես իրադարձության արգումենտներ, այլ և ածականները, գոյականները և նախդիրները:

Ավելի ին՝ որոշ հետազոտություններում առաջ է քաշվում այն դրույթը, որ ցանկացած բայական պրեդիկատ ունի թաքնված արգումենտ: Ցանկացած *e* (իրադարձություն) դիրք համընկնում է իրադարձությունների թաքնված արգումենտների դիրքին (ըստ Դ.Դեյվիդսոնի տեսության): Փաստորեն կան ավելի ուժեղ արգումենտներ, և սույն հայեցակետից իրավիճակային բայերը ևս ունեն *e* (իրադարձություն) դիրք (J. Higginbotham 1985:10): Իսկ Գ.Չիերչիան իր հերթին նշում է, որ յուրաքանչյուր բայական անուն (VP), լինի դաներքին կառուցվածք, թե հայեցակերպային բնորոշիչ, իրադարձությունների համար ունի հավելյալ արգումենտային դիրք: Եվ հենց այս հավելյալ արգումենտն է, որ բայական անունը դարձնում է ներքին կառույց (G. Chierchia 1995:204): Հետազոտությունները ցույց են տալիս, որ բարդ իրադարձությունները կազմված են ներքին և արտաքին իրադարձություններից. արտաքին իրադարձությունը կապված է պատճառականության (causation) և ներգործության (agency) հետ, իսկ ներքին իրադարձությունը՝ իրավիճակի փոփոխության կամ նպատակաուղղվածության (telicity) հետ:

[1.1.7]



(C. Tenny & J. Pustejovsky 2000:7)

Այս տեսանկյունից “John sliced the bread” (Ջոնը կտրատեց հացը) նախադասության մեջ պրեդիկատը բաղկացած է ներքին և արտաքին իրադարձություններից: Ներքին իրադարձությունը նպատակ արտահայտող իրադարձությունն է, որում *հացը* ենթարկվում է իրավիճակի փոփոխության: Իսկ արտաքինն այն իրադարձությունն է, որում Ջոնը հանդես է գալիս որպես ագենտ (իրադարձության կատարողը): Եվ քանի որ արտաքին իրադարձությունը պատճառ է հանդիսանում ներքինի համար, ապա դա հարաբերվում է պատճառականության հետ: Պատճառականությունն ասելով հասկանում ենք մի երևույթ, երբ պատճառը որոշակի պայմանների

առկայ ության դեպքում անհրաժեշտաբար առաջ է բերում մյուսը՝ հետևանքը (կամ գործողությունը): Պատճառականությունը լեզվաբանորեն ներկայացվում է որպես հարաբերություն կամ երկու պրոպոզիցիոնալ արտահայտությունների, կամ երկու իրադարձությունների, կամ էլ ագենտի և իրադարձության միջև (C. Tenny & J. Pustejovsky 2000:8):

Արգումենտային կառույցը նկարագրում է այս կամ այն պրեդիկատի թեմատիկ (իմաստաբանական) բովանդակությունը: Արգումենտային կառույցի վերաբերյալ հիմնական մոտեցումները թեմատիկ արգումենտները դիտարկում են որպես պարզ փոփոխականներ, որոնց մեկնաբանությունը միջամտվում է պրեդիկատների *բառային հասկացության կառույցով* (Lexical Conceptual structure): Այս կառույցը ներկայանում է որպես նկարագրության իմաստաբանական մակարդակ, որը պրեդիկատների իմաստի որոշակի մասերը ներկայացնում է տարրաբաշխման միջոցով (H. Rappaport & B. Levin 1986, J. Grimshaw 1990, R. Jackendoff 1990): Տարրաբաշխման գաղափարն առաջարկել է Ջ. Գրիմշոուն, որը Ռ. Ջեքենդոֆի թեմատիկ աստիճանակարգին համապատասխան լավագույնս ներկայացնում է արգումենտները որպես անանուն փոփոխականներ՝ կադապարված իրենց թեմատիկ կողմով (J. Grimshaw 1990:10; R. Jackendoff 1990): Յուրաքանչյուր արգումենտի մեկնաբանությունը և դրան գուցեգործված թեմատիկ դասը հնարավոր է վերականգնել միայն պրեդիկատի *բառային հասկացության կառույցով*:

Սերող իմաստաբանության ավանդույթը բացահայտել է այն գաղափարը, որ բայերին հատուկ կառուցվածքը համապատասխանում է նախադասության շարահյուսական կառուցվածքին: Ջ. Մքոլին նշում է, որ, օրինակ, *համոզել* (*persuade*) բայը պետք է տարրաբաշխվի մի կառույցի, որը բաղկացած է այնպիսի պրեդիկատներից, ինչպիսիք են DO (կատարել), CAUSE (պատճառ հանդիսանալ), BECOME (դառնալ), INTEND (նպատակադրվել) պրեդիկատները (G. McCawley 1971):

Յետագայում Դ. Դոուլթին զարգացնում է մի շարք մոտեցումներ սերող իմաստաբանության և Ռ. Մոնտեգյունի քերականության հայեցակետից: Իրադրային դասերն ընդհանուր առմամբ բնութագրել է հասանելի պրեդիկատների միջոցով. DO-ն գործողությունների, BECOME-ը նպատակին հասած գործողությունների CAUSE BECOME-ը կատարված և ավարտված գործողությունների համար (D. Dowty 1979:124):

Ռ. Ջեքենդոֆն իր մշակած *հասկացական իմաստաբանության* (conceptual semantics) հայեցակետից առաջարկում է հասկացական մի շարք կարգեր, ինչպիսիք են EVENT (իրադարձություն), STATE (վիճակ), ACTION (գործողություն), PLACE (վայր), PATH (ուղի), PROPERTY (հատկանիշ), AMOUNT(քանակ) կարգերը, ինչպես նաև կազմության կանոններ, որոնք համակցում են այս կարգերը: Բառային միավորը մեկնաբանվում է այս կանոններից կազմված հասկացական կառույցով: Տարրաբաշխումը կարող է լինել բավականին խորքային, ինչպիսին է drink «խմել» բայի օրինակը, որը ներկայանում է «պատճառ հանդիսանալ, որ հեղուկը լցվի բերանը» (R. Jackendoff 1990:53):

[1.1.8] Drink; [_{event} CAUSE (_{thing} i, [_{event} GO ([_{thing} LIQUID] j, [_{path}TO ([_{place} IN ([_{thing} MOUTH OF (thing))])))]

Ռ. Ջեքենդոֆը ներառում է նաև գործողության կապ, որը ներկայացնում է անհատների միջև եղած ազդեցության գործող հարաբերությունը՝ այդպիսով դիմելով թեմատիկ դերերի գաղափարին:

Թեմատիկ հարաբերությունները ներկայացվել են դեռևս սերող իմաստաբանության մեջ 1960-70-ական թթ. (J. Gruber 1976; Ch. Fillmore 1968; R. Jackendoff 1972): Դրանք հանդես են գալիս որպես որոշակի միջոցներ, որոնք դասակարգում են պրեդիկատների արգումենտները մասնակցային տեսակներում (participant types), որոնք այսօր արդեն բնական լեզվի քերականության մեջ ունեն հատուկ կարգավիճակ: Ջ. Գրուբերն առաջարկում է թեմատիկ հարաբերությունների մի շարք՝ հիմնված շարժում արտահայտող

բայերի վրա: Նա առաջ է քաշում նախաբառային (pre-lexical) կարգայնացված կառույց հասկացություններ, որը ավելի խորքային է, քան խորքային կառույցի մակարդակը շարահյուսության մեջ (J. Gruber 1976:2): Այս կառույցը հիմք է հադիսանում շարահյուսական կառույցի համար՝ միևնույն ժամանակ ապահովելով իմաստային հարաբերությունները նախադասության անդամների միջև: Նախաբառային կառույցի կենտրոնական միավորը բայն է, մնացած միավորները ունեն որոշակի դերեր՝ գուգորդված կոնկրետ բայերի հետ: Հիմնական դերում հանդես է գալիս թեման (Theme), հաջորդիվ՝ դիրքը (Location), աղբյուրը (Source), նպատակը (Goal) և գործողությունն կատարողը (Agent): Այս համակարգը հետագայում զարգացրել է Ռ. Ջեքենդոֆը՝ առաջարկելով հետևյալ շարքը (R. Jacendoff 1972).

- ագենտ (Agent)-անվանական կառույց (NP), որը ներկայացնում է գործողություն կատարողին,
- թեմա (Theme)-շարժման բայերի համար,
- վայր (Location)-անվանական կառույց (NP), որն արտահայտում է վայրը,
- ելակետ (Source)–թեմայի սկզբնական դիրքը,
- նպատակ (Goal)-թեմայի վերջնական դիրքը,
- ընկալող (Experiencer)-անհատ, որը զգում և ընկալում է իրադարձություն
- ընկալիչ (Percept)-այն գոյականը, որն ընկալվում է,
- պացիենտ (Patient)-այն էությունը, որը գործողության է ենթարկվում,
- միջոց (Instrument)- միջոց, որով իրականացվում է գործողություն,
- շահառու (Benefactive) - այն էությունը, իշահորի տեղի է ունենում իրադարձությունը:

Վերոնշյալ շարքը հետագայում ունեցել է իր զարգացումներն ու ավելացումները (B. Levin 1985):

Ըստ Չ. Ֆիմլորի իմաստաշարահյուսական հարաբերությունը արտահայտվում է հոլովի միջոցով, և տարբերակվում են իմաստաբանական և շարահյուսական հոլովներ: Իմաստաբանական առումով առաջ են քաշվում որոշակի դասեր, որոնք հիմնված են այն ձևի վրա, որով մենք հասկացությանացնում ենք իրավիճակներն ու իրադարձությունները, մինչդեռ շարահյուսական դիտակետից առաջ են քաշվում քերականական սահմանազատումներ այն ձևերում, որոնցով անվանական կառույցներն արտահայտվում են շարահյուսորեն (Ch.Filmore 1968:20):

Չնայած փիլիսոփայական և հոգեբանական գրականության մեջ պատճառականությունը վաղուց վերլուծվում է որպես հարաբերություն երկու իրադարձության միջև, բնական լեզվի ժամանակակից իմաստաբանական կադապրներում այս գաղափարն ի հայտ է եկել միայն վերջերս: Ռ. Քարթերը՝ այս բնագավառի վաղ հետազոտողներից մեկը, *darken* «մթնել» բայի իմաստը ներկայացնում է հետևյալ կերպ.

[1.1.9] xCAUSE((y BE DARK) CHANGE))

[x causes the state of y being dark to change]

(R. Carter 1967:6)

Այստեղ CAUSE պրեդիկատը ներկայացվում է որպես հարաբերություն պատճառ հանդիսացող x արգումենտի և ներքին արտահայտության միջև, որը ներառում է իրավիճակի փոփոխություն y արգումենտում:

Բ. Լևինը և Ջ. Ռափորթը հետևում են այս ռազմավարությանը և իրավիճակի փոփոխությունը ներկայացնում BECOME (դառնալ) պրեդիկատով (B. Levin & H. Rappoport 1988):

[1.1.10] Wipe the floor clean.

xCAUSE[yBECOME (AT) z) BY [x 'wipe'y]]

xCAUSE [floor BECOME (AT) clean

Y [x 'wipe' floor]]

Մաքուր դառնալու իրադարձությունը ներկայացվում է հետևյալ կերպ.

[1.1.11] [floor BECOME (AT) clean]

Ուղիղ խնդիրը՝ *հատակը*, ենթարկվում է վիճակի փոփոխության՝ ներկայացնելով ներքին իրադարձությունը: Երբ զարգանում է իրադարձությունը, հատակն աստիճանաբար մաքրվում է, իսկ երբ իրադարձությունն ավարտվում է, հատակն արդեն մաքուր է:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ բայիմաստը կարող է վերլուծվել այն իրադարձության կառուցվածքային նկարագրությամբ, որով ներկայացվում է տվյալ բայը: Ընդհանուր առմամբ կան բայեր, որոնք նկարագրում են իրավիճակի փոփոխություն, որում բայիմաստը ներառում է բայի ուղիղ խնդրի որոշակի վիճակային փոփոխություն: Գոյություն ունեն գգալի տարբերություններ նկարագրությունների տեսակների մեջ, սակայն ներքոհիշյալ հինգ օրինակներում նկատելի են բառային վերլուծության որոշակի ընդհանրություններ պատճառային արտաքին իրադարձության և դառնալու կամ իրավիճակի փոփոխության ներքին իրադարձության միջև.

[1.1.12] 1. x CAUSE ((BE DARK) CHANGE))
(R. Carter 1967:6 example 9b)

[1.1.13]

2. He sweeps the floor clean:

[[He sweeps the floor] CAUSE [BECOME [the floor is clean]]]

(D. Dowty 1979:93, example 105)

[1.1.14]

3. Wipe the floor clean:

[x CAUSE [y BECOME (AT) z] BY [x ‘wipe’ y]]

[x CAUSE [floor BECOME (AT) clean] BY [x ‘wipe’ floor]]

(B. Levin & H. Rapoport 1988:2, example 2a)

Առաջին օրինակում, որն առաջարկված է Ռ. Քարթերի կողմից, *darken (մթնեցնել)* բայի իմաստը ներկայացված է հետևյալ կերպ.

[1.1.15]

x causes y to change into a state of being dark

Ներքին իրադարձությունը և վերջնական իրավիճակը տարբերակվում են նկարագրության մեջ (y BE DARK)CHANGE)):

Երկրորդ օրինակում, որն առաջարկված է Դ. Դաուլթիի կողմից, բայական արտահայտության իմաստը (sweep the floor clean) զանազանվում է հատակի մաքուր դառնալու ներքին իրադարձությամբ: Երրորդ օրինակում ևս ներկայացված է հատակի մաքուր դառնալու ներքին իրադարձությունը:

Կան նաև նկարագրություններ, որոնք ներքին իրադարձությունները ներկայացնում են շարահյուսական կառույցներով: Օրինակ՝ kill (սպանել) բայի իմաստը ներկայացվում է հետևյալ կերպ.

[1.1.16] 4. Become not alive.




FIGURE 1 McCawley 1968, p. 73, Figure 3.


Ձ. Մթուղին այս բայի վերլուծությունը առաջարկում է սերող իմաստաբանության տեսանկյունից: Նա *kill* «սպանել» բայը ներկայացնում է որպես մի բայ, որը բաղկացած է մի քանի պարզ պրեդիկատներից: Ավելին՝ նշում է, որ այս պարզ պրեդիկատները, որոնք արտահայտում են բայիմաստը, պատկանում են շարահյուսության բնագավառին:

Կ. Հեյլսն և Ձ. Կեյսերը “The cook thinned the gravey” (Խոհարարը նոսրացրեց սոուսը) նախադասությունը ներկայացնում են որպես մի նախադասություն, որն ունի ներքին բայական արտահայտություն, որն էլ և ներկայացնում է սոուսի իրավիճակային փոփոխությունը (սոուսը դառնում է նոսր), իսկ

ներքին ածականական արտահայտությունը ներկայացնում է սոուսի վերջնական վիճակը:

[1.1.17]

5.The cook thinned the gravy,



(Hale & Keyser 1993 p.72. example 3)

Իրենց «Արգումենտային կառուցվածքը և շարահյուսական հարաբերությունների բառայնացումը» աշխատության մեջ նրանք ցույց են տալիս, որ բայերի բառային իմաստաբանական բնութագրերը, որոնք գուգորդվում են իրադրային կառույցներին, ուղղակիորեն արտացոլվում են շարահյուսության մեջ իմաստային բաղադրիչների միջոցով, ինչպիսին է CAUSE պրեդիկատը: Նրանք պնդում են, որ բառային արգումենտային կառուցվածքը շարահյուսական է: Ըստ նրանց՝ այն, ինչը կապված է նախադասության իմաստի հետ, արտակայ որեն ապակոդավորվում է որպես շարահյուսական կառույց (K. Hale & J. Keyser 1993:73):

Բառային իրադարձություններին տրամաբանական մոտեցում է ցուցաբերում Թ. Փարսոնսը, որը, սակայն, իր տեսակետը կառուցում է հենց Դ. Դեյվիդսոնի տեսակետի հիման վրա: Թ. Փարսոնսի նկարագրությունները հիմնվում են Դ. Դոուլթի և սերող իմաստաբանության ավանդույթների վրա՝ կրկին կիրառելով CAUSE և BECOME պրեդիկատները: Նա իր «Անգլերենի իրադարձությունների իմաստաբանությունը» գրքում նշում է, որ պարզ նախադասության իմաստաբանությունը ենթադրում է հետևյալ կետերը.

Brutus stabbed Caesar

Ինչ-որ իրադարձության համար e(event)

e հարվածում է
 e ագենտը Բրուտոսն է
 oբյեկտը՝ Կեսարը
 e գազաթնակետին է հասնում անցյալի մի որևէ
 ժամանակահատվածում

e [Stabbing (e) & Agent (e, Brutus) & Object (e, Caesar) & Cul (e, before now)
 (T. Parsons 1990:10)

Թ. Փարսոնսը, զարգացնելով անգլերենի
 իմաստաբանությանը, իր մոտեցումն անվանում է ենթատոմային
 իմաստաբանության, որում իրադարձությունները ներկա-
 յացվում են որպես բարդ իրադարձություններ, որոնք
 նկարագրում են ներքին կառուցվածք ունեցող բայերը: Նա նշում
 է, որ ներքին բայաձևերն ունեն ավելի շատ կառույցներ, քան
 նորմալն է պահանջում: Մասնավորապես գոյություն ունի, այսպես
 կոչված, իրադարձության արգումենտ (e):

[1.1.18] x closes the door

(∃ e) [Cul (e) & Agent(e,x) & (∃ e') & [Cul(e') & Theme(e', door) & CAUSE(e,e') &
 (∃ s) & Theme(s, door) & CAUSE(e's,) [∃ s) [Being-closed(s) & Theme(s,door) &
 Hold(s) & BECOME((e's,))]],

(T. Parsons 1990:20)

Թ. Փարսոնսի տրամաբանական այս ձևերում նկատում ենք
 ներքին իրադարձության արգումենտի (e') բաղադրամասերը,
 BECOME պրեդիկատը և իրավիճակային արգումենտը (s): Cul և Hold
 պրեդիկատները համապատասխանաբար ներկայացնում են
 իրադարձության ամբողջականության և ոչ ամբողջականության
 հայեցակերպային հատկանիշները՝ պարզաբանելով
 վերջնաիրավիճակի հետևանք-ները, որոնք տրված են տվյալ
 բայերով: Ներքին իրադարձությունը (e') թեմայի (Theme), որը
 նախադասության ուղիղ խնդիրն է (դուռ), այն իրավճակն է, որը
 կառչում է (is holding) դռնից ավարտվող իրադարձության վերջում:

Ըստ Ռ. Ջեքենդոֆի՝ արգումենտային կառույցի խնդիրը պետք
 է լինի կենտրոնական յուրաքանչյուր քերականության
 տեսության համար: Արգումենտային կառույցի ամբողջական

ընկալ ու մը ստորոգման ըմբռնման բանալին է, այն է՝ ինչպես են իրադարձություններն ու իրավիճակները մեկնաբանվում լեզվական արտահայտությամբ: Ստորոգման համար բառային միավորի ամենաբնորոշ տեսակը բայն է, քանի որ տվյալ լեզվում արգումենտային կառույցի արտահայտմամբ վերլուծվում է բայերի դրսևորման ձևը, երբ դրանք արտահայտում են իրավիճակներ և իրադարձություններ (R. Jackendoff 2002:137): Նշենք, որ սկզբնաղբյուր հանդիսացող դեյվիդսոնյան իրադարձությունների տեսությունը ընդլայնելիս անխուսափելի է դառնում վերջինիս գուգակցումը հայեցակերպային դասերի հետ, քանի որ, ինչպես Ջ. Կիմն է նշում, եթե նկատի ենք առնում իրադարձության բացատրությունը, ապա դաչենք դիտարկում ինքնին նեղ եզրույթի դիտանկյունից, այլ այն ընկալում ենք որպես իրավիճակ կամ գործընթաց (J. Kim 1969:204): Այսօր փաստացիորեն իրադարձությունների իմաստաբանության շրջանակներում փոխադրում են դեյվիդսոնյան սկզբնաղբյուր հանդիսացող դրույթները և Չ. Վենդլերի առաջարկած քառակողմ դասակարգումը (Z. Vendler 1957): Իրադարձությունների, գործընթացների և իրավիճակների սահմանումը և ընդլայնումը քննարկվել են հատկապես Ժամանակի և հայեցակերպի ուսումնասիրությունների շրջանակներում, քանի որ «իրադարձություն» հասկացությունն իր մեջ լայն և նեղ իմաստներով ներառում է թե՛ իրադարձություն, թե՛ գործողություն և թե՛ իրավիճակ: Բացի այդ՝ իրադարձությունները քննարկվել և ուսումնասիրվել են փոփոխականության և նպատակաուղղվածության տեսակետից: Իրադարձությունները և գործընթացները փոփոխական դեպքեր են, իսկ իրավիճակները՝ անփոփոխ: Ավելի ին՝ իրադարձություններն ու նեղ գազաթնակետին հասնելու կետ, այսինքն՝ *նպատակային* (Telic) են, մինչդեռ գործընթացներն ու իրավիճակները վերջնակետ չունեն, այսինքն՝ *ոչ նպատակային* (Atelic) են: Հայ լեզվաբանական գրականության մեջ Մ. Փոլադյանի աշխատություններում որո-

շակի անդրադարձ կատարվում է բայերի վերոնշյալ հատկանիշներին, ինչպես նաև քննվում են հայեցակերպի վերաբերյալ որոշ հարցեր: Ըստ նրա՝ բայի նշված հատկանիշները կախված են աշխարհից եկող իրադարձության բնույթից: Աշխարհը շարժման մեջ է, և լեզուն ջանում է արձանագրել ամեն մի շարժում (Մ. Փոլատյան 2006:235): Մենք մեր հերթին առավել համապարփակ մոտեցում ենք ցուցաբերում վերոնշյալ հատկանիշներին՝ բացահայտելով հեղինակային տարբեր մոտեցումները և դասակարգման առանձնահատկությունները:

Ուսումնասիրելով իրադարձությունների մեկնաբանման ու արտապատկերման միջոցների վերաբերյալ հեղինակային տարբեր մոտեցումները՝ կարող ենք ասել, որ բայը փակ համակարգ չէ, ինչպես դիտվում էր ավանդական քերականություններում: Բայի իմաստը կազմող ներքին փուլերը կարող են ուսումնասիրվել և բացահայտվել հենց իրադարձությունների իմաստաբանության շրջանակներում՝ արտապատկերման տարբեր միջոցներով:

1.2. Բայիմաստի հայկերապային կառուցվածքը և իրադարձությունների դասակարգումը

Ինչպես համոզվեցինք, բայական արեդիկատները պարունակում են արգու-մենտային և իրադրային կառույցներ: Իրադրային կառույցը բաղկացած է մի շարք ենթա-իրադարձություններից, և իրադարձությունն ու ժամանակային հարաբերությամբ-յունները տեղայնացվում են այդ ենթաիրադարձություններում: Վերը նշված հայեցակետային դրույթները զարգացնում են այն գաղափարը, որ բայիմաստը կարող է վերլուծվել իրադարձության կառուցվածքային նկարագրության միջոցով:

Դ. Դեյվիդսոնի առաջարկած մոտեցումները համադրվում են 2. Վենդլերի կերապային վերլուծական աշխատանքին և հետագայում հանգեցնում այն գիտակցությանը, որ քերականությունը իրադարձությունները չի դիտում միայն անտրոհելի միավորներ,

այլ ընդունում է այն բարդ իրադարձությունների գոյությունը, որոնք և ունեն ներքին կառուցվածք (Z. Vendler 1957):

Իմաստաբանական հետազոտությունների շրջանակներում, սակայն, հայեցակերպի կարգը հիմնականում վիճելի է եղել և ունի երկար պատմություն: Հայեցակերպի կարգը լավագույնս սահմանել է Բ. Քոմրիեն, ըստ որի՝ հայեցակերպը ներկայացնում է իրավիճակի ներքին ժամանակային կազմակերպվածությունը տարբեր հայեցակետերից դիտարկելու ձևը (B. Comrie 1946:3): Հայեցակերպը դրսևորվում է և՛ քերականական և՛ բառային միավորներով: Քերականության տեսակետից մի շարք լեզուներ թեքական են, այսինքն՝ ներկայացնում են որոշակի սահմանազատումներ, օրինակ՝ անգլերենում շարունակական և անորոշ ներկա ժամանակների սահմանազատումը կամ կատարյալ և անկատար ձևերի սահմանազատումը ռուսերենում և այլն, ուստի քերականական հայեցակերպի սահմանումը միշտ էլ դժվարությունների է հանգեցրել: Պատճառներից մեկն այն է, որ քերականական հայեցակերպի կարգերի իմաստաբանական մեկնաբանությունը շատ հաճախ տարբերվում է այն պրեդիկատների դասերով, որոնցից այն կազմված է: Այս տարբերակումն ընդհանուր առմամբ վերագրվում է պրեդիկատների տարբեր դասերի բառային հայեցակերպի տարբերություններին, իսկ բառային հայեցակերպը սովորաբար ընկալվում է որպես իրավիճակի ներհատուկ ժամանակային կառույց: Նմանատիպ սահմանազատումների մեջ խնդիրը դրվում է *իրավիճակային հայեցակերպ* և *հայեցակետային հայեցակերպ* հասկացությունների միջև: Բառային հայեցակերպը, որը մասնագիտական գրականության մեջ հանդես է գալիս *Aktionsart* եզրույթով, նույնանում է *իրավիճակային հայեցակերպ* հասկացության հետև ներառում է իրադարձության տեսակների (որոնք հիմնականում բայական արտահայտություններ են) հատկանիշների միջև սահմազատումը, որն էլ հանգեցրել է բայական դասերի առանձնացմանը: Քերականական հայեցակերպը (հատկապես կատարյալի և անկատարի սահմանազատումը)

նույն անում է հայ եցակետային հայ եցակերպի հետ: Իրադարձությունների իմաստաբանության շրջանակներում, սակայն, կարևորվում է հենց բառային հայ եցակերպի խնդիրը, որի հիմքով էլ առանձնացվում են բայական դասերը:

Մ. Փոլարյանը ևս անդրադառնում է *Aktionsart* եզրույթին՝ նշելով, որ ժամանակների վերլուծությունը և ճշգրիտ բնորոշումը անհնարին են, եթե հաշվի չեն առնում *Aktionsart*-ը: Նա այն անվանում է բայի ուսումնասիրության ժամանակ քերականական «թակարդներից» առաջինը (Մ. Փոլարյան 2006:229):

Երբ հայ եցակերպային բայերը սկսեցին օգտագործվել իմաստաբանության մեջ, դրանք կոչվում էին վենդլերյան դասեր: 2. Վենդլերի աշխատությունը մեծ ազդեցություն ունեցավ լեզվաբանական գրականության վրա, մասնավորապես՝ բառային իմաստաբանության շրջանակներում: Նա փորձում էր իրադարձությունների դասակարգումը վերագրել լեզվին՝ զարգացնելով մի շարք լեզվաբանական փորձարկումներ, թե որ դասն է պատկանում որոշակի հնարավոր դեպքերի: 2. Վենդլերի դասերը բայական դասեր են, բայց դրանք կարող են նաև մեկնաբանվել որպես բայական անուններ (Z.Vendler 1957:150):

2. Վենդլերն առանձնացնում է նախադասությունների երկու մեծ խմբեր՝ շարունակական և ընդհատվող նախադասություններ: Շարունակական նախադասություններն արտահայտում են տվյալ պահին կատարվող գործողություններ և ունեն աստիճանական զարգացում: Ի հակադրություն դրան՝ ընդհատվող ժամանակամիջոցները աստիճանական զարգացում չեն ունենում (Z.Vendler 1957:159):

Հավանաբար տարօրինակ է հնչում անգլերենի հետևյալ նախադասությունը.

[1.1.19]

“I am knowing geography”

Շարունակական խմբում առանձնացվում են երկու ենթախումբ՝ համասեռ և ոչ համասեռ նախադասություններ: Համասեռ իրադարձությունները լրացնում են ժամանակը: Եթե որևէ մեկը

վազում է որոշակի ժամանակահատվածում, նա կշարունակի վազել այդ ժամանակահատվածի յուրաքանչյուր ենթաժամանակահատվածում: Անշուշտ, *վազելու* գործընթացը սկսվում է ժամանակի որոշակի պահին և ավարտվում մեկ այլ պահի, սակայն սկիզբն ու ավարտը այդքան էլ էական չեն: Համասեռ ժամանակամիջոցները գործունեության ժամանակամիջոցներ են, և դա ստուգելու համար 2. Վենդլերն իր «Բայերը և ժամանակները» աշխատության մեջ առաջարկում է հետևյալ օրինակը.

[1.1.20] “How long did he run?”

Իսկ ոչ համասեռ ժամանակամիջոցներում գազաթնակետին հասնելը էական կարևորություն ունի: Գազաթնակետին հասնելուց հետո չկաշարունակություն: *Ծրջան գծելը* սկսվում է որոշակի պահի, և այն միայն պատրաստ է, երբ ավարտվում է շրջան գծելու գործընթացը: Սրանք կոչվում են կատարված և ավարտված ժամանակամիջոցներ (Accomplishment): Այստեղ բերվում է հետևյալ օրինակը.

[1.1.21] “How long did it take to draw that cycle?”

Ընդհատվող ժամանակամիջոցներում առանձնացվում են երկու խմբեր՝ ակնթարթային և տևական ժամանակամիջոցներ: Վերջիններս արտահայտում են երևույթների վիճակը (State): Նման բայերով արտահայտված նախադասությունները 2. Վենդլերն անվանում է վիճակներ: Վիճակների համար առաջարկում է հետևյալ օրինակը.

[1.1.22] “For how long did you love her?”


Իսկ ակնթարթորեն ընդհատվող ժամանակամիջոցներն արտահայտում են գազաթնակետին հասնող որոշակի գործողություն, ինչպես օրինակ՝ *հաղթել մրցավազքը, գտնել գանձերը* և այլն: Սրանք արդեն կոչվում են նպատակին հասած գործողություններ (Achievement): Այստեղ էլ արվում է հետևյալ հարցադրումը.

[1.1.23]

“At what time did you find the treasure”

Ամփոփելով այս ամենը՝ 2. Վեկիլերը առաջարկում է իրադարձությունների քառանդամ դասակարգում՝ ներկայացնելով հետևյալ կառույցով.

[1.1.24]




(Z.Vendler 1957:157)

Այսպես, տեսնում ենք, որ 2.Վեկիլերն առաջ է քաշել հայեցակերպի քառանդամ տիպաբանություն՝ առանձնացնելով բայերի չորս խմբեր՝ հիմնվելով դրանց ժամանակային աչիսի հատկանիշների վրա, ինչպիսիք են տևողությունը և ավարտը: Ըստ 2. Վեկիլերի դասակարգման՝ բայերը կարող են ցույց տալ վիճակ, գործունեություն, կատարված-ավարտված և նպատակին հասած գործողություններ:

Ք. Սմիթը ևս առաջարկել է հիշյալ դասակարգումը միայն մեկ հավելումով՝ առաջարկելով հինգերորդ անդամը, որն անվանում է ակնթարթային իրադարձություններ (semelfactives): 2. Վեկիլերի առաջարկած *achievement* տեսակի բայերը Ք. Սմիթը սահմանում է որպես ակնթարթորեն գագաթնակետին հասնող իրադարձություններ, իսկ իր առաջարկած *semelfactive* բայերը՝ ակնթարթային, բայց ոչ գագաթնակետին հասնող իրադարձություններ (C. Smith 1991):

Բայերի տարբեր դասակարգումներ կարելի է գտնել նաև Է. Բախի աշխատություններում (E. Bach 1989, 1986): Նա հնարավոր դեպքերը դասակարգում է կառուցվածքային ծառի միջոցով.

[1.1.25]



(Bach E.,1986:6)

Է. Բախի ներկայացրած կառուցվածքային ծառի վիճակները համապատասխանում են քառակողմ դասակարգման վիճակներին, գործընթացները (processes)՝ *գործողություններին* (activities), տևական (protracted) իրադարձությունները՝ *կատարված* և *ավարտված* (accomplishment) տեսակի բայերին, իսկ վայրկենական իրադարձությունները՝ *նպատակին հասած* (achievement) տեսակի բայերին, որոնք էլ իրենց հերթին՝ ակնթարթային (օրինակ՝ recognize, notice) և գագաթնակետին հասնող գործընթացներին (օրինակ՝ reach the top of the mountain, die):

Այնուամենայնիվ, առաջարկված բոլոր դասակարգումներում դասակարգման առարկան հենց բայն է: Քանի որ բայը կազմում է դասային անդամակցությունն պրեդիկատի հետ, հենց բայն է, որ պետք է դասակարգվի: 2. Վենդլերի տիպաբանությունը թերևս լայնորեն կիրառվողներից է, չնայած որ առաջարկվել են այլ ընտրանքային շատ տարբերակներ, այնուամենայնիվ բոլոր

տարբերակների համար կարելի է ասել հիմք է ծառայել հենց 2.Վենդլերի դասակարգումը (Z. Vendler 1957):

Ձ. Վերկույլը, հիմք ընդունելով 2. Վենդլերի դասակարգման համակարգը, նշում է, որ իրադրային դասերն իրենք իրենցով այդքան էլ պարզ և հասանելի չեն (J. Verkuyl 1993): Ըստ նրա՝ այդ դասակարգումը հիմնված է իրադարձությունների բավականին խոր բնութագրման վրա: Ուսումնասիրությունների ընթացքում նա գալիս է այնպիսի եզրահանգման, որ իրադարձությունների դասակարգումը այնքան կարևոր չէ, որքան այն չափանիշները, որոնք և կազմում են այդ դասերը: Նա ենթադրում է, որ երկու կարևորագույն հասկացություններ սերում են 2. Վենդլերի դասերից: Դրանք են շարունակականությունը (արդյոք իրադարձությունը ունի տևողություն) և սահմանափակությունը (արդյոք իրադարձությունն ունի վերջնակետ): Դասակարգումը ներկայացվում է հետևյալ կերպ.

[1.1.26]

State:- bounded,-continuous

Activity:-bounded,+continuous

Achievement:+bounded,-continuous

Accomplishment:+bounded,+continuous (J. Verkuyl 1993)

Ձ. Պուստեյովսկին իրադարձությունների կառուցվածքի մասին խոսում է՝ նշելով, որ իրադարձություններն ունեն ներքին կառուցվածք, որը կարելի է տարրալուծել փոքր մասերի: Նա զանազանում է երեք տեսակի ժամանակամիջոցներ՝ սկզբնական, ներքին և վերջնական: Ձ. Պուստեյովսկին, այս երեք ժամանակամիջոցները օգտագործելով, սահմանում է իրադարձությունների տեսակները: Նա ընդունում է, որ իրադարձությունները կարող են դասակարգվել նվազագույնս 3 տեսակով.

1. processes (գործընթացներ)

2. states (իրավիճակներ)

3. transitions (փոխակերպումներ) (J. Pustejovsky 1991:40-42)

Իրավիճակ (S): Պարզ իրադարձություններ, որը չի հարաբերվում այլ իրադարձության (օրինակ՝ to be sick, love, know).

[1.1.27]




Գործընթացներ
հաջորդականություն

(P):


Իրադարձությունների

[1.1.28]



Փոխակերպում (T): Իրադարձություններ հաստատում է իմաստաբանական արտահայտություններ, որը հարաբերվում է իր հակադրության հետ (օրինակ՝ give, open, build, destroy).

[1.1.29]




Իրադարձությունների տեսակների այս զանազանությունն արտացոլելու համար Ջ.Պուլստեջովսկին բերում է հետևյալ օրինակները.

1. The door is closed. (Դուռը փակված է)
2. The door closed. (Դուռը փակվեց)
3. John closed the door. (Ջոնը փակեց դուռը)

Առաջին օրինակում *closed* ձևը ցույց է տալիս իրավիճակ, որն ունի հետևյալ իրադրային կառույցը.


[1.2.30]




(Pustejovsky J.1988:37)

Երկրորդ և երրորդ օրինակներում բայն արտահայտում է պրեդիկատի հակադրությունը:


[1.2.31]





(J. Pustejovsky 1988:48)


[1.2.32]



Վերոնշյալ երկու կառույցներն էլ ենթադրում են, որ երկու ձևերում էլ ՝ թե՛ սկզբնական, թե՛ պատճառային, ներկայացված է փոփոխություն մի իրավիճակից դեպի իր հակադրությունը: Այնուհետև Ձ. Պուստեյովսկին բերում է ևս մի օրինակ, որը ցույց է տալիս, թե գործընթաց արտահայտող բայերը ինչով են տարբերվում իրավիճակներից և փոխակերպումներից:

[1.2.33]

Mary ran (Մերին վազեց)




(J. Pustejovsky 1988:49)

Իսկ ներքոհիշյալ նախադասությունը արտացոլում է, թե ինչպես է պատճառային գործընթացը ներկայացված և ուրվագծված բառային հասկացական կառույցի նկարագրության մեջ (LCS).

[1.2.34]

Mary pushed the card (Մերին հրեց խաղաթուղթը)



(J. Pustejovsky 1988:40)

Ձ. Պոլստեյովսկին ընդունում է նաև ավելի լայն իրադրային կառուցվածք, որը հարաբերում է իրադարձություններն ու իրենց բաղկացուցիչ մասերը: Այս հարաբերությունները ներառում են այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են մասնակի համընկնումը, մասնակի դասավորությունը և ներառումը: Նա այս լայն իրադրային կառուցվածքը մեկնաբանում է հետևյալ կերպ.

[1.2.35]


$\langle E, <, O, *, * \rangle$

(J. Pustejovsky 1996:71)

E-ն իրադարձությունների խումբն է, առաջին $<$ -ն՝ մասնակի դասավորությունը, հաջորդ $<$ -ը ներկայացնում է ավելի խիստ մասնակի դասավորություն, O-ն մասնակի համընկնումն է, $<$ -ն՝ ներառումը, իսկ $*$ -ը նշանակում է իրադարձության «գլուխը»:

Իրադարձության կառուցվածքն իր ենթաիրադարձություններով Ձ. Պոլստեյովսկին ներկայացնում է հետևյալ կերպ.

[1.2.36]



Ըստ նրա՝ իրադրային կառուցվածքային ծառը կարող է սահմանվել հետևյալ կերպ՝ *սպառիչ դասակարգված մաս* (exhaustive ordered part of) $\langle o \alpha$:

[1.2.37]

a. $[e3 \ e1 \ \langle o \ \alpha e2 \rangle] = \text{def } \langle o \ \alpha (\{e1, e2\}, e3)$

b. $\forall e1, e2, e3 [\langle o \ \alpha (\{e1, e2\}, e3) \rightarrow e1 \preceq e3 \wedge e2 \leq e3 \wedge e1 \ o \ e2 \wedge \text{init}(e1) <$

$\text{init}(e2) \wedge \text{end}(e1) = \text{end}(e2) \wedge \forall e [e \leq e3 \rightarrow e = e1 \vee e = e2]]$ (J. Pustejovsky 1996:76)

Այս սահմանումը ցույց է տալիս, որ $e3$ -ը բարդ իրադարձություն է՝ կազմված երկու ենթաիրադարձություններից՝ $e1$ և $e2$, որտեղ նրանք դասակարգված են այնպես, որ $e1$ -ը հաջորդում է $e2$ -ին. սրանցից յուրաքանչյուրը $e3$ -ի տրամաբանական մասն է, և չկա ոչ մի այլ կարգի իրադարձություն, որը $e3$ -ի մասն է:

Նաբերում է հետևյալ օրինակը՝

[1.2.38]

a) James will accompany Mary to the school (telic)

Ջոնը Մերիին կուղեկցի դպրոց:

b) Peter accompanied Mary while she was traveling (atelic)

Փիթերն ուղեկցում էր Մերիին, երբ նա ճամփորդում էր:

Այս տեղ մասնակի կերպով համընկնող մասը (O&) նշանակված է «ուղեկցել» բայով: «Ուղեկցելը» վերաբերում է իրադարձությանը և ենթադրում է թե՛ տեղիկ և թե՛ ատեղիկ մեկնաբանություններ:

Ձ. Պոլստեյովսկին գտնում է, որ իրադարձությունների կառուցվածքային ծառի վրա կան երկու նիստեր, որոնք անհրաժեշտ է մեկնաբանել բառային կառուցվածքով.

[1.2.39]

$$\left[\begin{array}{l} \alpha \\ \text{EVENTSTR} = \left[\begin{array}{l} E_1 = \dots \\ E_2 = \dots \\ \text{RESTR} = \dots \end{array} \right] \\ \dots \end{array} \right]$$

(J. Pustejovsky 1996:67)

Թերևս հենց Ձ. Պոլստեյովսկու ներկայացրած «կառուցել» բայը վերլուծվում է որպես իրադարձություն, որը ներառում է զարգացող գործընթաց և վերջնական իրավիճակ:

[1.2.40]

$$\left[\begin{array}{l} \text{build} \\ \text{EVENTSTR} = \left[\begin{array}{l} E_1 = \text{process} \\ E_2 = \text{state} \\ \text{RESTR} = <\alpha \end{array} \right] \\ \dots \end{array} \right]$$

(J. Pustejovsky 1996:67)

«Ուղեկցել» բայը, ի հակադրություն «կառուցել» բայի, որն ուներ երկու ենթաիրադարձություններ՝ գործընթաց և իրավիճակ, ենթադրում է նպատակին հասած իրադարձություններ՝ փոխակերպումներ կամ գործընթացներ:

[1.2.41]

$$\left[\begin{array}{l} \text{accompany} \\ \text{EVENTSTR} = \left[\begin{array}{l} E_1 = \tau_i \\ E_2 = \tau_i \\ \text{RESTR} = o_\alpha \end{array} \right] \\ \dots \end{array} \right]$$

(J. Pustejovsky 1996:67)

Ձ. Պոլստեյովսկին նաև նշում է, որ կառուցվածքային տեղեկատվությունը բավարար չէ բառային առանձնահատկությունները դրսևորելու համար: Իրադարձություն տեղեկատվությունը, որը պարունակում է բայը, կարող է լինել ավելի հարուստ, քան իրադարձությունների հերթականությունը:

Դ. Դառնալիս իր հերթին քննարկում և ավելի է զարգացնում 2. Վենդլերի բայական պրեդիկատների դասակարգումը՝ նորից դասակարգելով չորս խմբում, առավել հիմնվելով տրամաբանական կողմի վրա: Նա դասակարգման մեջ առանձնացնում է հետևյալ խմբերը.

1. States (Վիճակներ),
2. Activities (Գործունեություններ),
3. Achievements (Նպատակին հասած գործողություններ),
4. Accomplishments (Կատարված և ավարտված գործողություններ):

Նա նշում է, որ իրավիճակները անկայուն վիճակներ են, օրինակ՝ *հավատալ*, *իմանալ*: Գործունեությունները կատարվող գործընթացներ են: Երրորդ խմբի բայերը ակնթարթային ավարտունեցող գործողություններ են, ինչպես օրինակ՝ *նկատել*, իսկ վերջին խմբի բայերն արդեն լրիվ վերջնակետ ունեցող գործողություններ են, օրինակ՝ *շրջան գծել*:

Ներկայացնենք յուրաքանչյուր խմբում Դ.Դառնալի առանձնացրած օրինակները.

[1.2.42]

States	Activities	Achievements	Accomplishments
know	run	recognize	paint a picture

desire	walk	notice	make a chair
have	swim	die	draw a circule
love	drive a car	reach	build a house

(D. Dowty 1979:60)

Դ. Դոուդթին փորձում է լուծել այս դասակարգման հետկապված մի շարք խնդիրներ: Նա կարծում է, որ տարբեր հայեցակերպային դասերի զանազանումը բխում է իրադարձության կառուցվածքի մակարդակից: Եվ հայեցակերպային վերլուծության ունը կատարում է տրամաբանորեն.

[1.2.43]

1. Simple Statives: $\Pi n(a1....an)$ (John knows the answer)
2. Simple activities: $DO(a1, [\Pi n(a1,an)])$ (John is walking)
3. Simple achievements: $BECOME [pm(B1,Bm)]$
4. Agentive accomplishments: $[[DO(a1, an)]]$

$[pm(B1.....Bn)]]$

(D. Dowty 1979: 61)

Վերջինը համարվում է բարդ իրադարձություն, որը բաղկացած է երկու ենթաիրադարձություններից՝ գործողություն և հետևանքային ենթաիրադարձություններ: Նա համարում է, որ այս ենթաիրադարձությունները կադասարվում են պատճառական հարաբերությունների օգնությամբ: Նա նաև նկատել է, որ շարահյուսական ուսումնասիրությունները, որոնք ներկայացնում են 2.4.6-ի երի դասերը, ամբողջական չեն: Դ. Դոուդթին ներկայացնում է թարմացված դասակարգում, որը հիմնվում է մասնակիորեն դասակարգվող հինգ իմաստաբանական առանձնահատկությունների վրա: Ընդ որում, դրանցից չորսը ժամանակային են, իսկ մեկը՝ ոչ: Եվ այսպես, նա առանձնացնում է հետևյալ դասերը.

1. վայրկենական, որն հակադրվում է դարձին,
2. փոփոխություն, որն հակադրվում է անփոփոխությանը,
3. ուղղակի փոփոխություն, որն հակադրվում է անուղղակի փոփոխությանը,
4. պարզ փոփոխություն, որն հակադրված է բարդ փոփոխությանը,


5.ազենտիվություն, որն էլ հակադրված է ոչ ազենտիվությանը (D. Dowty 1979:180):

Այս դասերը հիմք ունենալով՝ Դ. Դոուլթին բայական պրեդիկատներն առանձնացնում է չորս խմբում՝

1. վիճակներ (States),
2. գործունեություններ (Activities),
3. վիճակի ամբողջական փոփոխություն (Accomplishments),
4. վիճակի պարզ փոփոխություն (Achievements):

Ասվածն արտացոլվում է ներքոհիշյալ կառույցում, որը և Դ.Դոուլթին օգտագործում է տարբեր տեսակի պրեդիկատները գնահատելու համար՝ հիմնվելով փոփոխության գաղափարի վրա: Նրա առաջարկած հինգերորդ կետը՝ ազենտիվությունը, դասակարգման մեջ այդքան էլ կարևոր դեր չունի:

[1.2.44]



(a):be asleep, love, know, hate

(b):sit, be polite, be a hero

(c):make a noise, rain, walk, dance

(d): notice, realize, kill, ignite

(e):flow from x to y, dissolve, walk from x to y, walk a mile (D. Dowty 1979:184)

Եվ այսպես, բայական պրեդիկատների հայեցակերպային հատկանիշները, որոնք, ինչպես նշեցինք, անվանվում են ակտիոնսարտ (Aktionsart), հետազոտության են ենթարկվել տարբեր տեսանկյուններից: 2. Վենդլերի տիպաբանությունը, որը զարգացրել է Դ. Դոուլթին, և որը կարող է անվանվել Վենդլեր-Դոուլթի դասակարգում, այս հետազոտությունների հիմնական աղբյուրն է: 2. Վերկույլի աշխատանքն էլ իր հերթին հայեցակերպը սահմանելու համար մեծ նշանակություն է տալիս բայի և դրա

ուղիղ խնդրի հարաբերության կարևորությանը: Այս տեղից էլ աճում է շարահյուսաբանների՝ հայեցակերպային կամ իրադրային դասակարգման նկատմամբ հետաքրքրությունը: Ք. Թենին առաջարկում է մի կանխավարկած (Aspectual Interface Hypothesis), որը ևս արժանացել է մեծ ուշադրության (C. Tenny 1992): Այս տեղևա կարևորում է նպատակաուղղվածության (telicity) և իմաստաբանական գաղափարների դերը շարահյուսական իմաստաբանության տեսանկյունից:

[1.2.45]

I ate an apple (Ես կերա խնձորը).

John went to the post office (Ջոնը գնաց փոստատուն).

The butter melted (Կարագը հալվեց).

Առաջին նախադասությունը ներառում է այն գիտելիքը, որ կա ուղեղ ու իրադարձություն, որի ընթացքում խնձորն աստիճանաբար սպառվում է մաս առ մաս, և երբ ամբողջ խնձորը սպառվում է, ուղեղ ու իրադարձությունն անհրաժեշտաբար ավարտվում է: Երկրորդ նախադասության մեջ անուղղակի խնդիրը (to the post office) ցույց է տալիս վերջնակետ, որը ներկայացնում է իրադարձությունը: Երրորդ նախադասության մեջ կարագը վերածվում է հեղուկի: Սա էլ նշում է հալչել ու իրադրության անհրաժեշտ ավարտը (C. Tenny 1992):

Ուսումնասիրելով վերը նշված դասակարգումները՝ կարող ենք գալ այնպիսի եզրակացության, որ չնայած որոշ տարբերությունների՝ նշված մոտեցումները ունեն մի շարք սկզբունքային ընդհանրություններ. բոլորն էլ դիտվում են որպես գործողություններ, սահմանվում են իմաստային այնպիսի առանձնահատկություններով, ինչպիսիք են վիճակը, ընթացքը, փոփոխությունը, վերջնակետը, ակնթարթայնությունը և այլն: Բոլոր մոտեցումները հիմնվում են վեկտորյան դասերի վրա՝ ընդարձակելով կամ սահմանափակելով դրանք: Ութերես մենք էլ չենք սխալվի, եթե ընդունենք 2. Վեկտորի առաջարկած

դասակարգումը, որը տրամաբանորեն ու տեսականորեն համընդհանուր է:

Ինչպես նկատեցինք, իրադարձությունների՝ որպես քերականական ուսումնասիրության օբյեկտներ հանդես գալը պայմանավորված է իմաստաբանական և շարահյուսական մոտեցումների փոխազդեցությամբ և համակցմամբ: Վերը ներկայացված հետազոտությունները զարգացնում են այն գաղափարը, որ բայիմաստը կարող է վերլուծվել իրադարձության կառուցվածքային նկարագրության միջոցով, որն էլ փաստում է, որ գոյություն ունեն բարդ իրադարձություններ՝ կազմված արտաքին ու ներքին իրադարձություններից: Իրադարձությունների տեսությունը ընդլայնելիս անխուսափելի է դառնում վերջինիս զուգակցումը հայեցակերպային դասերի հետ, ուստի հաջվի առնելով տարբեր հայեցակետային հիմնադրույթներ՝ իրադարձությունները կարող ենք սահմանել որպես այնպիսի գործողությունների հաջորդականություն, որոնք տեղի են ունեցել և ունենում են իրական աշխարհում:

**ԳԼՈՒԽ2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՄՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԿԱՂԱՊԱՐՈՒՄԸ**

2.1. Խոսույթի վերլուծությունը մտային կաղապարների հայեցակետից

Խոսույթը հասկացությունները կիրառվում է հանրային հաղորդակցությունը նշանակելու համար, որը տեղի է ունենում անհատների, խմբերի և հասարակական հաստատությունների միջև: Խոսույթը հաղորդակցության կարևորագույն և անբաժան մասն է, որը հանդես է գալիս որպես իմաստների, արժեքների, գաղափարների, մեկնաբանությունների և մտային այլ կառույցների կրող ու տարածող: Խոսույթին վերաբերող ժամանակակից տեսություններում գոյություն ունեն Խոսույթի ընկալման, վերլուծության և սահմանման տարբեր մոտեցումներ: Այս մոտեցումները կիրառվում է ինչպես բանավոր խոսքի, կենցաղային երկխոսությունների, այնպես էլ տեքստային տվյալների վերլուծության համար, իսկ տեքստը բարդ ամբողջություն է, որը գործառնում է որպես իմաստակառուցվածքային միասնություն: Ներկայումս ձևավորվել է Խոսույթի վերլուծության մի մոտեցում, որի տարբեր ուղղությունները կապված են առանձին գիտնականների ու դպրոցների հետ:

Գոյություն ունեն Խոսույթի վերլուծության տարբեր մեթոդիկաներ, մասնավորապես Տ. Գիվոնի՝ Խոսույթի և քերականության կապի ճանաչողական տեսությունը (Т. Givo' n 1983), Ու. Լաբովի և Ջ. Գամպերզի հոգելեզվաբանական Խոսույթ-վերլուծությունը (W. Labov 1986; J. Gumperz 1982), Լ. Պոլանիի Խոսույթի կառուցվածքի ընդհանուր մոդելը (L. Polani 1984), Տ. Դեյքի քաղաքական Խոսույթի վերլուծությունը (Т. Dijk 1985): Ժամանակակից լեզվաբանական տեսություններում Խոսույթի վերլուծությունը մի բնագավառ է, որն ընկալվում է որպես լեզվի կիրառության վերլուծություն: Լեզվի կիրառությունն ընդհանրապես և քաղաքական տեքստի կամ խոսքի ընկալումը

մասնավորապես վերլուծելի է այն տեսական նկարագրությունների շրջանակներում, որոնք մինչ օրս առաջարկվել են խոսույթի վերլուծության արդյունավետության համար (T. Dijk 1997:2; D. Goulding 2010:18): խոսույթի վերլուծության համագործակցային հայեցակետից քաղաքական հաղորդակցական իրադարձություններում ներառված են տարբեր մասնակիցներ, ինչպես օրինակ՝ հանրությունը, մարդիկ, քաղաքացիները: Այստեղից հաստատվում է այն հիմնադրույթը, որ խոսույթը հանրային գործընթացի և փոխազդեցության ձև է (J. Atkinson & J. Heritage 1984; D. Boden & H. Zimmennan 1991; T. Dijk 1985): Ամերիկացի հետազոտող Ջ. Ֆիսկեն լավագույնս ընդգծում է այն փաստը, որ խոսույթի ուսումնասիրությունը լեզուն որպես համակարգ նկարագրելը չէ, այլ այն վերլուծելն է որպես հասարակական գործընթաց՝ շեշտը դնելով լեզվի հասարակական գործառույթի վրա: Խոսույթը իմաստարտահայտելու շարունակական գործընթաց է, որը շրջանառվում է հասարակության մեջ: Չնայած խոսույթը կիրառվում է անհատապես, այնուամենայնիվ այն պատկանում է հասարակությանը, ուստի նրանք, ովքեր խոսույթի կրողներ են, հավանական է, որ կառուցում են հասարակական կամ քաղաքական դաշնություններ (J. Fiske 1996:6):

Քաղաքական խոսույթի վերլուծության շրջանակներում, սակայն, կարևոր տեղ է զբաղեցնում Տ. Դեյթի առաջարկած վերլուծական մեթոդը: Նա հիմնական շեշտը դնում է մի կողմից խոսույթի կառուցվածքի, մյուս կողմից՝ տեղեկատվության ընկալման ճանաչողական մեխանիզմների վրա: Տ. Դեյթը խոսույթը դիտարկում է որպես լեզվական ձևի, նշանակության և գործողության բարդ միասնություն (T. Dijk 2006:165):

Տ. Դեյթի վերլուծության մեջ կարևոր հասկացությունն է *մտային կաղապարը*՝ որպես տվյալ մշակույթում գիտելիքների ճանաչողական մեկնաբանման որոշակի համակարգ: Նագտկում է, որ խոսույթի հասարակական գործառույթը և ընկալումը, հետևաբար նաև արդյունավետությունն ու մեկնաբանությունը հիմնված են

հատուկ իրավիճակների մտային նկարագրության վրա: Պլանավորել գործողությունը նշանակում է կառուցել ապագայում կատարվելիք գործողությունների կադապարը (Т. Дейк 1989:141): Տ. Դեյքն այս կադապարները դիտարկում է որպես ճանաչողական մեկնաբանման վերաբերային հիմք: Այսինքն՝ հանգում ենք հասարակական տեսությունների այն գաղափարին, որ մարդիկ գործում են ոչ այնքան իրական աշխարհում և խոսում ոչ այնքան այդ իրական աշխարհի մասին, որքան իրականության երևույթների և իրավիճակների միջանձնային կադապարների մասին: Նման կադապարներն ընկալվում են որպես իրավիճակների, գործողությունների, իրադարձությունների ներկայացում իրավիճակային հիշողության մեջ: Լեզվակիրները ոչ միայն կառուցում և ձևավորում են իրադարձությունների կամ իրավիճակների կադապարներ, որոնցով հաղորդակցվում են, այլև ստեղծում են հաղորդակցական իրադարձություն, որին իրենք մասնակցում են:

Տ. Դեյքը նշում է, որ խոսույթը հոմանիշ է լեզվի հասարակական կամ հաստատութենական օգտագործմանը խոսքում, ուստի վերջինիս ներառում է հաղորդակցական իրադարձությունների երեք չափորոշիչներ.

1. Լեզվի կիրառում (խոսույթի ուսումնասիրությունը ներառում է լեզվագործածության միջարք ուղղություններ, ինչպես օրինակ՝ խոսույթի նշանագիտություն, խոսույթի ճարտասանություն, խոսույթի իմաստաբանություն և խոսույթի քերականություն):

2. Կարծիքների փոխանակում և ճանաչողություն (խոսույթի ուսումնասիրությունը հետազոտում է մտային կադապարների կառուցման եղանակները՝ փորձելով սահմանել հասարակական գիտելիքի արդյունավետության կանոններ: Այս մոտեցումը մեծապես հարում է ճանաչողական կամ հասարակական հոգեբանությանը):

3. Փոխազդեցությունն (խոսույթը կենտրոնանում է փոխազդեցության չափորոշի վրա, քանի որ այն հայտնվում է խոսքային ակտում և հաղորդակցական վերլուծությանն ենթում: Այստեղ արդեն գործունենալով և գաղափարախոսության հետ) (T. Dijk 1997:1-5):

Մտային կաղապարների գաղափարը սկզբնապես կիրառվել է ճանաչողական հոգեբանության բնագավառում, հետագայում այն ընկալվել է որպես թեմա հանդիսացող իրադարձությունների, իրավիճակների, գործընթացների դիպվածային հիշողություն, որոնց մասնակցում են անհատները (E. Ehrlich, H. Tardieu & M. Cavazza 1933): Տեքստին վերաբերող տեսությունն ենթում նմանատիպ կաղապարներին վերագրվում է կարևոր դեր, այն է՝ դրանք ծառայում են անհրաժեշտ հիմք մտքի կապակցման համար (J. Albrecht & E. O' Brien 1993):

Լեզուն գործածողները ոչ միայն կառուցում են հաղորդակցման ենթակա իրադարձության կամ իրավիճակի կաղապարը, այլև հենց հաղորդակցական իրադարձության կաղապարը, որին իրենք մասնակցում են: Այստեղ գործի է դրվում կաղապարների մի հատուկ տեսակ՝ *համատեքստային կաղապարը*: Խոսքային իրադարձությունը կամ իրավիճակը, այսինքն՝ համատեքստը, անհրաժեշտաբար չի տարբերվում այլ իրադարձություններից կամ գործողություններից, որին մասնակցում են մարդիկ: Համատեքստային կաղապարները, ըստ S. Դեյքի, վճռական դեր են կատարում խոսույթում և առհասարակ հաղորդակցական գործընթացում: Այս կաղապարները ներկայացնում են իրադարձություններ, իրավիճակներ, ինչպես նաև հաղորդակցման մասնակիցներ: Այսինքն՝ թերթ կարդալու ընթացքում ես կառուցում եմ տվյալ թերթի կաղապարը՝ նրա հոդվածների հեղինակներին, ինձ՝ որպես ընթերցողի, ինչպես նաև այլ համատեքստային առանձնահատկություններ, ինչպես օրինակ՝ տվյալ թերթը կարդալու նպատակը (T. Dijk 2000:193): Ըստ S. Դեյքի՝ համատեքստը բաղկացած է հետևյալ հիմնական կարգերից,

որոնցից յուրաքանչյուրն էլ կարող է ունենալ իր իսկ սխեմատիկ կառուցվածքը՝ «ենթակադապարները».

- միջավայր՝ տեղադրություն, խոսքային իրադարձություն, ժամանակահատված
- սոցիալական հանգամանքներ՝ նախորդ գործողությունները, սոցիալական իրավիճակը
- հաստատութենական շրջապատը
- գործողության ընդհանուր նպատակները
- մասնակիցները և նրանց սոցիալական դերերը
- իրավիճակային հարաբերությունները մասնակիցների միջև
- ընդհանուր (ոչ իրավիճակային) հարաբերությունները մասնակիցների միջև
- խմբային անդամակցությունը կամ մասնակիցների դերերը (սեռ, տարիք) (T. Dijk 2000:197)

Համատեքստային կադապարները իրավիճակային են, անձնային, ուստի և ներկայացնում են խոսքային իրադարձության կամ համատեքստի սուբյեկտիվ մեկնաբանություններ: Այսինքն՝ հաղորդակցության մասնակիցները սովորաբար պետք է կառուցեն միանման և համընկնող կադապարներ այն իրադարձության համար, որի մասնակիցն են, բայց նրանց կառուցած կադապարները թե՛ տեսականորեն, թե՛ գործնականորեն յուրօրինակ են և տարբերվող, քանի որ դրանք ունեն տարբեր նպատակներ, հեռանկարներ, կարծիքներ տվյալ տեքստի կամ խոսքի մասին: Համատեքստային կադապարների միջոցով մեկնաբանվում և հակադրվում են բավականին մեծ թվով իրադրային կառույցներ, և ցույց է տրվում, թե որքան կարևոր է սոցիալական իրադրությունն ու վերջինիս մեկնաբանությունը խոսույթի և հաղորդակցության համար: Համատեքստային կադապարները հատկապես համապատասխանում են քաղաքական խոսույթի ժանրերի բացահայտ (explicit) վերլուծության

յ ու ն ն եր ի ն : Ք աղ ա ք ա կ ան խ ս ու յ թ ի կ առ ու ց վ ա ծ ք ա յ ի ն ո Ր ո շ հ ա տ կ ան ի շ ն եր բ ա ց առ ի կ ե ն , ա յ ն ու ա մ ե ն ա յ ն ի վ , ա յ ն , ի ն չ ը առ ան ձ ն ա հ ա տ ու կ է բ ու լ ո Ր ի ն , ք աղ ա ք ա կ ան խ ս ք ի կ ա մ տ ե ք ս տ ի հ ի մ ն ա կ ան տ ա Ր Ր եր ն ե ն ՝ ը ն դ ի ա ն ու Ր բ ն ա գ ա վ առ ը , մ ա ս ն ա կ ի ց ն եր ի դ եր եր ը , ն ա ք ա տ ա կ ն եր ը , կ ա Ր ծ ի ք ն եր ը և գ գ ա ց մ ու ն ք ն եր ը :

Ճ ա ն ա չ ո ղ ա կ ան գ ո Ր ծ ը ն թ ա ց ն եր ը , ո Ր ո ն ք ն եր առ վ ա ծ ե ն հ ա մ ա տ ե ք ս տ ա յ ի ն և ի Ր ա դ Ր ա յ ի ն կ աղ ա ք ա Ր ն եր ի կ առ ու ց մ ան , ա կ տ ի վ ա ց մ ան , օ գ տ ա գ ո Ր ծ մ ան կ ա մ փ ո փ ո խ ու թ յ ան մ ե ջ , ռ ա գ մ ա վ ա Ր ա կ ան ե ն : Ա յ ս ի ն ք ն ՝ ն Ր ա ն ք մ ի գ ծ ի վ Ր ա ե ն , ն ա ք ա տ ա կ ա ու ղ ղ վ ա ծ , վ ա Ր կ ա ծ ա յ ի ն գ ո Ր ծ ո ղ ու թ յ ու ն ն եր ե ն , ո Ր ո ն ք և մ շ ա կ ու մ ե ն տ ա Ր բ եր մ ա կ ա Ր դ ա կ ն եր ի տ ե ղ ե կ ա տ վ ու թ յ ու ն ը (T. Dijk 1991:217):

Հ ա մ ա տ ե ք ս տ ա յ ի ն կ աղ ա ք ա Ր ն եր ը , ա յ ս ա փ ս ո վ , կ աղ ա ք ա Ր ու մ ե ն խ ս ք ա յ ի ն ի Ր ա դ ա Ր ծ ու թ յ ու ն ն եր ը : Դ Ր ա ն ք ն եր կ ա յ ա ց ն ու մ ե ն խ ս ք ի մ ա ս ն ա կ ի ց ն եր ի մ տ ա դ Ր ու -թ յ ու ն ն եր ը , ն ա ք ա տ ա կ ն եր ը , ս ա ք ա ե լ ի ք ն եր ը , կ ա Ր ծ ի ք ն եր ը տ վ յ ալ տ ե ք ս տ ի վ եր ա բ եր յ ալ , ի ն չ ա ե ս ն ա ն հ ա մ ա տ ե ք ս տ ա յ ի ն ա յ ն ա փ ս ի հ ա տ կ ան ի շ ն եր , ի ն չ ա փ ս ի ք ե ն ժ ա մ ան ա կ ը , վ ա յ Ր ը , հ ան գ ա մ ան ք ն եր ը և ի Ր ա վ ի ճ ա կ ա յ ի ն ա յ լ գ ո Ր ծ ո ն ն եր (T. Dijk 1991:220):

Մ ի ք ի չ ա վ ե լ ի բ ա Ր դ մ տ ա յ ի ն կ աղ ա ք ա Ր ն եր ե ն *ի Ր ա դ Ր ա յ ի ն կ աղ ա ք ա Ր ն եր ը*: Դ Ր ա ն ք ն եր կ ա յ ա ց ն ու մ ե ն խ ս ու յ թ ի ա ն հ ա տ ա կ ան մ ե կ ն ա ք ա ն ու թ յ ու ն ը , ա Ր դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ան մ տ ա յ ի ն ս կ գ բ ն ա կ ե տ ը և ա յ ն , թ ե ի ն չ ե ն հ ե տ ա գ ա յ ու մ հ ի շ ու մ մ ա Ր դ ի կ ա յ դ խ ս ու յ թ ի ց : Ի Ր «Ճ ա ն ա չ ո ղ ա կ ան հ ա մ ա տ ե ք ս տ ա յ ի ն կ աղ ա ք ա Ր ն եր ը և խ ս ու յ թ ը» հ ո դ վ ա ծ ու մ S. Դ ե յ ք ը խ ս ու մ է ի Ր ա դ Ր ա յ ի ն կ աղ ա ք ա Ր ն եր ի մ ա ս ի ն Ն շ ե լ ո վ , ո Ր խ ս ու յ թ ի ը ն դ ի ա ն ու Ր ի մ ա ս տ ը կ ա Ր ո ղ է կ առ ու ց վ ե լ ս խ ե մ ա տ ի կ կ առ ու յ ց ն եր ո վ (T. Dijk 1991:206): Ա յ ն տ ե ղ ե կ ա տ վ ու թ յ ու ն ը , ո Ր ն եր կ ա յ ա ց վ ու մ է ի Ր ա դ Ր ա յ ի ն կ աղ ա ք ա Ր ն եր ու մ ը ն դ ի ա ն Ր ա ց մ ան և վ եր ա ց ա Ր կ մ ան մ ի ջ ո ց ո վ , ս ո ց ի ալ ա կ ան ը ն դ ի ա ն ու Ր գ ի տ ե լ ի ք ի հ ի մ ք ն է : Հ ա ս կ ա ց ա կ ան մ ա կ ա Ր դ ա կ ու մ ա յ ս կ աղ ա ք ա Ր ն եր ը կ առ ու ց վ ու մ ե ն ա յ ն տ ե ղ ե կ ա տ վ ու թ յ ու ն ի ց , ո Ր ը ս եր ու մ է խ ս ու յ թ ի ց և ս ո ց ի ալ - մ շ ա կ ու թ ա յ ի ն գ ի տ ե լ ի ք ի ց : Ա յ լ կ եր ալ ա ս ա ծ ՝ խ ս ո ղ ն եր ը , կ առ ու ց ե լ ո վ ի Ր ե ն ց խ ս ք ի ի Ր ա դ Ր ա յ ի ն կ աղ ա ք ա Ր ը տ վ յ ալ

իրադարձությունն համար, արտահայտում են նաև իրենց կարծիքն ու համոզմունքները: Կադապարների ճանաչողական նկարագրությունները կարող են անմիջականորեն ուրվագծվել իմաստաբանական նկարագրություններով, և հիմնականում իմաստի միջոցով է, որ գաղափարախոսությունը ազդում է մնացած մակերեսային մակարդակների (շարահյուսություն, հնչյունաբանություն և այլն) վրա: Իրադրային կադապարները ներկայացնում են խոսույթի անհատական մեկնաբանությունը: Այն տեղեկատվությունը, որ պահվում է իրադրային կադապարներում, սոցիալական ընդհանուր գիտելիքի հիմքն է: Խոսույթը հենքային դեր է կատարում գաղափարախոսության արտահայտման համար, իսկ գաղափարախոսությունն էլ իր հերթին ազդում է խոսույթի կառուցվածքի տարբեր մակարդակների վրա, դա կլինի առոգանությունը, շարահյուսությունը, թե իմաստային բաղադրիչը: Քաղաքական խոսույթում այս գաղափարախոսությունները կադապարվում են քաղաքական գործչի կամ պետության սեփական գաղափարներով, վերաբերմունքով, համոզմունքներով: Սրանց հիմքով խոսողները կառուցում են տվյալ իրավիճակի համապատասխանող համատեքստային և իրադրային կադապարներ՝ դրանց շրջանակներում կադապարելով իրենց խոսքը: Ինչպես Ս. վան Դեյքն է հավաստում, խոսույթում կարող են լինել ոչ միայն տվյալ իրադարձության, իրավիճակի կադապարներ, այլև հենց այդ իրադարձության մասնակիցների խոսքի սոցիալական կադապարներ (T.Dijk 1999:135): Ս. Դեյքն այս կադապարները դիտարկում է որպես ճանաչողական մեկնաբանման վերաբերային (referential) հիմք (T. Dijk 1999:140): Թեև Ս. Դեյքը տվյալ խնդիրները քննարկում է ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից, սակայն չի անտեսում նաև հասարակական դերը: «Այլ կերպ ասած՝ հիշողությունը և ճանաչողությունը համարվում են նույնքան հասարակական, որքան մտավոր երևույթները» (T.Dijk 1999:146):

Խոսելով ցեղասպանության իրադարձությունների կադապարման մասին, օրինակ, կարող ենք ասել, որ երբ կարդում կամ


լսում ենք տեղեկություններ ցեղասպանության մասին՝ մեր մտքում ձևավորվում են հետևյալ կաղապարները.

ա. նոր փաստացի համոզմունքներ պատմական իրադարձությունների մասին,

բ. այդ համոզմունքները մեզ տրվում են ցեղասպանության մասին ընդհանուր տեղեկատվությամբ,

գ. կարեկցանքի զգացում զոհերի հանդեպ:

Իրադրային կաղապարները ներկայացնում են լեզուն օգտագործողների գիտելիքները խոսվող կամ գրված իրադարձության մասին: Ի հակադրություն իրադրային կաղապարների՝ համատեքստային կաղապարները տվյալ պատմական իրադարձության մասին խոսքի պահին ու խոսքին վերաբերող կաղապարներ են, այսինքն՝ դրանք ներկայացնում են ընթացիկ հաղորդակցական իրադարձությունը, որում *ես*-ը և *դու*-ն ներկայացված են որպես մասնակիցներ: Փաստորեն խոսույթի արդյունավետության համար պետք է ունենալ այսպիսի մի համակարգ.



Փաստորեն, իրադրային կադապարներն ավելի հարուստ են տեղեկատվությամբ քան պարունակում: Իրադարձության մասին ամենահայտնի տեղեկատվությունը մասնակիցների համար հնարավոր, որ լինի անհետաքրքիր, ոչ տեղին կամ արդեն հայտնի ու, հետևաբար, կարող է մնալ անորոշ: Սա նշանակում է, որ մեզ անհրաժեշտ է որոշակի տեղեկատվություն համատեքստային կադապարներում, որոնք կարող են մեկնաբանել նման չափանիշները:

2.2. Ամերիկյան քաղաքական խոսույթը 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ՝ մտային կադապարների հայեցակետից

Ամերիկայի Միացյալ Նահանգները, զբաղեցնելով առաջնային դիրք պետությունների քաղաքական դիրքորոշումներում, ցեղասպանության իրադարձություններին անդրադարձել ու անդրադառնում է քաղաքական և պետական տարբեր բանաձևերով, վճիռներով և ամենամյա ապրիլ քսանչորսյան Նախագահական ելույթներով: Սրանցից յուրաքանչյուրում հստակ արտահայտված են ԱՄՆ պետության քաղաքական դիրքորոշումները և գաղափարախոսությունը: *Ամերիկայի Միացյալ Նահանգները* հրապարակել է պաշտոնական տարբեր փաստաթղթեր, որոնք անդրադառնում են 1915 թվականի պատմական իրադարձություններին: 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ ԱՄՆ քաղաքական խոսույթում կիրառվող ռազմավարությունները սերտորեն առնչվում են համընդհանուր քաղաքական նպատակներին, որոնք և մատնանշում են ամերիկյան արժեքները: Ինչպես հայտնի է Տ. Դեյքի հոդվածներից, քաղաքական խոսույթը ճանաչողականորեն հարաբերում է քաղաքական բնագավառի տարբեր մակարդակներ և ուղղություններ: Հենքային մակարդակը ներկայացնում է քաղաքական գործիչների քաղաքական համոզմունքները, միջին մակարդակը հիմնվում է հենքային մակարդակի վրա, որն իր մեջ ներառում է քաղաքական խմբերն ու կազմակերպությունները,

ինչպես նաև նրանց համար ընդհանուր նկարագրությունները, հավաքական խոսույթը, հարաբերությունները և փոխազդեցությունները: Բարձր մակարդան իր մեջ ներառում է քաղաքական համակարգերը և վերջիններիս նկարագրությունները, խոսույթի կարգերը, սոցիալ-քաղաքական, մշակութային և պատմական գործընթացները: Անշուշտ, այս մակարդակները փոխկապակցված են այնպես, որ միկրո և մակրոմակարդակները կարծես հանդես են գալիս նրանցում միևնույն ժամանակ (T. Dijk 1995:383-400): Այսպես, ելույթ ունեցողը՝ որպես անհատ, արտահայտում է իր սեփական համոզմունքները յուրօրինակ ձևով և յուրօրինակ համատեքստում: Միևնույն ժամանակ այդ անձը խոսում է որպես կառավարության ներկայացուցիչ՝ արտահայտելով իր խմբի վերաբերմունքներն ու գաղափարախոսությունները: Եվս մի անգամ ապացուցվում է այն փաստը, որ քաղաքական ճանաչողականությունը տեսականորեն հանդիսանում է քաղաքական խոսույթի հիմքը:

1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ ԱՄՆ նախագահներն արտահայտում են իրենց վերաբերմունքը, ներկայացնում ԱՄՆ կառավարության և առհասարակ իրենց ազգի գաղափարախոսությունները: Կաղապարները կազմում են քաղաքական գործունեության ճանաչողական հիմքը և խմբի ու կազմակերպությունների ընդհանուր նկարագրությունների քաղաքական մակրոկառուցվածքները հարաբերում քաղաքական գործիչների գործունեությունների քաղաքական միկրոկառուցվածքին:

Ենթադրվում է, որ խոսողները սկսում են իրենց՝ տվյալ իրավիճակի և իրադարձության մտային կաղապարից: Այդ կաղապարները հիմնականում հիմնվում են հայ-թուրքական հարաբերությունների և 1915 թվականի ողբերգական ու ցավալի իրադարձությունների վրա: Վերջիններս արտահայտում են խոսողների սուբյեկտիվ վերաբերմունքը այդ ցավալի դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև նրանց կարծիքները:

Միացյալ Նահանգները ցեղասպանության իրականացման հենց առաջին տարիներից անդրադարձել է այդ իրադարձություններին պաշտոնական հայտարարություններով՝ Սենատի թիվ 12 համատեղ վճիռ-որոշում 1916թ., Սենատի թիվ 359 վճիռ-որոշում 1920թ.:

1965 թվականին հաջորդած ժամանակաշրջանում, երբ ԱՄՆ Կոնգրեսը և երկրի նախագահները սկսեցին անդրադառնալ Հայոց ցեղասպանության խնդրին առավել հետևողականորեն, ամերիկյան Նահանգները դրանից առաջ և հետո մեկը մյուսի ետևից ճանաչում ու դատապարտում էին 20-րդ դարում մարդկության դեմ գործած առաջին հանցագործությունը: Նահանգային օրենսդիր մարմինների բանաձևերում առավել մանրամասն էին ներկայացվում Հայոց ցեղասպանության սկիզբը, ընթացքն ու հետևանքները, ծավալներն ու պատճառները: 1915 թվականի իրադարձությունները մեծ հնչեղություն սկսեցին ունենալ, երբ 1965 թվականին ամերիկահայ համայնքը նշում էր Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը: Այդ թվականին հենց Կալիֆորնիա Նահանգի Օրենսդիր ժողովն ընդունեց Ասամբլեայի թիվ 274 բավական ծավալուն բանաձևը, որի մեջ ասված էր. « ... 50 տարի առաջ՝ 1915 թվականի ապրիլի 24-ին, Օսմանյան կայսրության կառավարությունը՝ իբրև Կենտրոնական դաշինքի երկրների դաշնակից, ձեռնամուխ է եղել հայ ազգի բնաջնջման համակարգային ծրագրին: ... 1915-1918 թթ. Թուրքական հոլոքոստի ընթացքում ողջ հայության կեսն իր բնակավայրերից քշվել է դեպի Սիրիայի անապատները և սպանվել կամ աննկարագրելի սարսափներ կրել: Մարդկության պատմության մեջ չի եղել ոչ մի իրադարձություն, որն այսքան հիմնովին գրավի աշխարհի ժողովուրդների սրտակցությունը, սակայն որն այսքան շուտ մոռացվի, ինչպես հայերի՝ թուրքերի կողմից կատարված ցեղասպանությունը » (State of California, The Legislature, Assembly Resolution 274, 1965):

Արդեն 1989 թվականից Հայոց ցեղասպանության թեման ավելի մեծ արձագանք գտավ ԱՄՆ-ում: Դա հիմնականում կապված էր 1988-1990թթ. Խորհրդային Հայաստանում ծավալված ազգային-

Ժողովրդավարական շարժման և Հայաստանի՝ Խորհրդային Միության կազմից դուրս գալու հետևողական քաղաքականության հետ: 1989 թվականին ԱՄՆ կոնգրեսում սկսեցին շրջանառվել Ներկայացուցիչների պալատի թիվ 36 համառոտ, Ներկայացուցիչների պալատի թիվ 417 համառոտ և Սենատի թիվ 212 համառոտ բանաձևերը և դրանց շուրջ ծավալվող քննարկումներ:

Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունները և ամենամյա նախագահական ուղերձները քաղաքական խոսույթի տեսանկյունից ներկայացնում ենք հետևյալ կերպ.

Սենատի թիվ 12 համառոտ վճիռ-որոշում, 1916թ.

Whereas the people of the United States are deeply impressed by the deplorable conditions of insecurity, starvation, and misery now prevalent in Armenia (US Senate Concurrent Resolution 12)–Նկատի ունենալով, որ Միացյալ Նահանգների ժողովուրդը խորապես ցնցված է Հայաստանում տիրող անապահովության, սովի, տառապանքի սարսափելի պայմաններից:

Այստեղ հստակ արտահատված է ԱՄՆ գաղափարախոսական կադապարը՝ Միացյալ Նահանգները խորապես ցնցված է ներկայումս Հայաստանում առկա քաղցի, անապահովության, դժբախտության պայմաններից: Նշված իրադարձությունները կկադապարվեն հետևյալ կերպ

Համառոտ քստային կադապար՝ խոսքային իրադարձություն:
Փետրվար, 1916 սենատի համառոտ որոշում: Սույն վճռում կառուցվում է համառոտ քստային մի կադապար՝ խոսքային իրադարձություն, որը տեղի է ունենում 1916 թվականի փետրվարի 10-ին և իր արտահայտումն է գտել Սենատի 12-րդ համառոտ որոշման մեջ: Խոսույթն իրականանում է Ներկայացուցիչների պալատում, մասնակիցներն են 64-րդ համագումարի առաջին նստաշրջանին ներկա անձինք:

Պատմական իրադարձություն: Այդ ժամանակաշրջանում Հայաստանում առկա է անապահովության, քաղցի, դժբախտության

թշվառ իրավիճակ: Իրադրային կաղապարը կառուցվում է Միացյալ Նահանգների ընդհանրական գաղափարախոսությամբ՝ *մենքի* անունից: Այն կաղապարվում է Միացյալ Նահանգների՝ տվյալ իրադարձության վերաբերյալ ունեցած վերաբերմունքի ու կարեկցանքի մտային կաղապարով (*..the people of the United States of America have learned with sorrow of this terrible plight of great numbers of human beings and have most generously responded to the cry for help whenever such an appeal has reached them.*): Մեծաքանակ մարդկանց այդ թշվառ կացությունը մեծ վիշտ և տխրություն է պատճառել Միացյալ Նահանգների ժողովրդին, և նրանք մեծահոգաբար առաջարկում են իրենց օգնությունը:

Սենատի թիվ 359 վճիռ-որոշում, 1920թ.

Սենատի այս վճռի խոսույթում առկա է հաղորդակցական նույն իրավիճակը, այսինքն՝ կա խոսքային իրադարձություն, որտեղ ներկայացված համատեքստային կաղապարը ներառում է խոսույթի իրականացման վայրը՝ Միացյալ Նահանգների Սենատ, տարեթիվն ու ամսաթիվը՝ մայիսի 11, 1920 թվական: Վճիռը հրապարակել է արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ պարոն Յարդինգը: Իրադրային կաղապարում սույն պատմական իրադարձությունները ներկայանում են որպես կոտորածներ և այլ դաժանություններ ու անգթություններ, որոնց հետևանքով տառապել են հայերը (*...the Senate of foreign relations have clearly established the truth of the reported massacres and other atrocities from which the Armenian people have suffered...*) (U.S Senate resolution 359):

Ներկայացուցիչների պալատի թիվ 148 համատեղ բանաձև

Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների Պալատի թիվ 148 համատեղ բանաձևում համատեքստը կաղապարում է այն հաղորդակցական իրադարձությունը, որտեղ, ըստ միացյալ որոշման, ապրիլի 24-ը պետք է հիշել որպես «Մարդու անմարդկայնությունը մարդու նկատմամբ ազգային հիշատակման օր»: Սույն խոսքային իրադարձությունը տեղի է ունենում 1975 թվականի ապրիլի 9-ին, Միացյալ Նահանգների սենատում: (*...Resolved by the Senate and House of Representatives of the United States of*

America in Congress Assembled, that April 24, 1975, is hereby designated as “National Day of Remembrance of Man’s Inhumanity to man” and the President of the United States is authorized and requested to issue a proclamation calling upon the people of the United States to observe such day as a day of remembrance for **all the victims of genocide**, especially those of **Armenian ancestry who succumbed to the genocide perpetrated in 1915....)**

1915 թվականի իրադարձությունները հիմք են հանդիսացել սույն վճռի համար, որը դրանք որակել է որպես *մարդու անմարդկայնության մարդու նկատմամբ (մարդու դեմ կատարված հանցագործություն)*: Խոսքային իրադարձությունը տանում է պատմական իրադարձությունների քննարկմանը՝ 1915 թվականի ցեղասպանության զոհերի հանգամանքին: Այդ իրադարձության ժամանակ ոչ նշանակվել ու մահացել են հայոց նախնիները:

Իսկ 2007 թվականի հունվարի 30-ին **ՄՄՆ 110-րդ համաժողովում** ժողովրդավարական կուսակցության կոնգրեսական Ադամ Շիֆի կողմից ներկայացված Հայոց ցեղասպանության մասին որոշման մեջ, որը պաշտոնապես կոչվում է նաև H. Res. 106, տեղ են գտել հետևյալ իրադարձությունները՝ *Affirmation of the United States Record on the Armenian Genocide Resolution - Calls upon the President: (1) to ensure that U.S. foreign policy reflects appropriate understanding and sensitivity concerning issues related to human rights, ethnic cleansing, and genocide documented in the U.S. record relating to the Armenian Genocide and the consequences of the failure to realize a just resolution; and (2) in the President's annual message commemorating the Armenian Genocide to characterize the systematic and deliberate annihilation of 1.5 million Armenians as genocide, and to recall the proud history of U.S. intervention in opposition to the Armenian Genocide.)*

Սույն իրադարձությունը կառուցվում է համատեքստային մի կադապարով, որը ներկայացնում է Միացյալ Նահանգների արձանագրության հաստատումը Հայոց ցեղասպանության որոշման վերաբերյալ: Վերջինիս խոսքային իրադարձությունը ներառում է այն համատեքստը, որում տեղի է ունենում սույն իրադարձությունը՝ 110-րդ համաժողով, 2007 թվական, հունվարի 30, որը հղված է նախագահին: Իսկ իրադրային կադապարում, ի

հավել ու մն ամբողջական իրադարձությունը կարող ենք առանձնացնել երկու ենթաիրադարձություն՝ ըստ որոշման երկու ենթակետերի:

Ենթաիրադարձություն 1

Խոսքային իրադարձություն: Ներկայացնող՝ Ադամ Շիֆ, թիվ 110 համաժողով, հունվարի 30, 2007 թ., ԱՄՆ արտաքին քաղաքականության ընդհանուր դիրքո-րոշումները, ազգի վերաբերմունքը մարդու իրավունքների պահպանման, էթնիկական խտրականությունների և ցեղասպանությունների վերաբերյալ արձանագրությունները՝ հատկապես մատնանշելով Հայոց ցեղասպանությունը:

Ենթաիրադարձություն 2

Համատեքստային կադապար: Խոսքային իրադարձությունը նույնանում է առաջին ենթաիրադարձության մեջ ներկայացված համատեքստային կադապարի հետ, քանի որ ողջ իրադարձությունը ներկայացվում է նույն հանգամանքներում և նույն անհատի կողմից միայն մի հավելմամբ, որ այստեղ խոսքային ակտը ուղղվում է նախագահին:

ԱՄՆ՝ ցեղասպանության վերաբերյալ որոշումներում և արձանագրություններում մեծապես շեշտվում է նախագահների՝ սույն հարցի վերաբերյալ դիրքորոշումների կարևորությունը և վերջիններիս ամենամյա ապրիլ քսանչոսրսյան ելույթների կարևորությունը իրենց որակմամբ այս դաժան ու վայրագ իրադարձությունների վերաբերյալ (...to ensure that U.S. foreign policy reflects appropriate understanding and sensitivity concerning issues related to human rights, ethnic cleansing, and genocide **documented in the U.S. record relating to the Armenian Genocide and the consequences of the failure to realize a just resolution; and (2) in the President's annual message commemorating the Armenian Genocide to characterize the systematic and deliberate annihilation of 1.5 million Armenians as genocide, and to recall the proud history of U.S. intervention in opposition to the Armenian Genocide** - H. Res. 106):

Տարբեր ժամանակաշրջաններում ԱՄՆ բոլոր նախագահները իրենց նախագահության օրոք ցեղասպանության յուրաքանչյուր

տարել իցին ընդամենը կառուցում են իրենց դիրքորշումների մտային կաղապարը 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ՝ արտահայտելով իրենց անձնական վերաբերմունքը, կարծիքները, ինչպես նաև *մենքի՝ ԱՄՆ* ազգի գաղափարախոսությունը սույն իրադարձությունների վերաբերյալ (Today **we** remember a great tragedy of the twentieth century: the deportations and massacres of roughly one and a half million Armenians in the final years of the Ottoman Empire. **I join** Armenians around the world, including the Armenian-American community, in mourning the loss of those innocent lives – W.Clinton, 2000; On this day of remembrance, **we** honor the memory of the victims of one of the greatest tragedies of the 20th century, the mass killings and forced exile of as many as 1.5 million Armenians at the end of the Ottoman Empire- G.W.Bush 2008; Each year, **we** pause to remember the 1.5 million Armenians who were subsequently massacred or marched to their death in the final days of the Ottoman Empire. The Meds Yeghern must live on **in our memories, just as it lives on in the hearts of the Armenian people**-B.Obama 2015):

Այսպես, ԱՄՆ նախագահ **Վուդրո Քլիմա Վիլսոնը** 1918 թվականին հանդես եկավ 14 կետեր պարունակող խաղաղության ծրագրով՝ ի նպաստ ճշված և իրավագուրկ ժողովուրդների: 1919-20 թթ. նա բազմիցս անդարդարծել է հայերին, Հայաստանին և Հայոց ցեղասպանությանը վերաբերող հարցերի: Ներկայացուցիչների պալատի 66-րդ համաժողովի երկրորդ նստաշրջանում, մայիս 24, 1920 թվական, ընթերցվում է Հայաստանի հանձնակատարությունը ստանձնած նախագահ Վ.Վիլսոնի ուղերձը, որտեղ քննարկվում է Հայաստանի սահմանների հարցը և Հայոց ցեղասպանությունը: Այս ամենը մեր ուսումնասիրության շրջանակներում ներկայացվում է *խոսքային իրադարձության* մեջ, որտեղ ճշված են համատեքստը և հանգմանքները, որոնցում տեղի է ունենում իրադարձությունը՝ 1915 թվականի պատմական իրադարձությունների վերաբերյալ: Սույն ուղերձում իրադարձությունները կաղապարվում են հետևյալ հաջորդականությամբ.

1. Կոտորածների և գազանությունների հետևանքով հայ ժողովրդի տառապանքը (Whereas the testimony adduced at the hearings

conducted by the subcommittee of the Senate Committee on Foreign Relations have clearly established the truth of the reported massacres and other atrocities from which the Armenian people have suffered):

Համառոտաբար ինչ կադապարում ներկայացված խոսքային իրադարձություններ ներառում է այն լսումների վկայություններ, որոնք իրականացվել են Սենատի հանձնաժողովի արտաքին հարաբերությունների ենթահանձնաժողովի կողմից: Խոսքային իրադարձության մեջ ընդունվում է կոտորածների ճշմարտությունը, իսկ իրադարձային կադապարը ներկայացվում է հենց այդ կոտորածներով, դաժանություններով, որոնց արդյունքում հայ ժողովուրդը տառապել է:

2. Անապահովության, սովի և թշվառության պայմանները, որ առկա են Հայաստանում (Whereas the people of the United States are deeply impressed by the deplorable conditions of insecurity, starvation, and misery now prevalent in Armenia):

Համառոտաբար ինչ կադապարում ներկայացված խոսքային իրադարձություններ կադապարվում է Միացյալ Նահանգների վերաբերմունքով, որում արտահայտված է վերջինիս խոր ցավակցությունը հայաստանյան իրադարձությունների վերաբերյալ, իսկ իրադարձային կադապարում տեղ են գտել սովի, անապահովության, թշվառության իրադարձություններ, որոնք առկա են Հայաստանում:

Կարևորելով փոխնախագահ **Ջ. Ֆորդի** ուղերձը ցեղասպանության 50-րդ տարելիցի կապակցությամբ՝ այն փորձել ենք ներկայացնել համառոտաբար ինչ մի կադապարով, որով նա դիմում է ներկայացուցիչների պալատին՝ իրելույթի խոսքային իրադարձություններ կադապարելով ցեղասպանության 50-րդ տարելիցի *խառն զգացմունքներով*: Տեղի է ունեցել ցեղասպանության իրադարձություն. նախագահի ուղերձում այդ ցեղասպանությունը որակվում է որպես թուրքիայի կողմից կատարված ցեղասպանություն հայ ժողովրդի նկատմամբ: Համառոտաբար ինչ կադապարում ներկայացված խոսքային իրադարձության մեջ նախագահը հիշում է այդ պատմական

իրադարձությունը մեծ վշտով: Նկատենք, որ Նախագահի խոսույթում, ինչպես բնորոշ է ԱՄՆ ազգին, վերաբերմունքը և զգացմունքները արտահատվում են ԱՄՆ գաղափարախոսական *մենք*-ի կադապարում (*In taking notice of the **shocking events** in 1915, we observe this anniversary with sorrow in recalling **the massacres** of Armenia...*):

ԱՄՆ Նախագահ Վուդրո Վիլսոնի՝ Կոնգրեսում տապալված Նախաձեռնությունից հետո (1920 թվական) Հայոց ցեղասպանության թեմային լրջագույնս անդրադառնում է ԱՄՆ 39-րդ Նախագահ Ջիմմի Բարտերը 1978 թվականի մայիսի 16-ի ընդունելության ժամանակ: Նրա ուղերձի համատեքստային կադապարում ներկայացված են խոսքային իրադարձության և այն կադապարներն ողջ ուղերձի միայն մի Նախադասությունն է հպանցիկ ներկայացնում իրադրային կադապար: Ըստ Նախագահի ուղերձի՝ ունենում ենք իրադարձությունների արտապատկերման հետևյալ կադապարները.

խոսքային իրադարձությունը: Ամերիկահայության պատվին կազմակերպված ընդունելությունն, մայիսի 16, 1978 թվական, հայերի ունեցած ներդրումները ԱՄՆ ազգի կատարելագործման համար, Քրիստոնյա ազգի նկատմամբ ունեցած սրտակից վերաբերմունքն ու ցավակցությունը: Ջ. Բարտերի համար հիմք են ծառայել 1915-1920 թվականների փաստաթղթերը, որոնցում շեշտը դրվում է հայերի քրիստոնյա ազգ լինելու հանգամանքի վրա (..I feel close to you because you were the first Christian people, first Christian nation and because of that, your deep religious beliefs, I doubt that any other people have ever suffered more): Ջ. Բարտերից հետո, այնուամենայնիվ, Նախագահ Ռ. Ռեյգանը 1981 թվականի ապրիլի 22-ի Հոլոքոստի զոհերի հիշատակին նվիրված հայտարարության մեջ խոսում է բուն իրադարձության մասին՝ կիրառելով *ցեղասպանություն* եզրույթը: Նախագահ **Ռ. Ռեյգանի** ուղերձը կադապարվում է համատեքստային մի կադապարով, որում խոսքային իրադարձության մեջ ներկայացված են 1981 թվականի ապրիլի 22-ի 4838 հայտարարությունը և հոլոքոստյան զոհերի հիշատակման օրը: Նախագահն իր ուղերձում ներկայացնում է ընդհանրացված

իրադարձություններ՝ միլիոնավոր մահեր, անմարդկային դիակիզումներ, գազային հարձակումներ: Իր խոսույթում տեղ գտած խոսքային իրադարձության մեջ նակարեկցանքով խոսում է հոլոքոստյան աղետի մասին՝ նշելով, որ Յոլոքոստի դասերը չպետք է մոռացվեն, և դա կադապարում է 1915 թվականի իրադարձությունների մասին հիշատակմամբ՝ հայ ժողովրդի ցեղասպանությունը Յոլոքոստից առաջ, իսկ մյուս մասում՝ կամբոջացիների ցեղասպանությունը Յոլոքոստից հետո: (“The Congress of the United States established the United States Holocaust Memorial Council to create a living memorial to the victims of the Nazi Holocaust”.....Like the Genocide of the Armenians before it and the genocide of the Cambodians which followed it – and like too many other such persecutions of many other peoples – the lessons of the Holocaust must never be forgotten”.)

Հարկ է նշել, որ նախագահ Ռ. Ռեյգանի ուղերձում օգտագործված *Հայոց ցեղասպանություն* ն ձևակերպումը ամենևին էլ հիմք չհանդիսացավ ամերիկյան գործադիր իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու այդ գործընթացի ավարտին: Նրան հաջորդող նախագահ Ջ. Բուշ-ավագը չհետևեց վերջինիս օրինակին, այնուամենայնիվ նա ԱՄՆ նախագահներից առաջինն էր, որը ապրիլյան օրերին հանդես է եկել հատուկ հայտարարությամբ և դրանով սկիզբ դրել արդեն ավանդույթ դարձած ամենամյա ապրիլ քսանչորսյան ուղերձներին: Ցեղասպանության 75-րդ տարելիցի կապակցությամբ Բուշ-ավագը ապրիլի 20-ին հրապարակում է հատուկ հայտարարություն, որի անվանումը դառնում է մինչ օրս կիրառվող հայտարարությունների պաշտոնական անվանումը՝ Հայոց հիշատակման օր (Armenian Remembrance day): Բուշ-ավագի ուղերձը կադապարվում է մի համառոտ քստով, որում խոսքային իրադարձությունը ներկայացնում է ապրիլի 20-ը, 1990 թվականը և Հայոց հիշատակման օրը: խոսքային իրադարձության մեջ ներկայացվում է նախագահի և Ամերիկայի Միացյալ Նահանգների վերաբերմունքն ու կարծիքը հայ ժողովրդի ունեցած ավանդի վերաբերյալ: Կարող ենք ասել,

որ նախագահի ուղերձը ևս վերահսկվում է գաղափարախոսության կողմից, քանզի այս ելույթը նա կառուցում է Ամերիկայի Միացյալ Նահանգների անունից ու որոշակիորեն ներկայացնում է այդ ազգի արժեքներն ու նորմերը: Նախագահն իր ելույթը կադապրում է իրադրային երկու կադապրներով. մեկը հիմնվում է 1988 թվականի երկրաշարժի դեպքերի վրա, իսկ մյուսը՝ 1915-1923 թվականների սարսափելի կոտորածների վրա (**“Those tragedies include the Earthquake of 1988, and most prominently, the terrible massacres suffered in 1915-1923 at the hands of the rulers of the Ottoman Empire”**): Նախ և առաջ նախագահի խոսույթում տեղ գտած խոսքային իրադարձության մեջ ներկայացվում է հայ ժողովրդի պատմությունը՝ ցավով մատնանշելով այն *ողբերգությունները, որոնք ապրել է հայ ժողովուրդը*: Նախագահն իր ուղերձում Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից իրականացրած քաղաքականությունն անվանում է «մարդկության դեմ հանցագործություն»:

Նախագահ Ջ. Բուշին հաջորդող **Բիլ Բլիթթոնի** ամենամյա ուղերձները ավելի հպանցիկ են անդրադառնում ցեղասպանության թեմային՝ առավելապես կենտրոնանալով Հայաստանի Հանրապետության ապագայի վերաբերյալ ԱՄՆ ունեցած տեսլականի վրա և վերաբերելով անկախ պետականության, ազատական տնտեսության, հարևանների, մասնավորապես Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու, դարաբաղյան հակամարտությունը խաղաղ ճանապարհով կարգավորելու գործում ԱՄՆ՝ Հայաստանին սատար կանգնելու պատրաստակամության մասին: Նրա նախագահական ելույթները ներկայացվում են անձնական մտային կադապրով, որը ներկայացնում է ԱՄՆ (*իրենց*) ցավակցական ու կարեկից վերաբերմունքը: Համատեքստային կադապրը, որը կադապրում է այդ վերաբերմունքն ու ազգային գաղափարախոսությունը, խոսքային իրադարձության մեջ ներառում է Հայոց հիշատակման օրը և համապատասխան թվականները (**“On this solemn day, I join Armenians from around the world in remembering the victims of the 1915 massacres in the**

Ottoman Empire"): Նախագահ Քլ ինթոնն իր ելույթի անձնական մտային կաղապարի շրջանակներում հայ ությանը կոչ է անում կառուցել ու մի աշխարհ, որտեղ պարզապես անթույլատրելի է, որ նման իրադարձություններ պատահեն: Լայն իրադրային կաղապարին զուգահեռ՝ Բ. Քլ ինթոնը կառուցում է ևս մի նեղ կաղապար, որում ներկայացված են Հայաստանի և նրա հարևան երկրների հարաբերությունները ("The united States fully supports the efforts of Armenia and its neighbors to make lasting peace with one another and to begin the era of security and cooperation in the Caucasus region"):

Բ. Քլ ինթոնի վարած քաղաքականությունը զարգացրեց ԱՄՆ հաջորդ նախագահ կրտսեր **Ջ. Բուշն** իր ամենամյա նախագահական ուղերձներում: Դրանցում առավել մանրամասն անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրին՝ նախագահը շարունակաբար խուսափում էր ցեղասպանության շուրջ կենտրոնանալ ու ցեղասպանություն եզրույթի կիրառումից: Նախագահի ուղերձները կաղապարվում են վերջինիս անձնական մտային կաղապարով՝ վերաբերմունքով: Ջ. Բուշի ապրիլի 19-ի 2004 թվականի նախագահական ուղերձներում կարող ենք առանձնացնել իրադարձություններ, որոնք ներկայումս են որպես առանձին ենթաիրադարձություններ, որոնք կատարվել են հայ ժողովրդի հետ: Այդ իրադարձությունները պարունակում են բռնի տեղահանություններ, բնաջնջում, մարդասպանություն, մասսայական սպանություններ: Ջ. Բուշը իր 2004 և 2005 թվականի ելույթները կաղապարում է ևս մի իրադրային կաղապարով՝ 1991 թվականի անկախության և Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ՝ արտահայտելով իր սուբյեկտիվ համոզմունքներն ու կարծիքը ("Today, our Nation remains committed to a peace settlement in the Nagorno-Karabakh conflict and is grateful for Armenia's continuing cooperation in the war on terror"/2004/ "We remain committed to a lasting and peaceful settlement of the Nagorno-Karabakh conflict"/2005/):

Ներկայիս նախագահ **Բ. Օբամայի** դերը ցեղասպանության ճանաչման գործընթացում խոստումնալից չէր, քանի որ նա չկատարեց իր նախընտրական քարոզարշավներում տված խոստումը

և իր ուղերձներում 1915-1923թթ. իրադարձություները չանվանեց ցեղասպանություն: Նրա ուղերձները շարունակաբար կաղապարվում են տարիներ առաջ տեղի ունեցած դժան իրադարձություների վերաբերյալ անձնական մտային կաղապարներով: Համառոտապես ինչ կաղապարում ներկայացված են նախագահի պաշտոնավարած համապատասխան թվականները, ուղերձի ամսաթվերը և հանգամանքները: Ինչպես գրեթե բոլոր նախագահների ելույթներում, այստեղ ևս համառոտապես ինչ կաղապարում առկա խոսքային իրադարձության մեջ ներկայացված են հայ-ամերիկյան համայնքին վերաբերող դրույթներ և տվյալ իրավիճակին վերաբերող խոսքային իրադարձություներ: Ուշագրավ է, որ բարդ իրադարձության մեջ հանդես եկող պատմական իրադարձություներին Բ. Օբաման տալիս է *վատագույն կամ մեծ դժանություն* անունները՝ որպես խոսքային իրադարձություն (1.5 million Armenians were massacred or marched to their death in the final days of the Ottoman Empire; Each year, we pause to remember the 1.5 million Armenians who were subsequently massacred or marched to their death in the final days of the Ottoman Empire): Ելույթների երկրորդ մասում Բ. Օբաման կառուցում է անձնական մտային կաղապար, որում փորձում է վարել հաշտեցման քաղաքականություն: Փորձում է հաշտության եզրեր մշակել Հայաստանի և Թուրքիայի միջև՝ այդպիսով գերծմնալով կողմնապահությունից: Նա իր ելույթում արտահայտում է իր վերաբերմունքը Մեծ եղեռնի ժամանակ զոհվածների հիշատակի վերաբերյալ, և իր ուղերձում բնութագրում է հայ ժողովրդի ունեցած ավանդը, ձիրքը, տոկունությունը, ինչպես նաև ամերիկահայ համայնքի ունեցած ներդրումն իրենց պետության զարգացման գործում ("The United States of America is a far richer country because of the many Americans of Armenian descent who have contributed to our society, many of whom immigrated to this country in the aftermath of 1915". Today, I stand with them and with Armenians everywhere with a sense of friendship, solidarity, and deep respect.):

Փաստորեն ԱՄՆ քաղաքական գործիչները թե՛ սենատի վճիռ-բանաձևերում, թե՛ նախագահական ուղերձներում 1915 թվականի

իրադարձությունների վերաբերյալ նախև առաջ արտահայտում են իրենց սուբյեկտիվ վերաբերմունքը այս ցավալի իրադարձությունների վերաբերյալ, ինչպես նաև իրենց կարծիքներն ու համոզմունքները: Այս ամենը պարփակվում է ԱՄՆ ազգի գաղափարախոսությանը, որը հստակ երևում է նախագահների կիրառած բառապաշարային միավորներից, և որը թույլ է տալիս եզրակացնելու, որ ԱՄՆ ազգը միասնական ազգ է, որից էլ հենց բխում է ԱՄՆ-ի՝ համաշխարհային առաջնորդ և ժողովրդավարական երկիր լինելը:

2.3. Տեղասպանության ճանաչման խոսույթային ռազմավարությունները: ԱՄՆ խուսանավոր խոսույթ

Օսմանյան կառավարության կողմից իրականացված Չայոց ցեղասպանության փաստը հիմնավորվել, ճանաչվել ու հաստատվել է ականատեսների վկայություններով, օրեքներով, բանաձևերով և բազմաթիվ նահանգների ու միջազգային կազմակերպությունների որոշումներով: Չայոց ցեղասպանությունը միջազգային հանրության կողմից դատապարտվել է տարբեր մակարդակներով: Չայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացները շարունակական ու նպատակային են, իսկ սա պահանջում է, որ վերլուծվեն ու վերհանվեն այն եղանակները, որոնք ներկայացնում, լուսաբանում և մեկնաբանում են դարի անասելի դաժան իրադարձությունները: Այստեղ արդեն գործ ենք ունենում քաղաքական խոսույթի արդյունավետության և դրա տարբեր եղանակների հետ: Ինչպես արդեն նշել ենք, խոսույթի արդյունավետության համար խոսողները կառուցում են իրենց անձնական մտային կաղապարները տվյալ իրադարձության վերաբերյալ: Այդ կաղապարները ներկայացնում են խոսողների սուբյեկտիվ համոզմունքները և կարծիքները: Տ. վան Դեյքը նշում է, որ քաղաքական իրավիճակները ոչ թե պատճառ են

հանդիսանում, որ քաղաքական գործիչները խոսեն որոշակի ձևերով, այլ «անհրաժեշտ է մի համատեքստ, այսինքն՝ տվյալ իրավիճակի և տեքստի ճանաչողական համագործակցություն» (T .Djik 2006:733): Նմանատիպ համատեքստերը սահմանում են այն եղանակները, որոնցով մասնակիցները փորձարկում, մեկնաբանում և նկարագրում են քաղաքական իրավիճակի համապատասխան հայեցակետերը:

Քաղաքական խոսույթի էզվաբանական վերլուծությունները և հատկապես քաղաքական ելույթների մեկնաբանությունը կարող ենք հաջողված համարել, եթե էզվաբանական վարքագիծը հարում է քաղաքական վարքագծին: Սակարող է արվել երկու մոտեցմամբ. առաջին՝ կարող ենք սկսել էզվաբանական միկրոմակարդակից՝ ներկայացնելով, թե ինչ ռազմավարական գործառույթներ են իրականացնում որոշակի կառույցները (օրինակ՝ բառերի ընտրություն, հատուկ շարահյուսական կառուցներ և այլն): Համատապասխանաբար կարող ենք սկսել նաև մակրո մակարդակից, այսինքն՝ հաղորդակցական իրավիճակից և տեքստի հիմնական գործառույթից՝ ներկայացնելով, թե ինչպիսի էզվական կառույցներ են ընտրված տվյալ գործառույթի իրականացման համար: Նկատի առնելով վերոնշյալը՝ էզվիկիրառությունը, խոսույթը, խոսքային փոխազդեցությունը և հաղորդակցությունը, կգետեղենք միկրոմակարդակի մեջ, իսկ ուժը, իշխանությունը, հասարակական խմբերի միջև անհավասարությունը բնորոշ են մակրոմակարդակի վերլուծություններին:

Վերջին ժամանակներում ճարտասանության բնագավառում ակնառու փոփոխություններ տեղի ունեցան: Առաջ եկավ պրագմատիկ եկտիկականվամբ մի տեսություն, որը զարգացրել են դանիացի հետազոտողներ Ֆ.Էմերենս և Ռ. Գրութենդորսթը (F.Eemeren & R.Grootendorst 2004:52-53): Այս տեսությունը անմիջականորեն կապված է ձևական դիալեկտիկայի հետ, բայց միևնույն ժամանակ ամբողջովին տարբեր է: Տարբերությունն արտահայտված է ձևական (\$որմալ) և գործաբանական (պրագմատիկ)

եզրույթների փոփոխության մեջ: Գործաբանական հայեցակետից բանավեճը ընկալվում է որպես սովորական խոսույթային երևույթ, որը պետք է ուսումնասիրել խոսքային ակտերի տեսության գրայնային և եզրակալիչ խոսքայության և խոսույթի վերլուծության հայեցակետերից (P. Grice P., 1975):

Չնայած դիալեկտիկան և ճարտասանությունը միջտիանդես են եկել փոխկապակցված, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում այդ կապը խզվել է: Այս տարանջատումը հանգեցրել է երկու առանձին հարացույցների գոյությանը, որոնք ամբողջովին տարբեր դիտակետերից են մոտենում բանավեճին: ճարտասանության ուսումնասիրությունը ամբողջովին հիմնականում զբաղվում են հումանիտար ոլորտի հետազոտողները. այն գերազանցապես հետաքրքրում է մշակութային և գրական ուսումնասիրություններ կատարողներին: Ի հակադրություն նրա՝ դիալեկտիկան հիմնականում գտնվում է տրամաբանական հետազոտությունների շրջանակներում: Վերջերս, սակայն, միտումներ են նկատվում վերականգնելու այս երկու ուղղությունները բանավեճային խոսույթի տեսանկյունից, որը հակված է հասնելու ոչ միայն ճարտասանական, այլև դիալեկտիկական նպատակների: Սա, անշուշտ, ցանկալի է, քանի որ ուսումնասիրության այս երկու անկյունների մեկտեղումը կհանգեցնի բավականին հետաքրքիր հետազոտությունների: Հենց արագմադիալեկտիկական տեսության շրջանակներում է, որ խուսանավող խոսույթը դրսևորում է իր բնորոշ կողմերը: Քաղաքական խոսույթում խուսանավող ռազմավարությունները կիրառվում են հիմնականում ճարտասանական և դիալեկտիկական նպատակներին հասնելու համար: Քաղաքական խոսույթին առհասարակ բնորոշ է իմաստային անորոշությունը. դա պայմանավորված է իմաստաբանական և գործաբանական միջարք գործոններով: Իմաստաբանական գործոններից են վերացական նշանակությունը, բազմիմաստությունը, նշանակման հարաբերականությունը և այլն: Իսկ գործաբանական գործոն կարող է համարվել ազդեցությունը հասցեագրողի վրա, այսինքն՝ նրա

զգացմունքների, կամքի, մտածելակերպի և վարքի վրա: Վ. Դիքմանի կարծիքով լեզուն համարվում է իշխանության առավել արդյունավետ միջոցը: Լեզվի գերակշռող դերը կախված է ոչ այնքան լեզվի՝ որպես նկարագրման, որքան մեկնաբանման միջոցից: Կարևոր է, որ մեկնաբանումը լինի համոզիչ, իսկ այն կարող է լինել համոզիչ, եթե ներառում է տվյալ հասարակության փորձը (W. Dickmann 1969): Այստեղ է, որ կարևոր դեր են խաղում համատեքստային և իրադրային կադապարները՝ հանդես գալով որպես տվյալ հասարակության փորձի ընդհանրացված կադապարներ:

Տեղասպանությանը վերաբերող խոսույթները Ս. Չոլյանը դասակարգում է հետևյալ ձևով՝ առանձնացնելով երեք տեսակ.

1. ցեղասպանությունը հաստատող և ճանաչող խոսույթ
2. ցեղասպանությունը նենգափոխող կամ ժխտող խոսույթ
3. խուսանավող խոսույթ

(Ս. Չոլյան 2015:5).

Նաև շում է, որ խոսույթի այս երեք տեսակները ունեն իրենց բնորոշ կառուցվածքային և իմաստային յուրահատկությունները: *Հաստատող խոսույթը*, կարծես դարձել է մի տեսակ ինքնաբավ. այն ներկայանում է հայերեն կամ հայերենից թարգմանությունների միջոցով՝ միայն հայերի համար հասկանալի ձևով: Այսպիսի խոսույթը ելնում է չգիտակցված կանխենթադրույթից, որ *ցեղասպանության* իրադարձությունը բոլորի համար կարծես ակնհայտ է և մնում է դատապարտել միայն այն ժխտողներին: *Ժխտող խոսույթին* դեմ ուղղված հակաքարոզչությունը հիմնականում կատարվում է պատմական ոլորտում: Թուրքական կողմն այսօր օգտագործում է ցեղասպանության ժխտման խոսույթային փորձառությունների գրեթե ողջ զինանոցը՝ սկսած քրեական հետապնդումներից մինչև նուրբ վերաիմաստավորում և վերամեկնաբանում: Պատմական հակաքարոզչությունը անխուսափելիորեն նեղացնում է խնդիրը՝ որոշ առումով ապաքաղաքականացնելով երևույթը (Ս. Չոլյան 2015:6-7):

խուսանավել բառը Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» փոխաբերաբար ներկայանում է հետևյալ կերպ. «ճարպկորեն հարմարվելով հանգամանքերին, խույս տալով անախորժությունից ու դժվարություններից՝ վարպետորեն դուրս գալ դժվար կացությունից, ճարպիկ կերպով դժվարությանություններից խուսափել» (Է. Աղայան 1976:18):

խուսանավորող խոսույթի ցայտուն օրինակ են մեր հետազոտության կենտրոնում գտնվող ամերիկյան պաշտոնական հայտարարությունները: Դրանք ունեն երկու հասցեատեր. առաջինը ցեղասպանությունն ընդունող հայ համայնքն է, իսկ երկրորդը՝ ցեղասպանության ճանաչումից խուսափողները՝ ԱՄՆ պետությունը, միջազգային հանրությունը, Թուրքիան: 1915 թվականի իրադարձությունները նկարագրվում են անուղղակի և երկիմաստ լեզվական միջոցներով՝ խուսափելով հետագա քայլերը ենթադրող ձևակերպումներից և գնահատականներից, իրադարձության նկարագրման փոխարեն առկա են ընդհանուր գնահատականներ կամ հուզական արտահայտություններ: Այսպիսի խոսույթում բոլոր հասցեատերերը ցանկության դեպքում կարող են գտնել իրենց հարմար շահեկան կետեր. այն չի ժխտում ցեղասպանությունը, բայց և չի հաստատում այն: Նմանատիպ խոսույթի հեռահար նպատակն է խուսափել ճանաչումից՝ չժխտելով հանդերձ: Իսկ այս ռազմավարությունը, անշուշտ, խոչընդոտում է ճանաչման գործընթացին: Ֆ. Էմերենսն ու Պ. Յոուլթուսերը ռազմավարական նման խուսանավումը նկարագրում են որպես կողմանակիցների այն հնարավորությունների օգտագործման փորձ, որոնք հասանելի են դիպլեկտիկական իրավիճակի համար, և որոնք խոսույթն ուղղորդում են հռետորաբար՝ իրենց ձեռնտու միջոցներով (H. van Emmeren and P. Houtlosser 2001:151):

Ըստ Դ. Չարևսկու՝ ռազմավարական խուսանավումը շատ բնորոշ է հենց քաղաքական բանավիճմանը, որտեղ խոսողների հիմնական նպատակն է հասնել կառուցողական արդյունքի՝ համոզելով լսողներին: Դ. Չարևսկին առաջ է քաշում

ռազմավարական խուսանավման մի շարք միջոցներ հենց քաղաքական խոսույթի դիտակետից: Դրանք են՝

- թեմայի փոփոխություն,
- տվյալ ելույթի լսողների հայացքների փոփոխում կամ միջավայրի հարմարեցում,
- փաստարկի վերաձևակերպում(վերաֆրեյմավորում),
- կրճատ խորհրդանշանների կիրառում,
- լեզվական միջոցների և փոխաբերությունների դիալեկտիկական կիրառություն

(D. Zarefsky 2006:400):

Խուսանավող խոսույթի ուսումնասիրությունները դեռևս նորույթ են գիտության մեջ, ուստի սապետք է դառնա անհրաժեշտ ուսումնասիրության և համարժեք արձագանքի առարկա: Հարկ է բացահայտել անուղղակի բանավեճը՝ որպես խուսանավելու խոսույթային ռազմավարությունների բացահայտման և վերախմբավորման պահանջ՝ ենթադրյալն ու կանխավարկածները դարձնելով տեքստ և հստակեցնելով երկիմաստ արտահայտությունները: Ս. Չոլյանը նշում է, որ խուսանավող խոսույթը կարող է ավելի վտանգավոր լինել, քան ժխտողականը, քանի որ այն ոչ մի բան չի հերքում, ոչ էլ հաստատում՝ այդպիսով գերծմնալով ճշմարտացիացման կամ հերքման ընթացակարգերից (Ս. Չոլյան 2015:8):

Այսպիսով, կատարելով ԱՄՆ պաշտոնական հայտարարությունների ու նախագահական ուղերձների վերլուծություն մտային կադապարների հայեցակետից՝ կարող ենք ասել, որ քաղաքական խոսույթի վերլուծության ժամանակ միայն լեզվական գործոնները բավարար չեն, պետք է անպայման հաշվի առնվեն խոսույթի հիմք հանդիսացող մտային գործընթացները՝ կադապարները: Մտային և գաղափարախոսական կադապարների հիման վրա բացահայտվում են ԱՄՆ՝ 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների առանձնահատկությունները և ըստ այդմ՝ ԱՄՆ խուսանավող խոսույթի հիմնական բնութագրիչները:

**ԳԼՈՒԽ 3. 1915թ. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՄԵՐԻԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԴՐԱՅԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**3.1. Իրադարձությունների ներկայացման խորքային
կադապրը ամերիկյան քաղաքական խոսույթում**

Ինչպես տեսանք, իրադարձությունները հանդես են գալիս որպես քերականական օբյեկտներ՝ Լեզվական որոշակի միջոցներով ներկայացվելով տեքստում: Լեզվական տեքստը հանդես է գալիս որպես մակերեսային կառույց, որը փոխակերպվելով դառնում է ձևականացված իմաստատրամաբանական կադապր, որի շնորհիվ բացահայտվում է տվյալ մակերեսային կառույցի իմաստային արտապատկերը: Տեքստի ընկալումն էլ հետևաբար կատարվում է հենց խորքային կառույցի հիման վրա՝ հաշվի առնելով չարտահայտված ենթադրյալ և համատեքստային նշանակությունները:

Ամերիկյան քաղաքական խոսույթում 1915 թվականի իրադարձությունների խորքային արտապատկերումն ունի հետևյալ տեսքը՝

1. խոսքային իրադարձության նկարագրություն,
2. հիշատակվող իրադարձության նկարագրություն,
3. հղում նախորդ հայտարարություններին,
4. հայ-թուրքական հարաբերությունները,
5. Հայաստանի և հայ համայնքի ավանդը,
6. հայության գնահատականը:

Խոսքային իրադարձության նկարագրությունը, ինչպես արդեն նշեցինք նախորդ գլխում, հստակեցնում է այն պայմանները, որոնց ներքո հիշատակվում և գնահատվում է պատմական իրադարձությունը: Այն ներկայացնում է քաղաքական գործչի կամ խմբի գործողությունները տվյալ իրադարձության շրջանակներում՝ պարզաբանելով վերջինիս հետ կապված միջարք հանգամանքներ՝ համատեքստ, ժամանակ, հասցեատերեր, նպատակներ, դրդապատճառներ, սպասելիքներ, գնահատականներ և վերաբերմունք: Խոսքային իրադարձության մեջ տարբեր հայեցակետերից հստակեցվում ու զանազանվում են հայտարարության հեղինակների խոսքային գործողությունները:

Ինդիրն առավել բարդանում է արդեն հիշատակվող իրադարձության նկարագրության հարցում: Այստեղ **խուսաձակող խոսույթի** զանազան դրսևորումները ներկայանում են լեզվական ամենաբարդ ձևերի համակցմամբ՝ խորքային կառույցի բացահայտմամբ: ԱՄՆ սենատի տարբեր վճիռ-որոշումներում 1915 թվականի իրադարձությունների լեզվաբանական նկարագրությունը ենթադրում է տվյալ վճիռ-որոշման խոսույթում տեղ գտած պատմական իրադարձությունների իմաստաշարահյուսական և տրամաբանական արտապատկերում՝ հիմք ընդունելով այն տեսակետը, որ բարդ իրադարձությունները բաղկացած են արտաքին ու ներքին իրադարձություններից: Հիշենք, որ արտաքին իրադարձությունը կապվում էր միջոցի և

պատճառակալականության հետ, այսինքն՝ իմաստաբանական ազենտը իրականացնում է որոշակի գործողություն տրամաբանական CAUSE (պատճառել) պրեդիկատի արգումենտում, որի հետևանքային գործողությունը ներկայացվում է ներքին իրադարձության մեջ, և որի հետևանքով օբյեկտը ենթարկվում է իրավիճակի փոփոխության: Գործողությամբ ներկայացված ազենտի և պացիենտի հարաբերությունը ներկայանում է Ջ.Մքուլիի առաջարկած շարահյուսական կառուցվածքի ծառի միջոցով (G. McCawley, 1968:73):

1. The people of the United States are deeply impressed by **the deplorable conditions of insecurity, starvation and misery now prevalent in Armenia** (US Senate concurrent Resolution 12; (Միացյալ Նահանգների ժողովուրդը խորապես ցնցված է անապահովության, քաղցի և աղետի այն սարսափելի կացությամբ, որը հիմա առկա է Հայաստանում. *Սենատի 12-րդ համատեղ որոշում, փետրվարի 10, 1916 թվական*)

2. The Senate of foreign relations have clearly established the truth of the **reported massacres and other atrocities** from which the Armenian people have suffered...,) (U.S Senate resolution 359) (Արտաքին հարաբերությունների սենատը հստակորեն հիմնավորում է կոտորածների և այլ դաժանությունների ճշմարտությունը, որից հայ ժողովուրդը տառապել է. *Միացյալ Նահանգների Սենատի վճիռ 359, մայիսի 11, 1920 թվական*)

3. To observe such day as a remembrance for all the victims of genocide, especially the one and one-half million people of Armenian ancestry who were **the victims of the genocide perpetrated in Turkey between 1915 and 1923**. (Այս օրը համարել ցեղասպանության բոլոր զոհերի հիշատակի օր՝ հատկապես հիշատակելով 1,5 մլն. հայոց նախնիներին, որոնք զոհ դարձան թուրքիայի կողմից իրագործած ցեղասպանությունը 1915-1923 թթ.):

4. Affirmation of the United States Record on the Armenian Genocide Resolution - Calls upon the President: (1) to ensure that U.S. foreign policy reflects appropriate understanding and sensitivity concerning issues related to human rights, ethnic cleansing, and genocide documented in the U.S. record relating to the Armenian

Genocide and the consequences of the failure to realize a just resolution; and (2) in the President's annual message commemorating the Armenian Genocide to characterize the **systematic and deliberate annihilation of 1.5 million Armenians** as genocide, and to recall the proud history of U.S. intervention in opposition to the Armenian Genocide; ԱՄՆ՝ Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևի հաստատում - Նախագահին կոչ է արվում. 1) հավաստիանալ, որ ԱՄՆ արտաքին քաղաքականությունը ցուցաբերում է պառչած ըմբռնում և զգոնություն ԱՄՆ՝ Հայոց ցեղասպանության արձանագրությանը, որն արտացոլում է այնպիսի հիմնահարց, ինչպիսիք են մարդու իրավունքները, էթնիկ գտումները և ցեղասպանությունը, ինչպես նաև գիտակցել արդարացի ճանաչումի ձախողման հետևանքները. 2) Հայոց ցեղասպանության հիշատակման օրվա ամենամյա նախագահական ուղերձներում 1,5 մլն. հայերի համակարգային և դիտավորյալ ոչնչացումն անվանել ցեղասպանություն և հիշատակել Միացյալ Նահանգների միջամտության ակնավոր պատմությունը ընդդեմ Հայոց ցեղասպանության):

5. *Resolved by the Senate and House of Representatives of the United States of America in Congress assembled, that April 24, 1975 is hereby designated as "National day of Remembrance of Man's inhumanity to Man" and the President of the United States is authorized and requested to issue a proclamation calling upon the people of the United States to observe such day as a remembrance for all the victims of genocide, especially the one and one-half million people of Armenian ancestry who were **the victims of the genocide** perpetrated in Turkey between 1915 and 1923.* (Us House of Representatives Joint Resolution 148, April 9, 1975); Կոնգրեսի ժողովում Միացյալ Նահանգների Սենատը և Ներկայացուցիչների պալատը վճռում է, որ հետադարձ ապրիլի 24-ը համարվի որպես «Մարդու դեմ կատարած հանցագործության ազգային հիշատակի օր» և Միացյալ Նահանգների նախագահին լիազորվում և հանձնարարվում է հանդես գալ մի հայտարարությամբ, որը կոչ է անում Միացյալ Նահանգների ժողովրդին այս օրը համարել որպես ցեղասպանության բոլոր զոհերի հիշատակման օր, մասնավորապես մեկ ու կես միլիոն հայոց նախնիների ցեղասպանությունը՝


իրականացված Թուրքիայում 1915-1923թթ.. (Ներկայացուցիչների պալատի համատեղ որոշում 148, Ապրիլի 9, 1975):

ԱՄՆ սենատի վճիռ-որոշումներում ներկայացվում է մարդկանց սարսափելի կացությունը, և իրադարձությունների կառուցվածքային և իմաստաբանական վերլուծությունը հնարավորություն է ընձեռում խոսույթի խորքային կառուցվածքի ներկայացմանը: Վերը ուսումնասիրված նոր մոտեցումները թույլ են տալիս եզրակացնել, որ խոսույթը ներկայացնող տեքստերի կադապրումը հնարավորություն է տալիս արտապատկերելու իրադարձությունների խորքային իմաստատրամաբանական կառուցվածքը: Այստեղ նաև հարկ է անդրադառնալ իրավիճակային (համատեքստային) քերականությանը, որը ցույց է տալիս, թե ինչպես են մակերեսային կառույցները մեկնաբանվում արդեն խորքային կառույցում: Նախադասության իմաստը և նշանակությունը սահմանվում են համատեքստային հատուկ հատկանիշներով, ինչպիսին է տեղագրական կառուցվածքը (topological structure)՝ ասույթի գործողության ժամանակն ու վայրը, ինչպես նաև մասնակիցների մտային կառույցները՝ գիտելիք, նպատակ, վերաբերմունք և այլն: Համատեքստը՝ տվյալ իրավիճակը, ներկայացնում է հաղորդակցական իրավիճակի մտային նկարագրությունը, որում ներկայացվում են հաղորդակցության մասնակիցները (T. Dijk 2008:218):

Ըստ այսմ՝ ստորև ներկայացվում է վճիռների ու որոշումների իրադրային վերլուծությունը, որն օգնում է բացահայտելու ԱՄՆ խուսանավող խոսույթի առանձնահատկությունները՝ և եզվաբանական, մասնավորապես՝ իմաստաշարահյուսական վերլուծության տեսանկյունից:

Սենատի 12-րդ համատեղ որոշման մեջ ներկայացվում են իրադարձության հետևյալ արտապատկերումները.

[3.1.1]



Հայաստանում

Հիմա

տառապանք, անապահովություն

Հիմա (այդ ժամանակ) Հայաստանում առկա է տառապանք, անապահովություն.

[3.1.2]

1. Starvation is prevalent in Armenia now.

1.1 Starvation- to starve

Who becomes starved?

Իրադարձությունը ներկայացված է *քաղցել* (to starve) բայով: Ընդարձակ իրադրային կառույցում բայի իրադրային փոփոխակը սահմանվում է առանձին արգումենտային տրամաբանական չափորոշչի միջոցով և կոնկրետ տրամաբանական պրեդիկատով: Ունենք արգումենտային մի կառույց (կառուցվածքային մեկնաբանության մեջ այսուհետ՝ ARGSTR), որը կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ.

[3.1.3]

1. Starve

ARGSTR = ARG1 = State

ARG2 = place (ARG- Argument)

S-ARG1 = people


CAUSE պրեդիկատի առաջին արգումենտում ներկայացվում է *քաղցի* իրավիճակը, երկրորդ արգումենտում՝ վայրը, որտեղ առկա է այդ իրավիճակը, իսկ արդեն ստվերային (թաքնված) արգումենտում ունենում ենք *քաղցած ժողովուրդ՝ X CAUSE y(Armenian people) BECOME (starved) e*:

Իմաստաբանական ազենտը մեկ շարահյուսական մակարդակով իջնում է, այսինքն՝ գլխավոր անդամից դառնում է երկրորդական, և հանգում ենք իրավիճակային քերականության այն մտքին, որ ցուցչային արտահատությունները կարող են ներկայացնել ինչպես գործողության վայրն ու ժամանակը, այնպես էլ հասարակական դերերն ու հարաբերությունները: Այնուհետև ներկայացվում է անապահովության իրադարձությունը.

[3.1.4]

2. Insecurity is prevalent in Armenia now.

2.1 Insecurity -to endanger

Who endangers?  Who becomes endangered?

Ստեղծված անապահով իրավիճակը ներկայացրել ենք *վտանգել* (*to endanger*) բայով: Ընդարձակ իրադրային կառույցում վերը նշված բայի իրադրային փոփոխակները ևս ներկայացնում ենք տրամաբանական CAUSE (ՊԱՏՃԱՌ ԶԱՆԴԻՍԱՆԱԼ) և BECOME (ԴԱՌՆԱԼ) պրեդիկատներով՝ տարրաբաշխելով բայիմաստը ավելի խորքային բաղադրիչների: Արգումենտային կառույցում ստանում ենք հետևյալ պատկերը.

[3.1.5]

ARDSTR = ARG1 = State

ARG2 = place

S-ARG1 = people FORMAL

X CAUSES y /Armenian people/ BECOME insecure & endangered

Նույն իրադարձության մեջ ներկայացված է նաև թշվառության, տառապանքի իրավիճակը: *Չայ աստանում հիմա առկա է թշվառության/տառապանքի իրավիճակ:*

Ունենում ենք վերը նշված արգումենտային նույն կառուցվածքը, անուղղակի կերպով արտահայտված իրադարձության փաստը, իսկ *թշվառության* (*misery*) իրավիճակի արտահայտման համար օգտագործել ենք *to suffer* (*տառապել*) բայը: Նշենք, որ բառային միավորների՝ հոմանիշների և հականիշների ընտրությունը կատարել ենք՝ հիմք ընդունելով հիմնականում *Վեբսթերի Նոր բառարանը* և *Ռոժեի Գանձաբառարանը* /*Թեզաուրուս* / (*New Webster's Dictionary and Roget Thesaurus, 1994*), ինչպես նաև առցանց գանձաբառարանը (*Thesaurus.com*):

Եթե հետևենք Թ. Փարսոնսի՝ իրադարձությունների տրամաբանական դիտարկումներին, որտեղ իրադարձությունները նկարագրվում և արտապատկերվում են տրամաբանական ասույթային շաղկապներով և քվանտորներով, ապա սույն իրադարձությունը կարելի է ներկայացնել նաև ըստ տրամաբանական նշանների.

The deplorable conditions of insecurity, starvation and misery now prevalent in Armenia.

Յe) [Agent (Յe, now) & CAUSE (e,s) & [Յe') [insecurity, starvation, misery (e' e' e') & Theme (e' Armenia) & BECOME(e',s)]]]


Այս տեղ երևում են ներքին իրադարձության արգումենտի (e') բաղադրամասերը, CAUSE, BECOME պրեդիկատները և իրավիճակային արգումենտը (s):

Ստեղծվել է սարսափելի կացություն (terrible plight), որում հայ տնվել են մարդկային էակներ: Այս հատվածում, սակայն, CAUSE պրեդիկատի արգումենտում ներկայացված չէ գործողությունը կատարող, ինչպես նաև ժամանակի կամ տեղի պարագա, որը կկատարի ագենտի դեր: Արտաքին իրադարձության մեջ փաստորեն առկա չէ իրավիճակի փոփոխության պատճառ հանդիսացող արգումենտը, բայց ներքին իրադարձության մեջ *մարդկային էակները ենթարկվում են իրավիճակի փոփոխության՝ հայ տնվելով սարսափելի դրության մեջ:*

X CAUSES y/ great numbers of human beings/ BECOME (in) terrible plight

Իրադրային կաղապարում սույն պատմական իրադարձությունները ներկայանում են որպես կոտորածներ և այլ դաժանություններ ու անգթություններ, որոնց հետևանքով տառապել են հայերը.

[3.1.6]



Հայ ժողովուրդ

Այս տեղ իրադարձությունը ներկայացվում է *տառապել (to suffer)* բայով՝ ընդարձակ իրադրային կառույցում բայի իրադրային փոփոխակները ներկայացնելով համապատասխան

տրամաբանական պրեդիկատներով: Գոյություն ունի տառապանքի իրադարձություն, հայ ժողովուրդը տառապալից իրավիճակում է, սակայն այդ գործողության պատճառները, գործողության կատարողները և նույնիսկ վայրն ու ժամանակը չեն նշվում: Հայ ժողովուրդը տառապում է կոտորածի իրադարձություններից, որը ներկայանում է *կոտորել* (to massacre) բայով: Արգումենտային կառույցում ենթադրվում է, որ պետք է լինի ագենտ, որը իրականացնում է կոտորածը, մեխանիզմ, որի միջոցով իրականացվում են այդ կոտորածն ու վայրագությունները.

[3.1.7]

3.Massacre- to massacre

ARGSTR (NP₁, NP₂) ARG1=animate-individual 0

ARG2= physical object /Armenian people/

Խոսույթում առկա իրադրային կադապարի հիմքում ընկած արտաքին իրադարձությունը ներկայացված չէ, այսինքն՝ տվյալ իրադարձության մեջ նշված չէ իմաստաբանական ագենտը ո՛չ ժամանակի պարագայով և ո՛չ էլ ենթակայով, ուստի CAUSE պրեդիկատի արգումենտում առկա է գրոյական դեր, իսկ ներքին իրադարձության մեջ հայերը ենթարկվում են իրավիճակի փոփոխության՝ տառապելով կոտորածներից և տարբեր վայրագություններից: Փաստորեն գոյություն ունի մի իրադարձություն (∃e), այդ իրադարձության մեջ թեմայի դերում հանդես եկող հայ ժողովուրդը ենթարկվում է իրավիճակի փոփոխության՝ Theme (e', the Armenian people) & BECOME (e' massacred), իսկ ով կամ որտեղ և երբ է իրականացնում սույն կոտորածի իրադարձությունը անհայտ է՝

(∃e) [Agent(e, x) & CAUSE (e', s) & Theme (e', the Armenian people) & BECOME (e' s):


Եթե իրավիճակի փոփոխությունը տրամաբանորեն ներկայացնենք Δ /դելտա/ տարրով, ապա կստանանք հետևյալ բանաձևը՝ $\Delta = X / Y$, որտեղ՝ x-ը պատճառ հանդիսացող արգումենտն է, սույն խոսույթում հենց x է, այսինքն՝ անհայտ, y-ը ներքին

արտահայտությունն է, որում հայ ժողովուրդը ենթարկվում է իրավիճակի փոփոխության, որն էլ հենց ներկայացնում է դեկտան:

Հետևելով Ջ. Մքքուլիի՝ kill (սպանել) բայի մասին տրված նկարագրությանը՝ կոտորել իրադարձության ներքին իրադարձությունը ևս կարող ենք ներկայացնել շարահյուսական կառուցվածքային ծառի օրինակով.

Massacre - kill, murder, annihilate

[3.1.8]



Հաջորդիվ ներկայացվում է 1975 թվականին Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների պալատի 148-րդ համատեղ բանաձևի որոշումը այդ մասին, որ այդուհետ ապրիլի 24-ը ճանաչել «Մարդու նկատմամբ մարդու անմարդկայնության» (Մարդկության հանդեպ հանցագործության)՝ ազգային հիշատակման օր: Այս իրադարձության մեջ խոսվում է մարդու անմարդկային գործողությունների մասին, որտեղ առկա են արտաքին իրադարձությունը ներկայացնող ագենտը (գործողության պատճառը) և ներքին իրադարձության մեջ այդ գործողության՝ իրավիճակի փոփոխության ենթարկվելը:

3.Inhumanity- cruel action

Man's Inhumanity to man – the cruel behavior that people show to each other

Բառի իմաստը կանխենթադրում է, որ որոշակի գործողություններ են տեղի ունեցել, որոնք դաժան ու ոչ մարդկային են եղել:

[3.1.9]

ARGSTR = ARG1(NP) Animate Individual (man)

ARG2 Physical object (man')

S-ARG savagery, barbarity, brutality, evil, tyranny

Բառայ ին իմաստաբանական հասկացութայ ին կառույցում *անմարդկայ ին արարք* հասկացությ թը տարրաբաշխվում է մի քանի առանձին տրամաբանական պրեդիկատների` CAUSE, BECOME, IN, CONDITION; Man(NP₂) CAUSE NP₁(Man) BECOME IN (e', evil, brutal, tyranny) CONDITION

Հասկացութայ ին մակարդակում առկա է երեք արգումենտ` *Մարդ 1, Մարդ 2* և *Անմարդկայ ին իրավիճակ*:

Անապահովության իրադարձությունը իր մեջ ներառում է *բարբարոսություն, դաժանություն, վայրագություն* իրադարձությունները, որոնք նույնպես դասվում են տառապելու իրադարձությունների շարքին և կրկին ներկայանում *տառապել (to suffer)* բայով.

[3.1.10]

Insecurity- to suffer

ARGSTR ARGSTR (NP₁, NP₂) ARG1=animate-individual MAN

ARG2= physical object MAN

Նույն 148-րդ համատեղ բանաձևի մեջ ևս մի իրադարձություն է ներկայացվում` իր ենթաիրադարձություններով (...Armenian ancestry who succumbed to the genocide perpetrated in 1915 –1915 թվականին Հայոց նախնիները մահացել են 1915 թվականի ցեղասպանության հետևանքով):

Այստեղ առանձնացրել ենք երկու ենթաիրադարձություն.

1. Զեղասպանության իրադարձության ժամանակ եղել են զոհեր: Որոշակի գործողությունների հետևանքով մարդիկ զոհվել են: *Չոհեր* բառի իմաստը ևս կանխենթադրում է, որ եղել է սպանություն, կոտորած, որի հետևանքով մարդիկ զոհ են դարձել:

(3.1.11)

ARGSTR= ARG1 (NP)- Animate Individual 0(X)

ARG2 - Physical Object (victims, men')

S-ARG - killing, massacr, murder

Թաքնված արգումենտում ենթադրվում է, որ ինչ-որ միջոցով առաջացել են զոհեր, որը բացահայտ ներկայացված չէ, բայց

դիմելով բառի իմաստային վերլուծությանը կանխենթադրվում է, որ եղել է որևէ ֆիզիկական օբյեկտ, որին կոտորել ու սպանել են: Իրադարձությունը ներկայացված է անուղղակիորեն, բայց որի ուղղակի մեկնաբանումը հնարավոր է դառնում նաև բառային իմաստաբանության շրջանակներում:

2. Երկրորդ ենթաիրադարձությունն արդեն ներկայանում է որպես բարդ իրադարձություն, որը բաղկացած է արտաքին և ներքին իրադարձություններից: Արտաքին իրադարձության մեջ գործողությունն կատարողի տրամաբանական դեր իրականացնում է ժամանակի պարագան, իսկ ներքին իրադարձության մեջ *հայոց նախնիները* (տրամաբանական պացիենտ) ենթարկվում են իրավիճակի փոփոխության՝ մահանում են:

Բարդ իրադարձության մեջ արտաքին իրադարձությունը ներկայանում է ժամանակի պարագայով. 1915 թվականին ենլինում զոհեր և մահացություններ: Այսինքն՝ CAUSE պրեդիկատի արգումենտում 1915 թվականը հանդես է գալիս ագենտ և պատճառ հանդիսանում, որ ներքին իրադարձության մեջ *հայոց նախնիները* «դառնան զոհված ու մահացած»: Սույն քաղաքական խոսույթում, եթե նկատենք, կա երկու ենթաիրադարձություն՝ *ցեղասպանությանը զոհ գնացած բոլոր զոհեր* և *հայոց նախնիները*, ովքեր կոտորվել են: Մի ենթաիրադարձության մեջ *բոլոր զոհերը* նախադասության մեջ ներկայացված են որպես իրադարձության թեմա, ովքեր զոհ են գնացել ցեղասպանությանը, բայց կրկին առկա է զրոյական ագենտի դեր, այսինքն՝ արտաքին իրադարձությունը ներկայացված չէ, իսկ ներքին իրադարձության մեջ ցեղասպանության բոլոր զոհերն են: Երկրորդ ենթաիրադարձության մեջ արդեն շեշտվում է հենց հայերի հանգամանքը՝ *հայոց նախահայրերի՝ ցեղասպանությանը զոհ գնալու իրադարձությունը*: Այստեղ, ի տարբերություն առաջին ենթաիրադարձության, ագենտի դերում ներկայացված է ժամանակի պարագան՝ 1915 թվականը, և այդ ժամանակաշրջանում՝ CAUSE

արեդիկատի արգու մենտու մ իրավիճակի փոփոխություն և
ենթարկում հայոց նախնիների վիճակը:

ԵՆԹԱԴԱՆԱԴՈՒ ԹՅՈՒՆ 1

(..the people of the United States to observe such day as a day of remembrance for **all the victims of genocide**): Տեղի է ունեցել ցեղասպանություն և, ընդ որում այստեղ խոսքը ընդհանուր առմամբ ցեղասպանության մասին է: Թե ովքեր են իրականացրել այդ ցեղասպանությունը, ինչի հետևանքով են այդ բոլոր զոհերը սպանվել, ներկայացված է:

[3.1.12]

ԻՐԱԴՐԱՅԻՆ ԿԱՂԱՊԱՐ

Արտաքին իրադարձություն և / Ներքին իրադարձություն

CAUSE

↓
BECOME ՄՊԱՆՎԱԾ
բոլոր զոհերը


Փաստորեն ԱՄՆ պաշտոնական վճիռ-բանաձևերում և որոշումներում ցեղասպանության իրադարձությունները մեկնաբանվում են ամենատարբեր ենթաիրադարձություններով և իրարային կառույցներով, որոնցում իրավիճակի փոփոխությունը ներկայացվում է արգումենտային կառույցում ներկայացված բառային տարբեր միավորներով:

Ինչ վերաբերում է ԱՄՆ ամենամյա ապրիլ քսանչորսյան ուղերձներին, ապա դրանցում 1915 թվականի իրադարձությունները ևս ներկայացվում են նույն մահ, տառապանք, ցավ ու նմանատիպ իմաստներ արտահայտող բառային միավորներով: Այսպես, ԱՄՆ 28-րդ նախագահ **Վ. Վիլսոնը** 1918 թվականին հանդես եկավ 14 կետեր պարունակող խաղաղության ծրագրով՝ ի նպաստ ճնշված և իրավագուրկ ժողովուրդների: Այդ թվում նաև անդրադարձել է հայերին, Հայաստանին և Հայոց ցեղասպանությանը վերաբերող հարցերի: Ներկայացուցիչների պալատի 66-րդ համաժողովի երկրորդ նստաշրջանում՝ մայիսի 24-ին, 1920 թվական, ընթերցվում է Հայաստանի հանձնակատարությունը ստանձնած նախագահ **Վ. Վիլսոնի** ուղերձը, որտեղ քննարկվում են Հայաստանի սահմանների հարցը և Հայոց

ցեղասպանությանը (66th Congress, 2nd Session, House of Representatives, May 24, 1920):

Ենթաիրադարձություն 1 - Կոտորածների և ջարդերի հետևանքով հայ ժողովրդի տառապանքը: Whereas the testimony adduced at the hearings conducted by the subcommittee of the Senate Committee on Foreign Relations have clearly established the truth of the reported massacres and other atrocities from which the Armenian people have suffered (Նկատի ունենալով, որ Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեին կից ենթակոմիտեի վարած լսումների ընթացքում ներկայացված տեղեկությունները բացահայտորեն հաստատում են հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող կոտորածների և ջարդերի մասին ստացված տեղեկագրությունների ճշմարտացիությունը, որոնց հետևանքով հայ ժողովուրդը տառապել է):

Իրադարձությունը կադապարվում է հենց այդ կոտորածներով, դաժանություններով, որոնց հետևանքով հայ ժողովուրդը տառապել է: Այստեղ, սակայն, կրկին բացակայում է արտաքին իրադարձությունը, բայց ներքինում հայ ժողովուրդը տառապում է կոտորածներից ու ջարդերից:





Ներքին իրադարձության մեջ կարող ենք առանձնացնել ևս երկու ենթաիրադարձություն: Առաջին ենթաիրադարձությունը

Ներկայացնում է տառապանքի իրավիճակը, որը Ձ. Մքքուլի առաջարկած նկարագրության օրինակով մեկնաբանվում է BECOME NOT RELIEVED բառային կառույցով: Տառապել (to suffer) բայի համար որպես հականիշ ծառայել է *փրկվել* (to relieve) բայը, որն ընտրել ենք *Վերսթերի Նոր բառարանում և Ռոժեի գանձաբառարանում* ներկայացված հականիշների շարքից (New Webster's dictionary and Roget's Thesaurus, 1991:727): Երկրորդ ենթաիրադարձությունը ներկայացնում է կոտորածի իրադարձությունները և համապատասխանաբար՝ մահվան իրավիճակը, որը մեկնաբանել ենք Ձ. Մքքուլի՝ *to kill* բային տրված նկարագրության կրկնօրինակմամբ՝ BECOME NOT ALIVE.

Տառապանքի իրադարձություն

Կոտորածի իրադարձություն



Վերը ներկայացված բարդ իրադարձության մեջ արտաքին իրադարձությունը բացակայում է, փոխարենը ներքին իրադարձության մեջ հայ ժողովուրդը ենթարկվում է վիճակի փոփոխությունների՝ *տառապում է և կոտորվում*:



Ենթաիրադարձություն 2 - Անապահովության, սովի և տառապանքի պայմանները, որ առկա են Հայաստանում: Whereas the people of the United States are deeply impressed by the deplorable conditions of insecurity, starvation, and misery now prevalent in Armenia (Նկատի ունենալով, որ Միացյալ Նահանգների ժողովուրդը խորապես ցնցված է Հայաստանում տիրող անապահովության, սովի, տառապանքի սարսափելի պայմաններից): Ներկայացված են սովի, անապահովության, տառապանքի իրադարձություններ, որոնք առկա են Հայաստանում, բայց թե ինչ և ում գործողությունների հետևանքով է Հայաստանում տիրում նման իրավիճակ, կրկին ներկայացված չէ:

Ինչպես վերը նշված շատ օրինակներում, այստեղ ևս բարդ իրադարձության մեջ ներկայացված է արտաքին իրադարձությունը, իսկ ներքին իրադարձության մեջ առկա են մի շարք իրավիճակային փոփոխություններ, որոնց հետևանքով Հայաստանում ստեղծվել է *սովի և տառապանքի* իրավիճակ:


Ստորև ներկայացնենք այս իրադարձությունների կառուցվածքային նկարագրությունը՝ կառուցվածքային ծառի և հականիշային միավորների միջոցով: Հականիշային միավորների ընտրությունը նորից կատարվել է վերը նշված բառարանի և գանձաբառարանի տվյալների հիման վրա (New Webster's dictionary and Roget's Thesaurus, 1991: 671, 714, 727):

[3.1.16] ՍՈՎ (STARVATION)

[3.1.17] ԱՆԱՊԱՅՈՎՈՒԹՅՈՒՆ (INSECURITY)



[3.1.18] ՏԱՌԱՊԱՆՔ (SUFFERING)




Այս (3.1.16), (3.1.17) և (3.1.18) իրադրային կառույցներում CAUSE պրեդիկատի արգումենտում ինչպես նկատում ենք, բացակայում են պատճառ հանդիսացող արգումենտները՝ ագենտները, իսկ թեման՝ օբյեկտը ներկայացված է տեղի պարագայով: Ծարախյուսական կառուցվածքային ծառի տեսքով ներկայացնելիս իրադարձությունների մեկնաբանման համար ընտրել ենք համապատասխան բառային հականիշային իմաստները, որոնցով ներկայացվում են BECOME պրեդիկատի արգումենտում հադես եկող իրավիճակները:

Որոշակի պարզաբանումներ մտցնելու համար հարկ ենք համարել նաև անդրադառնալ թեմային առնչվող ակնավոր հուշագրություններին և տվյալ ժամանակահատվածում

փոխնախագահող ու մեծ ազդեցություն ունեցող Ջ. Ֆորդի ուղերձին: Այսպես, **3. Հոլվերի** հուշագրությունների ուսումնասիրությամբ պարզեցինք, որ իրադարձությունը ներկայացվում է բարդ իրադարձությամբ՝ արտաքին և ներքին հարաբերություններով: The association of Mount Ararat and Noah, the staunch Christians who were massacred periodically by the Mohammedan Turks, and the Sunday School collections over fifty years for alleviating their miseries—all cumulate to impress the name Armenia on the front of the American mind (Արարատ լեռան և Նոյի մասին պատկերացումները, մահմեդական թուրքերի կողմից կոտորված հավատացյալ քրիստոնյաները և շուրջ հիսուն տարվա Կիրակնօրյա դպրոցի հավաքածուները, որոնք մեղմում են ցավը, ընդհանրացվում են Հայաստան անունը ամերիկյան մտածելակերպի մեջ տպավորելու համար): Արտաքին իրադարձության CAUSE պրեդիկատի արգումենտում հստակորեն ներկայացված է պատճառ հանդիսացող արգումենտը՝ ագենտը, որի գործողությունների հետևանքով հավատացյալ քրիստոնյաները պարբերաբար կոտորվում են մահմեդական թուրքերի կողմից:


[3.1.19]



Այստեղ CAUSE և BECOME պրեդիկատների հետ կիրառության մեջ կարող ենք դնել Ռ. Ջեկենդոֆֆի կողմից առաջադրած DO պրեդիկատը, այսինքն՝ մահմեդական թուրքերը կատարում են կոտորածներ՝ պատճառ հանդիսանալով, որ հավատացյալ քրիստոնյաները մահանան:

Massacre-become not alive

[3.1.20]



ALIVE

y(Staunch Christians)

Ինչ վերաբերում է **Ջ. Ֆորդի** ուղերձին, ապա պետք է նշենք, որ այստեղ ցեղասպանությունը որակվում է որպես թուրքիայի կողմից կատարված ցեղասպանություն հայ ժողովրդի նկատմամբ: Այսինքն՝ հայ ժողովուրդը որպես իրադարձության օբյեկտ սպանվել է, և վերջինիս պատճառը թուրքական կողմն է:

Թուրքերը՝ **CAUSE** (ՊԱՏՃԱՌ ԵՆ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ), որ հայ
ժողովուրդը՝ **BECOME (ԴԱՌՆԱ)** կոտորված

Not alive (ոչ կենդանի)

Ջ. Ֆորդի ուղերձի հաջորդ հատվածում իրադրային կադապրի մեջ 1915 թվականի պատմական իրադարձությունը հանդես է գալիս որպես ագենտ, որի ժամանակ կոտորվել են հայերը,

[3.1.21] **Արտաքին** **Ներքին**

1915 թվական CAUSE Հայեր


Ուղերձը՝ նախագահի կողմից

BECOME կոտորված


Արտաքին իրադարձության մեջ 1915 թվական ժամանակի պարագան հանդես է գալիս որպես ագենտ, և այդ ժամանակաշրջանում հայերը կոտորվում են, այսինքն՝ իրադարձությունների իմաստաբանության լեզվով ասած՝ 1915 թվականը պատճառ է հանդիսանում, որ հայերը մահանան:

ԱՄՆ նախագահներից առաջինը թերևս **Ջ. Քարտերն** էր, որ սկսեց անդրադարձնալ ցեղասպանության թեմային Վ. Վիլսոնի՝ կոնգրեսում տապալված նախաձեռնությունից հետո: Նրա ուղերձի միայն մի նախադասությունն է հպանցիկ ներկայացնում ցեղասպանության իրադարձությունները. But it is generally not known in the world that in the years precedin 1916, there was a concerted effort made to eliminate all the Armenian people (Աշխարհը տեղյակ չէ, որ 1916 թվականի նախորդող տարիներին դա եղել է հայ ժողովրդին ոչնչացնելու կազմակերպված փորձ): Իրադարձությունը ներկայացվում է ոչնչացնել (to eliminate) բայով, որի համար ընտրել ենք to stay (մնալ)

բայը՝ հիմք ընդունելով *Վեբսթերի Նոր բառարանը և Ռոժեի գանձաբառարանը*:



Տվյալ բարդ իրադարձության մեջ արտաքին իրադարձությունը ներկայացնում են 1916 թվականի նախորդող տարիները, այսինքն՝ կրկին ագենտի դերում հանդես է գալիս ժամանակի պարագան, և այդ ժամանակահատվածը պատճառ է հանդիսանում, որ հայ ժողովուրդը ոչնչանա: Ներկայացնենք իրադարձությունը շարահյուսական կառուցվածքային ծառով.



Փաստորեն սույն իրադրային վերլուծության մեջ ևս CAUSE պրեդիկատի արգումենտում ժամանակի պարագան հանդես է գալիս որպես ագենտ, և հենց այդ ժամանակաշրջանը պատճառ է հանդիսանում, որ հայ ժողովուրդը ոչնչանա:

Եթե Ջ. Քարտերի ուղերձը անդրադառնում և մեջբերում է ցեղասպանության կոնվենցիայի երկրորդ հոդվածը կամ 1915-20 թթ. փաստաթղթային այլ նյութեր, ապա նախագահ Ռ. Ռեյգանի հայտարարության մեջ իրադարձությունները ներկայացվում են ընդհանրացված ենթաիրադարձություններով՝ միլիոնավոր մահեր, անմարդկային դիակիզումներ, գազային հարձակումներ. The millions of death, the gas chambers, the inhuman crematoria and the thousands of people who somehow survived with lifetime scars are all now part of the conscience of history. Like the genocide of the Armenian before it, and the Genocide of Cambodians which followed it-and like too many other such persecutions of two many other peoples-the lessons of the Holocaust

must never be forgotten (Միլիոնավոր զոհեր, գազի խցիկներ, անմարդկային դիակիզարաններ և հազարավոր մարդիկ, որ ինչ-որ կերպ գոյատևել են կյանքի խուժերում, այսօր պատմության խիղճն են: Ինչպես մինչ այդ հայերի ցեղասպանությունը, դրան հաջորդող կամբոջացիների ցեղասպանությունը և շատ այլ նմանատիպ հետապնդումները տարբեր ժողովուրդների նկատմամբ, այնպես էլ Հոլոքոստի դասերը երբեք չեն մոռացվի): Ելույթը ներկայացնող իրադրային կադապարը ամբողջական չէ: Այսինքն՝ CAUSE պրեդիկատն ու դրա արգումենտը բացակայում են. տվյալ իրադարձության մեջ չկա արտաքին՝ պատճառ հանդիսացող ներգործող իրադարձություն, իսկ ներքին իրադարձության մեջ թեման՝ մի դեպքում հայ ժողովուրդը, մյուսում՝ կամբոջացիները դառնում են ցեղասպանության զոհ: Այսինքն՝ ունենք պարզ իրադարձություն, որում ներկայացված չեն գործողություն և կատարողներն ու իրավիճակի փոփոխության պատճառ հանդիսացողները: Այնուամենայնիվ, Ռ. Ռեյգանի ուղերձում ընդգրկված են երեք իրադարձություններ՝ Հոլոքոստ, Հայոց ցեղասպանություն և կամբոջացիների ցեղասպանություն: Հատկանշական է, որ Ռ. Ռեյգանն օգտագործում է «ցեղասպանություն» եզրույթը, և ինչպես նշում է Ս. Չոլյանը, ցեղասպանության մասին առանց «ցեղասպանություն» բառի խոսույթին փոխարինելու է գալիս «ցեղասպանություն» բառը առանց ցեղասպանության խոսույթի (Ս. Չոլյան 2015:22):

Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշել ենք, խոսքային իրադարձության քննության մեջ Ռ. Ռեյգանի հայտարարությունը չունեցավ իր շարունակությունը: Արդեն 90-ականներին ներկայացվող **Ջ.Բուշի** ուղերձի իրադրային կադապարը ներկայացնում է 1988 թվականի երկրաշարժի դեպքերը և 1915-1923 թվականների սարսափելի կոտորածները. Those tragedies include the Earthquake of 1988, and most prominently, the terrible massacres suffered in 1915-1923 at the hands of the rulers of the Ottoman Empire (Այս բազմաթիվ ողբերգությունների շարքում են 1988 թվականի երկրաշարժը և հատկապես 1915-1923 թթ. սասրափելի

կոտորածները Օսմանյան կայսրության ղեկավարների կողմից): Նախագահ Ջ. Բուշը իր ելույթում խոսում է 1915-1923 թվականների սարսափելի կոտորածների և տառապանքների մասին, իսկ այդ իրադարձություններն իրականացվել են Օսմանյան կայսրության ղեկավարների կողմից: Այսինքն՝ արտաքին իրադարձության մեջ CAUSE պրեդիկատի արգումենտում ագենտի դերում հանդես են գալիս ժամանակի պարագան և Օսմանյան կայսրության ղեկավարները:

[3.1.24]

Արտաքին իրադարձություն **Ներքին իրադարձություն**


Օսմանյան կայսրության ղեկավարներ
տառապանք

Կոտորածներ

1915-1923թթ. -Ագենտ
հայեր

Օբյեկտ՝


[3.1.25] **Massacre-Become not alive / Suffer-Become not relieved**



Տառապանքի և *կոտորածի* իրադարձությունները շարահյուսորեն ներկայացնելուց զատ՝ մեկնաբանեցինք բառային մետափմաստաբանական միավորներով՝ օգտագործելով սկզբնապես *կոտորել* և *տառապել* բայերի համար ընտրված հականիշային միավորները՝ ըստ Վեբսթերի Նոր բառարանի և Ռոժեի գանձարարարանի:

Ի տարբերություն Ջ. Բուշի՝ Նախագահ Բ. Քլինթոնի ուղերձները շատ հպանցիկ են անդրադառնում 1915 թվականի իրադարձություններին (On this solemn day, I join Armenians from around the world in remembering the victims of the 1915 massacres in the Ottoman Empire (Յիշատակման այս հանդիսավոր օրը միանում եմ աշխարհի բոլոր հայերին՝ վկայակոչելով 1915 թվականի կոտորածների զոհերին Օսմանյան կայսրությունում): Կարող ենք ասել, որ բարդ իրադարձության մեջ զոհերը հանդես են գալիս որպես օբյեկտներ, որոնք կոտորվում են, իսկ CAUSE պրեդիկատի արգումենտում *Օսմանյան կայսրությունում* տեղի պարագան և *1915 թվական* ժամանակի պարագան հանդես են գալիս որպես ագենտներ և զոհերի կոտորման պատճառներ:

[3.1.26]



Այստեղ ունենում ենք *to massacre* (կոտորել) բայով ներկայացված վերոնշյալ օրինակների շարահյուսական և իմաստաբանական պատկերը: Նախագահի մնացած ելույթները համապատասխանաբար ներկայանում են նույն կերպ՝ փոխելով կոտորածի իրադարձության արտահայտման ագենտները: Այսպես օրինակ՝ մի տեղ ագենտը Օսմանյան կայսրության վերջին օրերն են, մյուս տեղում 1915-1920 թթ. ժամանակի պարագաները և այլն: Հաջորդիվ Նախագահ Բ. Քլինթոնը կոչ է անում կառուցել ու մի աշխարհ, որում նման իրադարձություններ պարզապես անհնարին կլինեն: Խոսելով իր և Միացյալ Նահանգների անունից՝ Նախագահ Քլինթոնը կարծես հանդես է գալիս որպես հաշտարար և փորձում դրական ազդեցություն ունենալ ունկնդիրների վրա: Սա ապացուցում է նրա ելույթի վերջին նախադասությունը. On behalf of

the American people, I extend my best wishes to all Armenians on this solemn day of remembrance (Ամերիկացիների անուսից լավագույն մաղթանքներս եմ հղում բոլոր հայերին՝ հիշատակման այս պահին):

Հաջորդ նախագահ կրտսեր **Ջ. Բուշի** նախագահական ուղերձները ևս աշխատում են վերոնշյալ իրադրային կաղապարով: Ըստ նախագահի ելույթների՝ 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ խոսույթը ներառում է բարդ իրադարձություններ, որոնք կազմված են և՛ արտաքին, և՛ ներքին իրադարձություններից: Ամենամյա ելույթներում ներկայացված իրադարձությունների մեջ CAUSE պրեդիկատի արգումենտում փաստորեն կրկին ժամանակի պարագան հանդես է գալիս ագենտի դերում և պատճառ հանդիսանում մի շարք իրավիճակային փոփոխությունների, ըստ որոնց՝ 1,5 միլիոն հայ օբյեկտը «դառնում է տարագրված, բնաջնջված, սպանված»: Այսպես՝ նախագահի խոսույթում առանձնացրել ենք հետևյալ իրադարձությունները.

[3.1.27]

e--- Forced exile e--- Annihilation e--- Mass killings e--- Murder	OBJECT 1,5 mln Armenians
CAUSE ----- final yeares of the Ottoman Empire	

Ներկայացնենք


իրադարձությունների իրադրային արտապատկերումը.


Forceful exile (բռնարտաքսում) - to deport (աքսորել, տարագրել)

Annihilation (բնաջնջում) - to annihilate (բնաջնջել)

[3.1.28]


Deport - X CAUSE Y BECOME NOT REMAINED





[3.1.29]

Annihilate- X CAUSE Y BECOME NOT REVIVED




Murder և *Killing* իրադարձությունները թերևս ներկայ անում են վերստին պատկերված "BECOME NOT ALIVE" բառային մետափմաստաբանական միավորով: Իսկ մնացած բառային միավորների ընտրությունը կատարվել է վերը նշված բառարանում ներկայացվող տվյալների հիման վրա:

Չնայած աշխարհի սպասելիքներին ու տված խոստումներին՝ ներկայիս նախագահ Բ. Օբամայի ուղերձները կրկնում են նախորդներին՝ ստանալով գրեթե նույն արտապատկերումը: Բոլոր ուղերձները ներկայացվում են մի բարդ իրադարձությամբ. 1.5 million Armenians were massacred or marched to their death in the final days of the Ottoman Empire (1,5 միլիոն հայեր դաժանորեն սպանվեցին և ենթարկվեցին մահվան երթերի): Each year, we pause to remember the 1.5 million Armenians who were subsequently massacred or marched to their death in the final days of the Ottoman Empire (Ամեն տարի այսօրը, մենք կանգ ենք առնում հիշատակել ու 1,5մլն. հայերին, որոնք կոտորվել կամ ենթարկվել են մահվան երթերի Օսմանյան կայսրության վերջին օրերին): Բարդ իրադարձության մեջ 1,5 մլն. հայեր իրադարձության արտաքին ու ներքին հարաբերությունների դրսևորման արդյունքում կոտորվում, ջարդվում և մահան երթերի են ենթարկվում: Արտաքին իրադարձության մեջ կրկին CAUSE արեդիկատի արգումենտում

Օսմանյան կայսրության վերջին օրերը ժամանակի պարագան հանդես է գալիս որպես ազենտն պատճառում 1,5 մլն. հայերի կոտորածներ ու ջարդեր:

[3.1.30]



Իսկ բառային իմաստաբանության և շարահյուսության տեսանկյունից այստեղ ևս ունենում ենք Ջ.Մքքոլիի առաջարկած մահացած (NOT ALIVE) կառույցի կրկնօրինակը: Փաստորեն իրադարձությունների ուսումնասիրությամբ զբաղվող իմաստաբանության լույսի ներքո լավագույնս բացահայտվում է բառային և շարահյուսական իմաստների հարաբերակցությունը: Ավելին՝ բառային յուրաքանչյուր դաս նկարագրվում է տրամաբանական կառույցի միջոցով: Մինչ իրադարձությունների խորքային վերլուծությունը հիմնականում ուսումնասիրվել է բառային միավորների իմաստի արտաքին կառուցվածքը, սակայն պարզվում է, որ շարահյուսական տարրերը ևս իրենց դերն ունեն բառի իմաստի նկարագրման գործում: Բայի արգումենտը մատնանշում է իրադարձությունը ներկայացնող անվանական կառույցները և դրանց շարահյուսական գործառնությունները: Նախադասության իմաստաբանական նկարագրությունը որպես ամբողջություն, պայմանավորված է շարահյուսական խորքային կառույցով, և այս կամ այն բառային միավորի իմաստը բացահայտվում է որոշակի շարահյուսական հարաբերությամբ:

3.2. Քննվող իրադարձության նկերի կառուցվածքը: Պատճառական բայերի իրադրային տարրաբաշխումը

Ինչպես պարզ է դառնում, իրադարձության նկերի կառուցվածքը բնութագրվում է տվյալ նախադասության մեջ տեղակայված արգումենտներով: Իրադրային կառույցը, հանդես գալով որպես բառային միավորի իմաստաբանական մակարդակներից մեկը, ընդունվում է խոսքային իմաստաբանության կառուցվածքային նկարագրության համար: Իրադրային կառույցի շրջանակներում ներկայացվում է բայերի տարրաբաշխումը բառային հասկացության կառույցի շրջանակներում: Բառային հասկացության կառույցի միջոցով տարբերակվում են պրեդիկատների իմաստի որոշակի մասերը: Յուրաքանչյուր բայ ներկայացնում է որոշակի իրադարձություն, որը կազմված է տարբեր ենթաիրադարձություններից և հնարավոր հետևանքային իրավիճակներից: Իրադարձության մասնակիցները գտնվում են կոնկրետ իմաստաբանական հարաբերության մեջ, իսկ այդ մասնակցային դերերը համապատասխանում են բայերի արգումենտներին:

1915 թվականի իրադարձությունները հիմնականում ներկայացվում է **սպանել** կարգի բայերով: Այդ բայերը հարում են **մահ** հասկացության: *Մահ*-ը պարզ իրավիճակային պրեդիկատ է, մինչդեռ դրանից սերած բայերը անցողական պրեդիկատներ են, որոնց կատարած գործողության հետևանքով ստեղծվում է մահվան իրավիճակ:

Իրադարձությունների կարգայնացման տեսանկյունից պատճառական հարաբերությունները շատ կարևոր դեր են կատարում վերլուծության գործընթացում: Պատճառական հարաբերություններում կարևոր է պատճառական փոխակարգությանը, այսինքն՝ այն, որ պատճառական բայերը ունենում են անցողական և անանցողական կիրառություն: Անանցողական կիրառության ժամանակ այս բայերը ցույց են տալիս իրավիճակի փոփոխությունը օբյեկտի հանդիսացող արգումենտում:

Մեր ուսումնասիրության կենտրոնում գտնվող ու առաջարկվող նոր տեսության շրջանակներում մեծ կարևորություն է ներկայացնում իրադրային տարաբաշխում հասկացությունը, որը մասնագիտական գրականության մեջ հաճախ հանդիպում է *բառային տարաբաշխում* (lexical decomposition) անվամբ: Թեմայի շրջանակներում հետազոտությունն անցկացնող մասնագետները գտնում են, որ բառային տարաբաշխման գաղափարը կարևոր է մասնավորապես շարահյուսական ձևի և իմաստի հարաբերության բացահայտման համար (R. Jackendoff 1990; D. Dowty 1979; J. Pustejovsky 2000): Ռ. Ջեկենդոֆֆը նշում է, որ բառիմաստը պետք է ունենա ներքին կառուցվածք և եզրվի ստեղծարար կիրառության շնորհիվ (R. Jackendoff 1990:120):

Իրադրային տարաբաշխման ժամանակ պատճառականության մեջ հիմնականում ներկայացվում են երկու իրադարձություններ՝ CAUSE (ՊԱՏՃԱՌ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ) և BECOME (ԴԱՌՆԱԼ), ինչպես նաև հետևանքային իրավիճակը՝ որպես իրադրային երրորդ բաղադրիչ: Արգումենտային կառույցում ներկայացվում են գործողությունն կատարող ագենտը, ՊԱՏՃԱՌ հանդիսացող պրեդիկատը և բարձրագույն իրադարձությունը՝ e (event-իրադարձություն):

Ըստ այսմ՝ մեր հետազոտության շրջանակներում կարող ենք առանձնացնել գործողությունն ցույց տվող և իրավիճակային իրադարձություններ՝ այդպիսով ներկայացնելով իրադարձությունների արգումենտային կառուցվածքը:

ԱՄՆ քաղաքական խոսույթում ցեղասպանության իրադարձությունները հիմնականում արծարծվում են բուն հիշատակվող իրադարձության շրջանակներում: Հիշատակվող իրադարձության շրջանակներում 1915 թվականի իրադարձությունները ներկայացվում են հիմնականում երեք բառային հասկացությամբ՝ կառույցների շրջանակներում:

1. Առաջին կառույցում քննվում է *մահ* հասկացությամբ, համապատասխանաբար մահվան իրադարձությունը՝ իրեն թափիրադարձություններով:


[3.2.1]

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ	ԲԱՅ	ԹԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՆ
	Ըստ Վեբսթերի Նոր Բառարանի և Ռոժեի գանձաբառարանի (New Webster's Dictionary and Roget's Thesarus)	Ըստ Յ. Ասմանգուլյան, Մ. Յովհաննիսյան <i>Անգլերեն-Հայերեն բառարան-ի</i>
Massacre	to massacre	կոտորել, ջարդել, սպանել
Murder	to murder	սպանել, սպանություն կատարել
Killing	to kill	սպանել
Exile	to exile	արտաքսել, աքսորել
Annihilation	to annihilate	ոչնչացնել, բնաջնջել

Այս բայերը տարրաբաշխվում են մի կառույցի, որը կազմված է այնպիսի պրեդիկատներից, ինչպիսիք են ACT, DO, CAUSE, BECOME պրեդիկատները: DO-ն կիրառում ենք գործողությունների համար, CAUSE-ը՝ նպատակին հասած գործողությունների համար, իսկ BECOME-ը՝ կատարված ավարտված գործողությունների համար: Ներկայացված երեք տեսակի պրեդիկատները ակնհայտ է, որ չեն կարող լինել համաժամանակյա, ուստի նրանց միջև եղած հարաբերությունը պետք է լինի պատճառական: Այսպես՝ հիմք ընդունելով Ջ. Մքոլիի կողմից առաջարկվող *kill-սպանել* բայի նկարագրությունը՝ կարող ենք ասել, որ «որևէ X սպանել է որևէ Y-ի ճշմարիտ է միայն այն դեպքում, եթե X-ը կատարել է դժան գործողություն, և որի արդյունքում Y-ը մահացել է: X-ի կատարած գործողությունը պետք է որ պատճառային գործոնը եղած լինի, հակառակ դեպքում Y-ը չէր մահանա»: Ըստ այսմ՝ պրեդիկատային տարրաբաշխման սկզբունքից ելնելով՝ կարող ենք ասել, որ եթե որևէ բայով ներկայացված գործողությունը պատճառ է հանդիսանում պացիենտի իրավիճակի փոփոխության, ապա այն

Ներկայացվում է իմաստաբանական երկու պրեդիկատներով՝ ACT և BECOME, որոնցից առաջինը նշանակվում է գործողության իրադարձությամբ, իսկ մյուսը՝ իրավիճակի փոփոխության իրադարձությամբ: CAUSE պրեդիկատն իր մեջ պարունակում է իմաստաբանական երկու արգումենտներ, որոնք համապատասխանում են շարահյուսական ենթակային և խնդրին, և որոնք մակերեսային կառույցում ընկալվում են որպես բայի շարահյուսական արգումենտներ: Նմանատիպ հարաբերության ժամանակ $[[X \text{ ACT}] \text{ CAUSE } [Y \text{ BECOME } <\text{dead}>]]$ կառույցում *սպանել*, *կոտորել*, *ջարդել*, *ոչնչացնել* բայերի ագենտը ACT պրեդիկատի ագենտն է, մինչդեռ Y-ը, որը ենթարկվում է իրավիճակի փոփոխության, արդեն *սպանել* բայի պացիենտը չէ, այլ անանցողական *մահ* իրադարձության համար ագենտն է:

ԱՄՆ պաշտոնական հայտարարություններում և ուղերձներում ցեղասպանության հետևանքով ստեղծված մահվան իրավիճակը հիմնականում առկայացվում է *kill*, *massacre*, *murder*, *annihilate* բայերով ներկայացված իրադարձություններով.



Ն4. [3.2.2]

2. Երկրորդ կառույցում քննվում է *տառապանք* հասկացությամբ՝ իրենից սերած իրադարձություններով՝ *անապահովություն*, *դժբախտություն*, *սով*: Տառապանքը մարդկային դժբախտության արդյունքն է, որը գուցե գործվում է ինքնության կորստի, ցավի,

աղետի ու վտանգի հետ: Վեբսթերի Նոր բառարանում և Ռոժեի գանձաբառարանում այն հենց այդպես էլ մեկնաբանվում է՝ *misery, distress, evil, tyranny* և այլն:

[3.2.3]


ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ	ԲԱՅ	ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ
	Ըստ <i>Վեբսթեր Նոր Բառարանի</i> և <i>Ռոժեի գանձաբառարանի</i> (New Webster's Dictionary and Roget's Thesaurus)	Ըստ Զ. Ասմանգուլյան, Մ. Յովհաննիսյան <i>Անգլերեն-Հայերեն բառարան-ի</i>
Insecurity	to endanger	վտանգի ենթարկել, վտանգել
Starvation	to starve to feed-fed (ant.)	քաղցել, քաղցի մատնվել կերակրել, սնել
Misery	to suffer to relieve (be relieved)	տառապել տանջվել փրկել, ազատվել
Inhumanity	cruel action Savagery barbarity, brutality, evil, tyranny	անմարդկային արարք դաժանություն, բարբարոսություն, վայրագություն, չարիք, բռնակալություն

Բառային հասկացողության կառույցի շրջանակներում բայի բառային փոխակերպումը ներկայացվում է հակադրությամբ, որը համապատասխանաբար ներկայացրել ենք BECOME (դառնալ) պրեդիկատով: Տառապանքի իրադարձությունները մեկնաբանվում են հետևյալ իրադրային հասկացողության կառույցներով:

[3.2.4]

ԻՐԱԴՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑ գործողություն վիճակ
 [x Act & CAUSE-y] BECOME [NOT SAFE (Armenians)]
 ԲԱՌԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՅՑ BECOME [NOT FED (Armenians)]
 [NOT RELIEVED (Armenians)]

ԱՄՆ պաշտոնական հայտարարություններում և ուղերձներում ցեղասպանության հետևանքով ստեղծված տառապանքի իրավիճակը հիմնականում առկայացվում է *endanger, starve, suffer* բայերով ներկայացված իրադարձություններով:



Նկ. [3.2.5]

3. Բառային հասկացության երրորդ կառույցը ներկայացնում է *տեղափոխություն* հասկացություն: Այս հասկացությից հիմնականում սերում են բռնի տեղափոխության իրադարձություններ, մասնավորապես՝ *տեղահանություն* (displace), *բռնարտաքսում* (forced exile) և *տարագրություն* (deportation): Ցեղասպանության համատեքստում տեղափոխությունը իրականանում է մարդու կամքից անկախ իր բնակավայրից բռնի ուժով հեռացմամբ, բռնարտաքսմամբ ու վտարմամբ:


[3.2.6]

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ	ԲԱՅ	ԹԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՆ
	Ըստ <i>Վերաբերի Նոր Բառարանի և Ռոժեի գանձաբառարանի</i> (New Webster's Dictionary and Roget's Thesaurus)	Ըստ Հ. Ասմանգոուլյան, Մ.Յոզիանսիսյան <i>Անգլերեն-Հայերեն բառարանի</i>
Displacement	to displace	տեղահանել
Deportation	to deport to stay (ant)	Տարագրել, վտարել մնալ (հակասիշային միավոր)
Forced Exile	to exile	արտաքսել բռնի կերպով, աքսորել

[3.2.7]

ԻՐԱԴՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑ գործողություններն իրավիճակ
 [x ACT & CAUSE-y] BECOME [NOT STAYED (1,5 mln Armenians)
 ԲԱՌԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՅՑ

Ինչ վերաբերում է տեղափոխությանը, այն ԱՄՆ պաշտոնական հայտարարություններում և ուղերձներում հիմնականում առկա ացվում է *displace*, *deport*, *exile* բայերով ներկայացված իրադարձություններով.



ՆԿ. [3.2.8]

Այս ափսոսվ, հաշվի առնելով վերոբերյալ տեսություններն ու վերլուծությունները՝ կարող ենք ասել, որ 1915 թվականի իրադարձությունները ներկայացնող բառիմաստների և դրանցից բխող իրադրային կառույցների վերլուծության ընթացքում կիրառեցինք վերլուծական միջարք մոտեցումներ՝ բայերի ենթաիրադրային հատկանիշները վերհանելու համար: Իսկ մետատրամաբանական այնպիսի գաղափարները, ինչպիսիք են ACT, DO, CAUSE և BECOME պրեդիկատները, ներկայացնում է բառային միավորին գույքորդվող հայեցակերպային դասերի ուրվագծումը: 1915 թվականի իրադարձությունները ներկայացնող բառիմաստների ուսումնասիրության լույսի ներքո և բառային (իրադրային) տարաբաշխման արդյունքում պարզ ու որոշակի են դառնում խուսանավող խոսույթի առանձնահատկությունները: ԱՄՆ պաշտոնական հայտարարություններում ցեղասպանությունը ներկայացնող բայերը տարաբաշխվում են բառային այնպիսի միավորների, որոնց ներկայացնող իրադրային կառույցներում արտապատկերված են *կորստի, մահվան, տառապանքի, արտաքսման* իրավիճակներ արտահայտող միավորներ՝ իրենց ենթաիրադարձություներով (ՆԿ.3.2.2; ՆԿ.3.2.5; ՆԿ. 3.2.8), սակայն ստեղծված իրավիճակի պատասխանատուները միանշանակ չեն նշվում: Փոխարենը նշվում են պատմական թվականներ և այլևս գոյություն չունեցող կայսրություն. ենթադրվում է, որ խոսողն իրազեկված է պատմության անցքերին, և որ հիշյալ թվականներին, հիշյալ կայսրության ժամանակաշրջանում տեղի է ունեցել որոշակի իրադարձություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր կատարված համալիր ուսումնասիրությամբ հայ լեզվաբանական հետազոտությունների շարքին դասվեց նոր վերլուծական մեթոդաբանություն, որի շնորհիվ հնարավոր է իրադարձությունների լեզվական արտապատկերումը դիտարկել որպես քերականական երևույթ: Մեր ուսումնասիրության առարկան իրադարձության՝ որպես քերականական ուսումնասիրության օբյեկտի գաղափարն էր լեզվաբանական տեսություններում և դրա արտապատկերումը քաղաքական խոսույթում: Կատարելով քաղաքական խոսույթի՝ մասնավորապես ԱՄՆ՝ Չայոց ցեղասպանության վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների իրադրային վերլուծություն՝ մեր աշխատության շրջանակներում ուսումնասիրեցինք իրադարձության՝ որպես քերականական օբյեկտի վերաբերյալ մի շարք տեսություններ: Ըստ այդմ՝ ստացված տեսական արդյունքների հիման վրա հնարավոր դարձավ կատարել մեր ուսումնասիրության առարկա հանդիսացող պաշտոնական հայտարարությունների վերլուծությունը: Ելնելով ատենախոսության բովանդակությունից՝ նպատակահարմար ենք գտել ատենախոսության եզրակացությունները ներկայացնել երկու մասով՝ համապատասխան վերնագրերով: Առաջին մասը վերաբերում է քերականական, շարահյուսական և իմաստաբանական փոխազդեցության տեսական հարցերին, իրադարձության՝ որպես քերականական օբյեկտի մեկնաբանություններին ու նկարագրություններին, իսկ երկրորդ մասում ստացված արդյունքների հիման վրա գործնականորեն ներկայացվում են այն եղանակները, որոնցով համապատասխան քաղաքական խոսույթի հիման վրա հնարավոր է դառնում վեր հանել ճանաչողական կաղապարները՝ դրանցով ներկայացնելով ԱՄՆ պաշտոնական դիրքորոշումը Չայոց ցեղասպանության ճանաչման համատեքստում:

Մաս 1. Իրադարձությունների իմաստաբանությունը և դրա քերականական արտապատկերման միջոցները

1.1. Ատենախոսություն և կենտրոնում գտնվող իմաստաշարահյուսական նոր տեսությունը, որը մասնագիտական գրականության մեջ հանդես է գալիս *իրադարձությունների իմաստաբանություն* (event semantics) անվամբ, լայն հնարավորություններ է ընձեռում հատկապես բայիմաստի վերլուծությունների համար: Սույն տեսությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում լեզվաբանական այնպիսի ուղղությունների զարգացման համար, ինչպիսիք են իմաստաբանական շարահյուսությունը, իմաստաբանությունը, բառագիտությունը և խոսույթի վերլուծությունը: Մեր կողմից ուսումնասիրվող նյութում հնարավորություն է ընձեռվում բնութագրելու իրադարձության ներկայացման եղանակները, որն էլ իր հերթին կարող է բնորոշել խոսույթի տիպաբանական տեսակները:

1.2. Մեր կողմից ուսումնասիրվող նյութը՝ դիտարկված նման տեսանկյունից, հնարավոր է բնութագրել որպես խոսանավող խոսույթ: Ուսումնասիրելով իրադարձությունների կառուցվածքը և իրադրային կառույցները՝ նկատում ենք, որ տարբեր լեզվաբաններ տարբեր կերպ են մեկնաբանում իրադարձությունների կառուցվածքը: Գրեթե բոլոր լեզվաբանները իրադրային կառույցների ներկայացման համար օգտագործում են միևնույն կառույցի օժանդակ արեդիկատներ (CAUSE-ՊԱՏՃԱՌ ԶԱՆԴԻՍԱՆԱԼ, BECOME-ԴԱՌՆԱԼ): Ռ. Ջեքենդոֆը օգտագործում է վերլուծական մի շարք կառույցներ, որոնց հիմքում զարգացնում է իր *Հասկացական նկարագրությունը*, որում ներկայացնում է մի շարք կանոնավոր արեդիկատներ՝ CAUSE, GO, TO, ON, և կանոնավոր տարրեր՝ Thing, Path, Event: Ի համեմատություն՝ Ջ. Պոլստեյովսկին ընդունում է ավելի լայն իրադրային կառուցվածք, որը ներկայացնում է

իրադարձություններն ու դրանց բաղկացուցիչ մասերը: Նա օգտագործում է ACT, CAUSE, BECOME իմաստաբանական պրեդիկատները:

1.3.Տեսական հետազոտությունները զարգացնում են այն գաղափարը, որ բայ իմաստը վերլուծվում է իրադարձությունների նկարագրության միջոցով: Բարդ իրադարձությունների ուսումնասիրությամբ կարելի է եզրակացնել, որ դրանք կազմված են արտաքին և ներքին իրադարձություններից: Արտաքին իրադարձությունը կապվում է պատճառականության և ներգործության հետ, իսկ ներքինը՝ իրավիճակի փոփոխության կամ նպատակաուղղվածության հետ: Ուսումնասիրելով իրադարձությունների մեկնաբանման և արտապատկերման միջոցների վերաբերյալ հեղինակային տարբեր մոտեցումները՝ կարող ենք ասել, որ բայ իմաստի ներքին կառուցվածքը և փուլերը հնարավոր է դառնում քննել և բացահայտել հենց իրադարձությունների իմաստաբանության շրջանակներում՝ արտապատկերման տարբեր միջոցներով:

1.4.Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է նաև արգումենտային կառույցի գաղափարը և վերջինիս՝ քերականական խորքային հետազոտությունների դաշտ ներմուծելու կարևորությունը: Ըստ մեր վերլուծության արդյունքների՝ արգումենտային կառույցի ամբողջական ներկայացումը հանդես է գալիս որպես ստորոգման ըմբռնման բանալի, այսինքն՝ այն, թե ինչպես են իրադարձություններն ու իրավիճակները մեկնաբանվում լեզվական արտահայտությամբ: Բացահայտելու համար, թե ինչպես է արգումենտային կառույցն արտահայտվում տվյալ լեզվում, վերլուծվում է բայերի դրսևորման ձևը, երբ վերջիններս արտահայտում են իրավիճակներ և իրադարձություններ: Փաստորեն բայական պրեդիկատները պարունակում են իրադրային և արգումենտային կառույցներ: Իրադրային կառույցը կազմված է մի շարք ենթաիրադարձություններից, և տվյալ իրադարձությունն ու ժամանակային հարաբերությունները տեղայնացվում են այդ

Ենթաիրադարձություններին մեջ, իսկ արգումենտային կառույցը ներկայացնում է արեդիկատի արգումենտների բառային տեղեկատվությունը իմաստաբանական և շարահյուսական հատկանիշների հետ:

1.5. Ուսումնասիրելով հայ եցակերպային դասերը ներկայացնող տարբեր մոտեցումները՝ պարզում ենք, որ բայերը տարրաբաշխվում են մի կառույցի, որը կազմված է այնպիսի արեդիկատներից, ինչպիսիք են DO, CAUSE, BECOME արեդիկատները: DO-ն կիրառում ենք *գործողություններին* համար, CAUSE-ը՝ *նպատակին հասած գործողություններին* համար, իսկ BECOME-ը՝ *կատարված-ավարտված գործողություններին* համար: Իրադարձությունների տեսությունը ընդլայնելիս այն անխուսափելիորեն գուգակցվում է հայ եցակերպային դասերի հետ: Ուստի, հաշվի առնելով տարբեր հայ եցակերպային հիմնադրույթներ, իրադարձությունները կարող ենք սահմանել որպես գործողությունների հաջողականություն, որոնք տեղի են ունեցել և ունենում իրական աշխարհում:

Մաս 2. Իրադարձությունների իմաստաշարահյուսական արտապատկերումը ԱՄՆ պաշտոնական հայ տարարություններում և ԱՄՆ քաղաքական խոսույթի կադապրումը

2.1. Իրադարձություններին լեզվաբանական ուսումնասիրությունամբ պարզում ենք, որ մեր շուրջը կատարվող դեպքերը, պատմության դրվագները իրադարձություններին պարզագույն օրինակներ են, և որ այսօր լեզվաբանական տեսություններում իրադարձությունները կարող են դիտվել որպես քերականության ուսումնասիրության օբյեկտներ: Ստացված տեսական արդյունքերի հիման վրա մեր կողմից առանձնացրինք խոսքային և բարդ իրադարձությունների գոյությունը, որը արտացոլվեց մեր վերլուծության մեջ: Խոսքային իրադարձությունները վերաբերում են համատեքստային այն պայմաններին, որոնցում կադապրվում են 1915 թվականի իրադարձությունները: Այստեղ արժևորվում է քաղաքական խոսույթի կադապրումը ճանաչողական

կաղապարների հայեցակետից: Կարող ենք ասել, որ անհատական վերաբերմունքը, կարծիքները, համոզմունքները, գաղափարախոսական վերաբերմունքը մեծ ազդեցություն ունեն իրադրային կաղապարների ձևավորման հարցում: Թե՛ սենատի վճիռ-որոշումներում, թե՛ նախագահական ուղերձներում ԱՄՆ քաղաքական գործիչները 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ արտահայտում են իրենց վերաբերմունքը, կարծիքները, համոզմունքները. այս ամենը պարփակվում է ԱՄՆ պետական դիրքորոշումն արտահայտող գաղափարախոսությամբ, որը հստակ երևում է նախագահների կիրառած բառապաշարային միավորներից (we, us, our, the USA):

2.2. Ցեղասպանության ճանաչման համատեքստում հնարավոր է տարանջատել խոսույթի երեք տեսակներ՝ հաստատող, ժխտող և խուսանավող՝ հիմք ընդունելով Ս. Չոլյանի առաջարկած սահմանումները: Խուսանավող խոսույթի ուսումնասիրությունները դեռևս նորույթ են գիտության մեջ, ուստի կարող ենք եզրակացնել, որ այն պետք է դառնա հատուկ ուսումնասիրության և արձագանքի առարկա: Մեր վերլուծությունն իր հերթին թույլ է տալիս զարգացնել ու ավելացնել խուսանավող խոսույթի արտահայտման այլ հատկանիշներ: Նկատի ունենալով վերոնշյալը՝ կարելի է եզրակացնել, որ ԱՄՆ գաղափարախոսությամբ ամբողջացված խոսույթը խուսանավող խոսույթի ցայտուն օրինակն է, իսկ այս խուսանավելու մեխանիզմներն արտահայտվում են իրադրային կաղապարների վերլուծության շնորհիվ՝ իրադարձությունների իմաստաբանության շրջանակներում, թեմատիկ դերերի և պարագայական կապակցությունների ներկայացմամբ: Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվում է, որ քաղաքական խոսույթում խուսանավման ռազմավարությունները կիրառվում են ճարտասանական և դիալեկտիկական նպատակներին հասնելու համար: Խուսանավող խոսույթը հիմնականում արտահայտվում է թեմայի փոփոխությամբ և թեմայից շեղմամբ, իմաստային անորոշությամբ, վերացական նշանակմամբ ու բազմի-

մաստո՞ւթ չամբ: Համատեքստային կադապարում ներկայացվում է խոսքային իրադարձությունը՝ խոսողը (հեղինակը), վայրը, ժամանակը, խոսողի վերաբերմունքը տվյալ իրադարձության վերաբերյալ, իսկ իրադրային կադապարում փաստորեն բուն իրադարձությունը (ցեղասպանությունը) և դրա պատճառները ներկայացված չեն: Կատարելով ԱՄՆ պաշտոնական հայտարարությունների և նախագահական ուղերձների վերլուծություն ճանաչողական կադապարների հայեցակետից՝ կարծում ենք, որ քաղաքական խոսույթի վերլուծության ժամանակ միայն Լեզվական գործոնները բավարար չեն, պետք է անպայման հաշվի առնվեն խոսույթի հիմք հանդիսացող ճանաչողական գործընթացները՝ կադապարները: Հենց այս կադապարների վրա է, որ բացահայտվում է ԱՄՆ՝ 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների առանձնահատկությունները և ըստ այդմ՝ ԱՄՆ խուսանավող խոսույթի հիմնական բնութագրիչները: Լեզվական տեքստը հանդես է գալիս որպես մակերեսային կառույց, որը փոխակերպվելով դառնում է ձևականացված իմաստատրամաբանական կադապար, որի շնորհիվ բացահայտվում է տվյալ մակերեսային կառույցի պատկերը: Այս տեքստի ընկալումը կատարվում է խորքային կառույցի հիման վրա՝ հաշվի առնելով չարտահայտված՝ ենթադրյալ ու համատեքստային նշանակությունները:

2.3. Ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ԱՄՆ սենատի վճիռ-որոշումներում, հուշագրություններում ու նախագահական ուղերձներում ներկայացված փաստերը՝ մարդկանց սարսափելի կացությունը, 1915 թվականին տեղի ունեցած իրադարձությունների դաժանությունն ու անգթություններն արտահայտող գործողությունները իրենց արտապատկերումն են ստանում և կարող են բացահայտ (explicit) ձևով նկարագրվել իրադարձությունների կառուցվածքային և իմաստաբանական վերլուծությամբ: Այս առումով կիրառում ենք նաև իրավիճակային քերականության որոշ սկզբունքներ, որոնք

բացահայտում են, թե ինչպես են մակերեսային կառույցները մեկնաբանվում խորքային կառույցով: Նախադասության իմաստը և նշանակությունը սահմանվում են համատեքստային այնպիսի հատուկ հատկանիշով, ինչպիսին է տեղագրական կառուցվածքը՝ ասույթի գործողության ժամանակն ու վայրը:

2.4. Ցեղասպանության հասկացությունն իր լայն ու նեղ իմաստներով ներառում է իրադարձությունների մի շարք, որոնք ներկայացվում են *մահ*, *տառապանք* և *տեղափոխություն* հասկացություններով: Վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վերոնշյալ հասկացությունները ներկայացվում են բառային տարբեր միավորներով, որոնք համապատասխանաբար ներկայացնում են *մահվան*, *տառապանքի* ու *բռնի տեղափոխության* իրադարձությունները՝ իրենց ենթաիրադարձություններով: Ըստ մեր վերլուծության՝ տվյալ իրադարձությունները ներկայացնող բայերը տարրաբաշխվում են մի կառույցի, որը կազմված է այնպիսի արեդիկատներից, ինչպիսիք են DO, CAUSE, BECOME արեդիկատները: Բայական տարրաբաշխումը ներկայացվում է շարահյուսական կառուցվածքային ծառով՝ 2. Մքքուլիի առաջարկած հականիշության սկզբունքով՝ ՄԱՐ (BECOME NOT ALIVE), ՏԱՌԱՊԱՆՔ (BECOME NOT SAFE/RELIEVED), ՏԵՂԱՇԱՆՈՒԹՅՈՒՆ (BECOME NOT STAYED): Իմաստաշարահյուսական հարաբերությունների տեսակետից այստեղ ուրվագծվում են իմաստի և վերաբերելիի հարաբերությունները: Իմաստը բառային հարաբերությունն է, այսինքն՝ *սպանել*, *կոտորել*, *տեղահանել* բառույթները, որոնցում սպանության, կոտորածի ու տեղափոխության գործընթացները մատնանշող իմույթները թույլ են տալիս որոշել այն ասույթների իմաստաբանական կառուցվածքները, որոնցում առկա են այդ բառույթները, իսկ վերաբերելիության հարաբերությունը սահմանվում է համատեքստում:

2.5. Հաշվի առնելով վերոբերյալ տեսություններն ու մեր կատարած վերլուծությունները՝ կարող ենք բացահայտել, որ ԱՄՆ պաշտոնական խոսույթում 1915 թվականի իրադարձությունները

Ներկայացնող բայ իմաստները վերլուծվում և ներկայացվում են իրադրային կառույցներով: ԱՄՆ քաղաքական խոսույթում 1915 թվականի իրադարձությունները ներկայացնող բառիմաստների ուսումնասիրության ներքո և բառային (իրադրային) տարրաբաշխման արդյունքում թերևս հնարավոր է դառնում վերհանել խուսանավող խոսույթի առանձնահատկությունները:

2.6. Ուսումնասիրելով և կիրառելով լեզվաբանական և իմաստաբանական նորագույն մեթոդները՝ փորձեցինք վերհանել ԱՄՆ՝ 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական խոսույթի իմաստաբանական կառուցվածքը և ճանաչողական-խոսույթային քաղաքական նպատակները: Հիմնական խնդիրն էր վերհանել ԱՄՆ պաշտոնական հայտարարություններում ներկայացված համատեքստային և իրադրային կադապարները, որոնք ներկայացնում են 1915 թվականի անագորույն իրադարձությունները, և վերլուծել այդ իրադարձությունները իմաստաշարահյուսորեն՝ նշանակելով այն բառային միավորները, որոնք արտահայտում են այդ իրադարձությունները: ԱՄՆ քաղաքական պաշտոնական խոսույթի իմաստային առանձնահատկությունների վերլուծության հիման վրա բացահայտ արտահայտում է ստանում ԱՄՆ-ի պետական դիրքորոշումը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բրուտյան Գ., Տրամաբանության դասընթաց, 4-րդ Երևան, Երևանի պետական համալսարան, 4-րդ վերամշ. և լր. հարտ.-Երևանի համլաս. Հրատ. 1987, - 539 էջ
2. Չոլյան Ս., ԱՄՆ Նախագահները հայոց ցեղասպանության մասին (խուսանավող դիսկուրսի իմաստագործաբանական վերլուծություն), Երևան, «Լիմուշ» հրատ., 2015, – 172 էջ
3. Փոլադյան Մ., Բայական համակարգը և կերպի խնդիրը, Լրաբեր հասարակական գիտությունների, № 1, 2006, - 228-237 էջ

4. Демьянков В.З. Доминирующие лингвистические теории в конце XX века // Язык и наука конца 20 века. – М.: Институт языкознания РАН, 1995, -239-320 стр.
5. Демьянков В.З. Семантические роли и образы языка..// Язык о языке; сб. ст. / М.; Языки русской культуры, 2001, -193-270 стр.
6. Дэвидсон Д. Материальное сознание // Аналитическая философия: Избранные тексты. М.: Изд-во МГУ, 1993, -131-144 стр.
7. Дэвидсон Д. Об идее концептуальной схемы // Аналитическая философия: Избранные тексты. М.: Изд-во МГУ, 1993, - 144-159 стр.
8. Дейк Т.А. ван. и Кинч В. Стратегии понимания связного текста // Новое в зарубежной лингвистике. Вып. 23. -М.: 1989, -153-211 стр.
9. Золян С. «Нагорный Карабах: проблема и конфликт». Издательство «Лингва», 2001, -110 стр.
10. Albrecht J. & O' Brien E. Updating a mental model: Maintaining both local and global coherence.// Journal of experimental psychology; Learning, Memory and Cognition, 1993.-1061-1070 pp.
11. Atkinson J.M and Heritage J. (eds), *Structures of social action: studies in conversation analysis*. Cambridge: Cambridge University Press and Editions de la Maison des Sciences de l'Homme, 1984, -446pp.
12. Bach C. Tense and Aspect in English // Journal of Literary Semantics. An International Review. Gantterhery: Univ. of Kent Press, 1986, - 82-97 pp.
13. Boden D. and Zimmernnan H., *Talk and Social studies in Ethnomethodology and Coversation Analysis*, Cambridge: Polity press 1991, -305 pp.
14. Carter W.R. How to Change Your Mind // Canadian Journal of Philosophy. № 19 , 1989, -1-14 pp.
15. Comrie B. Aspect. An Introduction to the Study of Verbal Aspect and Related Problems. Cambridge: Cambridge Univ. Press, 1976. -142 pp.
16. Chierchia J.. Individual Level predicates as iherent genres// in Carlson G. & Pellelier F., (eds), Chocago, University of Chicago press, 1995. – 176 -223 pp.
17. Chierchia J. Meaning and grammar./ London: Cambridge University Press, 2000, - 498pp.
18. Chomsky, N. Syntactic structures Текст./N. Chomsky.The Hague:Monton, 1957.-100 pp.
19. Davidson D. The Individuation of Events // Essays in Honor of C.G. Hempel. Dordrecht, 1969, - 216 -234 pp.

20. Davidson D. Causal relations // The journal of philosophy, Vol. 64, 1967, -34-55 pp.
21. Davidson D. The Logical Form of Action Sentences. // N. Rescher (ed.) The Logic of Decision and Action. Pittsburgh: University of Pittsburgh Press. 1967, -81-120pp.
22. Dijk T.A. Some aspects of text grammar: A Study in Theoretical Linguistics and Poetics. The Hague; Paris: Mouton, 1972. – 375 pp.
23. Dijk T.A., van. Text and Context ,The Hague.: Mouton, 1975.-184 pp.
24. Dijk T.A., van . Racism and the press, Routledge, *Critical studies in racism and migration* New Fetter Lane, London, 1991, - 270 pp.
25. Dijk T. A., van. Cognitive Context models and discourse/ In M Stamenow(ed.) Language structure, *Discourse and the Access to Consciousness*, Amsterdam, Benjamins, 1997, - 189-226 pp.
26. Dijk T.A., van. Social and Structural Dimensions of Discourse T.A. van Dijk.. Amsterdam: Lee, 1997, - 254 pp.
27. Dijk, T.A. van. The study of discourse Text. / T.A. van Dijk // Discourse as structure and process. V.I. London; New Delhi, 1997. -3-24 pp.
28. Dijk T.A., van . Towards a Theory of Context and Experience models in discourse processing. In H. van Oostendrop and S. Goldman (eds.), *The construction of mental models during reading* , Hillsdale NJ Erlbaum, 1999, - 123-148 pp.
29. Dijk T. A. van., On the analysis of parliamentary debates on immigration. In M. Reisigl & R. Wodak (Eds.), The semiotics of racism. Approaches to critical discourse analysis.Vienna: Passagen Verlag, 2000,-85-103 pp.
30. Dijk T. A. van., "Parliamentary debates". In R. Wodak and T.A. van Dijk (eds.) , *Racism at the Top Parliamentary Discourses on Ethnic Issues in six European States*, Klagenfurt, Austria; Drava Verlag , 2000,- 190-225 pp.
31. Dijk T.van Critical Discourse Analysis // Handbook of Discourse Analysis. Oxford, 2001,-352-371pp.
32. Dijk T. van Discourse, context and cognition // Discourse Studies. № 8 (1). 2006.- 159-177 pp.
33. Dowty, D. R. Thematic Proto-Roles and argument selection Текст. / D. R. Dowty // Language. Ohio: Ohio State University Press, №67. 1991,- 547-619 pp.
34. Dowty D. R. Word Meaning and Montague Grammar. The Semantics of Verbs and Times in Generative Semantics and in Montague's PTQ. Dordrecht: Reidel, 1979.- 415pp.

35. Ehrlich M. F., & Tardieu H., Modeles mentaux, modeles de situation et comprehension de textes [Mental models, situation models and text comprehension]. In M.F. Ehrlich, H. Tardies & M. Cavazza (Eds.) 1993, - 47-79pp.
36. Emeren F.H. van, Grootendorst R. Argumentation, Communication and Fallacies. Argumentation, Communication, and Fallacies: A Pragma-dialectical Perspective. Erlbaum, Hillside, NJ, 2001. – 256 pp.
37. Eemeren, F.H. van. The study of argumentation as normative pragmatics // Text / Ed. by T.A. van Dijk. Vol. 10, № 1 / 2, 1990.- 37 – 44 pp.
38. Fillmore Ch. Topics in Lexical Semantics / Ch. Fillmore. Indiana: Indiana University Press, 1977.– 136 pp.
39. Fillmore, Ch. The case for case / Ch. Fillmore // Bach E.& Harms R.T. (eds.) Universals in Linguistic Theory. New York: Holt, Rinehart & Winston, 1968, - 1-88 pp.
40. Fiske J., Introduction to communication/ London and New York; Routledge, 1990, - 288p
41. Fiske J., Media matters: race and gender in US poliotics. Minneapolis:University of Minnesota Press, 1996, - 304 pp.
42. Graber D. Political languages // Handbook of political communication / D. Graber. Beverly Hills; London, 1981.- 195-224 pp.
43. Givön T. From discourse to syntax: grammar as a processing strategy // Discourse and syntax = Syntax and semantics, 12. Ed. T. Givön New York, San Francisco, London: Academic Press, 1979a,- 81-112 pp.
44. Grimshaw, J. Argument structure . / J. Grimshaw. Cambridge: MIT Press, 1990.-202 pp.
45. Grimshaw J. Semantics Structure and Semantics Content in Lexical Representation// in J.Grimshaw Words and Structure , CSLI Publications, Stanford CA, 2005, -75-89 pp.
46. Gruber, J. Lexical structures in syntax and semantics / J. Gruber. — Amsterdam: North Holland, 1976 -420 pp.
47. Gumperz, J.J.Discourse Strategies. Cambridge:Cambridge University Press,1982.-225 pp.
48. Habermas J. The Theory of Communicative Action. Reason and the Rationalization of Society. Cambridge: Polity Press, 1995.- 465 pp.
49. Hale K.L., Keyser J. On argument structure and the lexical representation of syntactic relations // The view from building 20. Eds. K. Hale, J. Keyser Cambridge, MA: MIT Press, 1993,- 53-109 pp.

50. Higginbotham J., On Semantics //Linguistic Inquiry 19/ 1985,- 547-593pp.
51. Higginbotham J., On events in Linguistic Semantic Text. / J.Higginbotham // Speaking of Events. Ed. By J. Higginbotham, F. Pianesi and A.Varzi. New York: Oxford University Press, 2000, - 49-79pp.
52. Jackendoff R.S. Semantic Interpretation in Generative Grammar. Cambridge (Mass). - London, MIT Massachusetts Inst, of technology., 1972,- 400 pp.
53. Jackendoff R. Semantics and Cognition/ R. Jackendoff Springfield: Massachusetts Institute of Technology Press, 1983. - 283pp.
54. Jackendoff R. Conceptual Semantics /R. Jackendoff. Indiana: Indiana University Press, 1988,-283pp.
55. Jackendoff R. The Status of Thematic Relations in Linguistic Theory // Linguistic Inquiry.-Vol. 18.-№ 3.-P. 1987, -369-411 pp.
56. Jackendoff R. Languages of the Mind. Essays on Mental Representation / R Jackendoff. Massachusetts: The MIT Press, 1996, - 200 pp.
57. Jackendoff R., Semantic Structures // Massachusetts Institute of Technology Press 1990 , - 336 pp.
58. Kim J. Events and their descriptions: some considerations // Essays in honor of C.G. Hempel / Ed. N. Rescher. Dordrecht: D. Reidel, 1969. -198-215 pp.
59. Labov W., Speech actions and reactions in personal narrative. In Deborah Tannen, ed., *Analyzing Discourse: Text and Talk, Georgetown University Round Table*; Washington DC, Georgetown University press, 1985,-219-247 pp.
60. Levin, B., *Lexical Semantics in Review*, Lexicon Project Working Papers 1, Center for Cognitive Science, MIT, Cambridge, MA. (Ed.)1985,-1-62 pp..
61. Montague R. Universal grammar R. Montague// B.Thomason. Formal philosophy. Selected papers of Richard Montague. New Haven: Yale Univ. Press, 1974,-222-246pp.
62. Montague R. Formal philosophy. Selected papers R. Montague/ ed. By R.H.Thomson. New Haven: Brendan Co. Publ., 1974.-213 pp.
63. McCawley J.D. 1968 The Role of Semantics in a Grammar // Universals in Linguistic Theory. N. Y., 1968 - 125-170 pp.
64. McCawley J.D. The Role of Semantics in Grammar // Universals in Linguistic Theory. London, 1972.- 125-169 pp.
65. Parsons T. The progressive in English: events, states and processes // Linguistics and Philosophy. Dordrecht etc., Vol. 12. - №2. -1989- 213-241 pp.

66. Parsons, Terence. Events in the Semantics of English: a Study in Subatomic Semantics /Terence Parsons. Cambridge (Mass); London: MIT press, Cop.,1999,-333 pp.
67. Polanyi L.,A formal model of discourse structure , Journal of Pragmatics 12: Stanford CA 1988, - 601-638 pp.
68. Pustejovsky J. The Generative Lexicon / Pustejovsky J. Cambridge (Mass.); London: The MIT Press, 1995 - 298 pp.
69. Pustejovsky J. Type Coercion and Lexical Selection // Studies in Linguistics and Philosophy Series. Vol. 49. Semantics and the Lexicon / Ed. by J. Pustejovsky. - Dordrecht, Boston & London: Kluwer Academic Publishers, 1993,-.73-94 pp.
70. Pustejovsky J. The Syntax of Event Structure // Cognition. Vol. 41 -Nos. 1-3, 1991,-47-81pp.
71. Rappaport H., Malka, and Levin B., Building verb meanings. In The Projection of Arguments: Lexical and Compositional Factors, eds. Miriam Butt, and Wilhelm Geuder, Stanford: CSLI, 1998, - 97-134 pp.
72. Ryle G. Philosophical Papers. L., Harmondsworth 1971.- 342 pp.
73. Ryle, G. The concept of mind Text. / G. Ryle. Chicago: University of Chicago Press, 2002. - 348 pp.
74. Smith, C. S. The range of aspectual situation types: derived categories and a bounding paradox. // Bertinetto, Bianchi, Dahl & Squartini (eds.) vol. 2, 1995,-105-124pp.
75. Tenny C. Aspectual Roles and the Syntax-Semantic Interface. -Dordrecht, 1994. 245 p.
76. Tenny C. and Pustejovsky J., (eds) Events as grammatical objects// The converging perspectives of Lexical Semantics and syntax; Stanford, Center for the study of language and information, 2000 – 510 pp.
77. Verkuyl, H.J. A« Theory of Aspectuality: the'Interaction between. Temporal and; Atemporal Structure // Cambridge Studies in Linguistics 64. Cambridge: Cambridge University.Press., 1993, -393 pp.
78. Verkuyl, H.J. Aspectual-composition: Surveying the5 ingredients // Perspectives^ on< aspect / A. van Hout, H. de Swart, H: Verkuyl (eds.). Dordrecht: Springer, 2005,-19-39 pp.
79. Vendler, Z. Verbs and Times Текст. // Linguistics in philosophy / Z. Vend-ler. New York: Ithaca, 1967,-97-121pp.

80. Vendler Z. Linguistics in Philosophy.- Ithaca. N.Y.: Cornwell Univ. Press, 1967,-300 pp.
81. Zarefsky D. Debate and Democracy // Controversia: an international journal of debate and democratic renewal. Vol.1. Issue2. 2002,-79-82 pp.
82. Zarefsky D. Strategic Maneuvering through Persuasive Definitions: Implications for Dialectic and Rhetoric/Argumentation, Vol, 20, Issue 4, Springer 2006,-399-416 pp.

Օգտագործված բառարանների ցանկ

1. ԺԾՍՅ 3/4. Դ, ԶԻՇ ՆՅՍ»Ի»ՅՇ լճՅԻԻՅՅ լճՅԻՅՅ, ՏԾՍՅԵԻՅՅ՝ ՆԻՅԻԻՅՅ՝ԻճճճՅՍճճՅՅ, ՕԻ ԻՅՅ, 1976:
2. Ասմանգուլյան Հ.Ա. և Հովհաննիսյան Մ.Ի. *Անգլերեն-հայերեն բառարան, ՏԾՍՅԵԻՅՅ՝ ՆԻՅԻԻՅՅ՝ԻճճճՅՍճճՅՅ, ՕԻ ԻՅՅ, 1984*
3. **Պետրոսյան Յ.Զ., Գալստյան Ս.Ա., Ղարաբյոկյան Թ.Ա.** *Լեզվաբանական բառարան*, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1975
4. *Oxford English Reference Dictionary*. Revised Second Edition. Oxford University Press. USA. 2002
5. *Oxford Dictionary of Synonyms and Antonyms*. Oxford University Press. USA. 2007
6. *New Webster's Dictionary – Roget's Thesaurus*, Paradise Press, Abridged Edition, 1994
7. *Webster's New World Thesaurus*, Revised Edition, Simon and Schuster, Inc. New York 1985

Էլեկտրոնային ռեսուրսներ

1. Discourse in Society, Research in Critical Discourse studies-Website Teun A. van Dijk- <http://www.discourses.org/download/articles> (10.12.2015)
2. Macmillan Dictionary- <http://www.macmillandictionary.com> (21.12.2014)
3. Merriam-Webster's Dictionary- <http://www.merriam-webster.com> (05. 09.2015)
4. Stanford Encyclopedia of Philosophy - <http://plato.stanford.edu/> (09.04.2014)
5. Thesaurus.com - <http://www.thesaurus.com> (07. 04. 2015) (08. 01. 2016)

Վերլուծված կայքերի ցանկ

1. **Armenian National Committee of America (ANCA)**- US Presidential Statements http://www.anca.org/genocideresource/president_statements.php (09. 10. 2013)
2. **Armenian National Institute (ANI)**-Armenian Genocide Resolutions, Laws and Declarations http://www.armenian-genocide.org/current_category.7/affirmation_list.html (15. 11. 2014)

3. The Armenian Genocide Museum-Institute-Recognition;States

<http://www.genocide-museum.am/eng/states.php> (04.02.2015)

ՀԱՎԵԼ ՎԱՅ

Վերլ ու ծված նյ ու թերի ցանկ

U.S. Senate Concurrent Resolution 12

February 9, 1916

"Whereas the people of the United States are deeply impressed by the deplorable conditions of insecurity, starvation, and misery now prevalent in Armenia

64th Congress

1st Session

S. CON. RES. 12 [Senate Concurrent Resolution 12]

[Report No. 837.]

In the House of Representatives.

February 10, 1916.

Referred to the Committee on Foreign Affairs.

June 21, 1916

Referred to the House Calendar and ordered to be printed.

Concurrent Resolution

Whereas in countries now engaged in war there are several hundreds of thousands of Armenians in need of food, clothing, and shelter; and

Whereas great numbers of them have been required by conditions growing out of the state of war to leave their homes and their property, deprived of an opportunity to make provision for their most elementary wants, causing starvation, disease, and untold suffering; and

Whereas the people of the United States of America have learned with sorrow of this terrible plight of great numbers of human beings and have most generously responded to the cry for help whenever such an appeal has reached them: Therefore be it ;Resolved by the Senate (the House of Representatives concurring), That, in view of the misery, wretchedness, and hardships which these people are suffering, the President of the United States be respectfully asked to designate a day on which the citizens of this country may give expression to their sympathy by contributing to the funds now being raised for the relief of the Armenians in the belligerent countries .

Passed the Senate February 9, 1916.

U.S. House of Representatives Joint Resolution 148

April 9, 1975

94th Congress

1st Session

H.J. Resolution 148 [House Joint Resolution 148]

In the Senate of the United States

April 9, 1975

Read twice and referred to the Committee on the Judiciary

Joint Resolution

To designate April 24, 1975, as "National Day of Remembrance of Man's Inhumanity to Man".

Resolved by the Senate and House of Representatives of the United States of America in Congress assembled, That April 24, 1975, is hereby designated as "National Day of Remembrance of Man's Inhumanity to Man", and the President of the United States is authorized and requested to issue a proclamation calling upon the people of the United States to observe such day as a day of remembrance for all the victims of genocide, especially those of Armenian ancestry who succumbed to the genocide perpetrated in 1915, and in whose memory this date is commemorated by all Armenians and their friends throughout the world.

Passed the House of Representatives April 8, 1975.

U.S. Senate Resolution 359

May 11, 1920

66th Congress

2nd Session

S. RES. 359. [Senate Resolution 359]

In the Senate of the United States.

May 11, 1920

Mr. Harding, from the Committee on Foreign Relations, reported the following resolution; which was ordered to be placed on the calendar.

May 11 (calendar day, May 13), 1920. Considered and agreed to.

Resolution

Whereas the testimony adduced at the hearings conducted by the subcommittee of the Senate Committee on Foreign Relations have clearly established the truth of the reported massacres and other atrocities from which the Armenian people have suffered; and Whereas the people of the United States are deeply impressed by the deplorable conditions of insecurity, starvation, and misery now prevalent in Armenia; and Whereas the independence of the Republic of Armenia has been duly recognized by the supreme council of the peace conference and by the Government of the United States of America: Therefore be it Resolved, That a sincere congratulations of the Senate of the United States are hereby extended to the people of Armenia on the recognition of the independence of the Republic of Armenia, without prejudice respecting the territorial boundaries involved; and be it further Resolved, That the Senate of the United States hereby expresses the hope that stable government, proper protection of individual liberties and rights, and the full realization of nationalistic aspirations may soon be attained by the Armenian people; and be it further Resolved, That in order to afford necessary protection

for the lives and property of citizens of the United States at the port of Batum and along the line of the railroad leading to Baku, the President is hereby requested, if not incompatible with the public interest, to cause a United States warship and a force of marines to be dispatched to such port with instructions to such marines to disembark and to protect American lives and property.

May 11 (calendar day, May 13), 1920. — Considered and agreed to.

PRESIDENTIAL STATEMENTS

Roosevelt, Theodore (1901-09)

Notes from a compilation of the messages and papers of the presidents 1789-1897, 10 vols., by James D. Richardson (U.S. Representative from Tennessee), ed., (Washington, D.C.: U.S. Government Printing Office, published by AUTHORITY OF congress, 1897, 1899; Washington, D.C.: Bureau of National Literature and Art, 1789-1902, 11 vols., 1907, 1910).

On Tuesday, December 6, 1904, in his Fourth Annual Message to Congress, President Theodore Roosevelt stated:

It is inevitable that such a nation [as ours] should desire eagerly to give expression to its horror on an occasion like that of the massacre of the Jews in Kishenev, or when it witnesses such systematic and long-extended cruelty and oppression as the cruelty and oppression of which the Armenians have been the victims, and which have won for them the indignant pity of the civilized world.

On Monday, May 24, 1920, in a special message to Congress asking permission to assume the mandate for Armenia under the League of Nations, the President Woodrow Wilson stated:

Testimony adduced at the hearings conducted by the sub-committee of the Senate Committee on Foreign Relations has clearly established the truth of the reported massacres and other atrocities from which the Armenian people have suffered... The people of the United States are deeply impressed by the deplorable conditions of insecurity, starvation and misery now prevalent in Armenia... I received and read this document with great interest and with genuine gratification, not only because it embodied my own convictions and feelings with regard to Armenia and its people, but also, and more particularly, because it seemed to me the voice of the Armenian people expressing their genuine convictions and deep Christian sympathies and intimating the line of duty which seemed to them to lie clearly before us...

In response to the invitation of the council at San Remo, I urgently advise and request that the Congress grant the Executive power to accept for the United States a mandate over Armenia. I make this suggestion in the earnest belief that it will be the wish of the people of the United States that this should be done. The sympathy with Armenia has proceeded from no single portion of our people, but has come with extraordinary spontaneity and sincerity from the whole free-will offerings Armenia has practically been saved at the most critical juncture of its existence. At their

